ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

ՀՅԴ համահայկական 12-րդ երիտասարդական-ուսանողական բանակումի մասնակիցները Արամ Մանուկյանի արձանի մոտ. Երևան 20. 07. 2025 թ.

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**79**-րդ տարի) **Թիվ-7** (1701) Հուլիս 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Փաշինյանը պատերազմ է հայտարարել հայ ժողովրդին (էջ 1-3)

2 - Քաղաքական

Անի Մելքոնյան
Դաշնակցության դեմ Փաշինյանի ոտնձգությունների գաղափարական դրդապատճառները (էջ 4-7)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
Ամերիկյան միջնորդությունը Սյունիքի միջանցքի հարցում (էջ 8-9)

3 - Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Ռուս-ադրբեջանական հարաբերությունների շուրջ. ճգնաժամ հռետորաբանության և շահերի միջև (էջ 10-12)

4 - Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Իրան-Իսրայել 12-օրյա հակամարտությունը և Ադրբեջանի հնարավոր ներգրավվածությունը (էջ 13-15)

5 - Երիտասարդական

Յովսէփ Տէր Գէորգեան
Այսօրուան մեր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է համահայկական զօրաշարժ (էջ 16-17)

Սարգիս Մկրտչեան
Ո՞վ է դաշնակցական երիտասարդը էջ 18-21)

6 - Դեմքեր և դեպքեր

Հայկազուն Ալվրցյան
Միսաք Թոռլաքյանը ազգային-ազատագրական պայքարի գործիչ և վրիժառու (մաս երկրորդ) (էջ 22-30)

Մովսէս Ծիրանի
ԱնիհՕորէն՝ Մուսալեռ
Հրանդ Մաթեւոսեանի ծննդեան 90-ամեակի առիթով (էջ 31-34)

Մարգարիտա Խաչատրյան
Հակոբ Կարապենց
(Ծննդյան 100-ամյակի առիթով) (էջ 35-39)

7 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Վտանգը (էջ 40)

Փաշինյանը պատերազմ է հայտարարել հայ ժողովրդին

Որպեսզի այս հոդվածի խորագիրը չափազանցություն չթվա, նախ ներկայացնենք ամենաակնառու օրինակը: Փաշինյանը դուրս է եկել Հայ Առաքելական եկեղեցու դեմ, շատ լավ գիտենալով, որ աշխարհում առաջինը պետականորեն ճանաչված 1700-ամյա Քրիստոնեական ուսմունքը հայ ժողովրդի բացարձակ մեծամասնության հավատն է, շաղախված վերջինիս հոգեկերտվածքի հետ: Հայ եկեղեցին, պետականության բացակայության պայմաններում, հարյուրամյակներ շարունակ, ըստ էության, ստանձնել է ժողովրդի առաջնորդությունը՝ իրականացնելով բազմազան, այդ թվում՝ ազգային-քաղաքական գործունեություն: Հայ եկեղեցու պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է, իսկ նրա գործիչները հայ ժողովրդի ամենանշանավոր գործիչներից՝ ինչպես հոգևոր, այնպես էլ գիտական, մշակութային, և ազգային գործունեության մարզերում:

Եվրոպական մի կազմակերպություն, սոցիոլոգիական ուսումնասիրության հիմքի վրա, եթե չեմ սխալվում, երկու տարի առաջ գրել էր, թե որպես հավատացյալ ժողովուրդ աշխարհում առաջիններից մեկը հայերն են: Առաջին հայացքից մտորումների տեղիք է տալիս այս հայտարարությունը՝ մանավանդ, երբ նկատի ենք ունենում հայրենաբնակ հայության աթեիստական ոչ հեռավոր անցյալը, բոլոր ժամանակներում հայերիս հեռու լինելը կրոնական մոլեռանդությունից և այլն: Մյուս կողմից՝ անգամ խորհրդային ժամանակաշրջանում մեր ժողովրդի կյանքը սերտորեն կապված էր եկեղեցու, նրա ավանդույթների՝ ծեսերի, սովորույթների ու տոնակատարությունների հետ: Պատահականություն չէ նաև, որ դարեր շարունակ մեր ժողովրդին օտարները հաճախ անվանել են Հայ-քրիստոնյա:

Այստեղից էլ կարելի է հետևություն անել, թե ինչի դեմ է ուղղված «Նոր Հայաստան» ծեփել փորձող Նիկոլ Փաշինյանի հարվածը: Իրականում սին են կեղծարարության մեծ աճպարարի հավաստիացումները, թե իր պայքարն առանձին հոգևորականների դեմ է: Նախ՝ նիկոլական իշխանության շատ ներկայացուցիչներ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ չեն, և վերջինիս մասին բազմիցս անհարգալից են արտահայտվել: Ամենայն հավանականությամբ քրիստոնեական աղանդավորական ուսմունքի է դավանում նաև նրանց առաջնորդը և նրա ընտանիքը: Դեռևս իշխանության գալու սկզբնական շրջանում Փաշինյանը բաշիբոզուկին հանեց փողոց «Նոր Հայաստան՝ Նոր Կաթողիկոս» պահանջով: Իր ղեկավարման անցնող տարիներին Նիկոլն ինքը տարբեր առիթներով կոպիտ որակումներ է կատարել Մայր եկեղեցու և նրա սպասավորների հասցեին: Նա մերժել է հոգևոր իշխանության գոյությունը, հայտարարելով թե պետության մեջ պետք է լինի միայն մեկ իշխանություն,

և այդ մեկն իր իշխանությունն է: Նրա ցուցումով Հայաստանի դպրոցական ծրագրերից դուրս բերվեց Հայոց Եկեղեցու Պատմություն առարկան, հայ եկեղեցու ներկայացուցիչները այս իշխանության օրոք օտարված են երկրի պետական կյանքից, զանազան ազգային և պետական բնույթի միջոցառումների մասնակցելու հնարավորությունից: Իսկ ասվածի ամենաակնառու վկայությունն այն է, որ, հերթական անգամ ոտնահարելով սահմանադրական կարգը, Փաշինյանը ոչ միայն միջամտում է Եկեղեցու ներքին կյանքին, այլև որոշել է այնտեղ բռնի հեղաշրջում իրականացնել, իր ճաշակով վերափոխելով եկեղեցին՝ և՛ ծառայողների և՛ ներքին կանոնադրության փոփոխությամբ: Եթե նրան հաջողվի իրականացնել իր խելահեղ ծրագիրը ավանդական ազգային եկեղեցուն, կփոխարինի Նիկոլականության նոր աղանդը: Եթե հիշենք նաև, որ այս պահին երկու սրբազաններ ձերբակալված են բռնի իշխանափոխության և դրան ուղղված կոչերի կեղծ մեղադրանքով, ապա կարելի է արձանագրել, որ Հայաստանում տեղի ունեցողը հայ եկեղեցու դեմ օտար բռնակալների և նրանց դրածոների կողմից 1930-ականներին ծավալված բռնությունների կրկնությունն է: Իր անպատկառ ու սրբապիղծ գործունեությամբ Փաշինյանն, ըստ էության, թքում է հայ ժողովրդի հոգու մեջ, նրա ամենասուրբ զգացումների վրա:

Իր վերընտրության նպատակը հայրենիքից և պետությունից վեր դասող ղեկավարը սրանով փաստում է նաև, որ ժողովրդի համընդհանուր հակակրանքին արժանանալը երկրորդական նշանակություն ունի և իր հույսերը կապված են արտաքին ուժերի հետ. այսինքն՝ նրանց, ովքեր շահագրգռված են համազգային վստահություն և սեր վայելող ազգային գլխավոր ինստիտուտի խարխլմամբ:

Ժողովրդի դեմ ուղղված պատերազմի դրսևորումներ են ագրեսիվ և սադրիչ գործողություններն ընդ-

դիմադիր ուժերի, գործիչների՝ բոլոր նրանց դեմ, ովքեր կարող են անհամաձայնություն հայտնել իշխանության վարած քաղաքականության նկատմամբ: Լինի կին, զոհված ազատամարտիկի ծնող, պարզ գյուղացի, մտավորական կամ այլ մեկը, բոլոր դժգոհողների գլխին սրի նման կախված է բռնի իշխանափոխության ամբաստանությունը և վերևների համար ցանկալի պահին ձերբակալվելու սպառնալիքը: Սոցիալական տրամադրությունների ամենաակնհայտ ուսումնասիրությունների հիման վրա կարելի է վստահորեն հայտարարել, որ Փաշինյանն իր նոր ազգային պետական քաղաքականությամբ հայ հանրությանը փորձում է պարտադրել այնպիսի լուծումներ և «նորարարություններ» որոնք անընդունելի են ժողովրդի բացարձակ մեծամասնությանը:

Իշխանությունը կորցնելու վախով առաջնորդվող ղեկավարը անհիմն մեղադրանքով ձերբակալել է լայն հանրության համակրանքը վայելող ազգային մեծ բարերար միլիարդատիրոջը և օրերի ընթացքում, ազգայնացման անվան տակ, ապօրինաբար նրանից փորձել է խլել երկրի էլեկտրացանցերի ռազմավարական նշանակության համակարգը:

Սրանով նա իր թուրք-արևմտյան տերերին փորձում է հավատացնել, որ Հայաստանում հետևողականորեն զրոյացման է տանում ռուսական ազդեցությունը: Ջելենսկու օրինակով նա ներկայանում է որպես Արևմուտքի ֆորպոստ Ռուսաստանի դեմ, ակնկալելով, որ Արևմուտքն իր ամեն մի բռնության ու անօրինականության վրա աչք կփակի՝ գլոբալիստական միաբևեռության դեմ այս պայքարում ըստ արժանվույն գնահատելով իր հակառուսական գործունեությունը:

Որպես նման օրինակներ հիշենք, որ Արևմուտքից բերված 300.000 քվեներով Մոլդովայում վերարտադրվեց արևմտամետ ղեկավարի իշխանությունը, խայտառակ անօրինականությամբ Ռումինիայում չեղարկվեց ոչ արևմտամետ ղեկավարի հաղթանակը: Վրաստանի իշխանության դեմ շարունակվում է արևմուտքի կոշտ ճնշումը՝ պարտադրանքով սեփական ինքնիշխանության կորստի հաշվին վերադառնալու Արևմուտքի գիրկը: Իրենք՝ արևմտյան ժողովրդավարության դրոշակակիրները, իրենց երկրներում ընդդիմադիր կուսակցություններին վախեցնում են արգելելու, իսկ ընդդիմադիր գործիչների դեմ՝ քրեական հետապնդումներ իրականացնելու սպառնալիքով:

Փաշինյանն իր հակաժողովրդական վտանգավոր քայլերով ակնհայտորեն բախում է հրահրում եկեղեցու, ժողովրդի ու քաղաքական ուժերի հետ: Նախորդ առաջնորդողում արդեն գրել ենք, որ, վախենալով իրադարձությունների բնականոն և իր համար ոչ ձեռնտու զարգացումից, Նիկոլը կարծես ցանկանում է ոչ միայն քարտերը խառնել, այլև խաղասեղանը շուռ տալ: Այո՛, բռնի իշխանափոխության և դրա կոչերն անելու ամբաստանությամբ շարունակվում են զանա-

զան ակտիվ ընդդիմադիրների ձերբակալությունները և, կասկած չկա, որ դրանք կշարունակվեն: Փաշինյանը, սակայն, հասկանում է, որ իր անձնական օգտագործման իրավաբանների կցած-կցմցած հիմքերը շատ խախուտ են և, հավանաբար նրան անհրաժեշտ են փողոցային բախումներ, որպեսզի դրանք ներկայացնի որպես բռնի իշխանափոխության ծանրակշիռ փաստեր, ընդլայնի հետապնդումների հնարավորությունը: Վեհափառի և վեհարանի դեմ անհավատ խուժանին դուրս բերելը թերևս կարող է դառնալ ժողովրդական ըմբոստություն սադրելու լավագույն հնարավորությունը: Իսկ որ Փաշինյանն իր նպատակին հասնելու համար ո՛չ ժողովրդին կխնայի, ո՛չ պետությունը, համոզվում ենք արդեն յոթ և շատ ավելի տարիներ շարունակ: Սա նույն Փաշինյանն է, ով վիժեցնելով բանակցությունները, 2008 թվականին բախումների քառսի մեջ ներքաշեց մայրաքաղաքը, ով 10 տարի անց հայտարարում էր, թե. «Կամ ես կդառնամ վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա» և դագաղներ էր պտտեցնում Երևանի փողոցներով, ով հիմա հայտարարում է, թե 2019 թվականին կարող էր ասել, որ Արցախը Ադրբեջանի կազմում է լինելու, իսկ 20 թվականի պատերազմից հետո հայտարարում էր, թե տարածքները կարելի էր հանձնել առանց պատերազմի, սակայն այդ դեպքում ժողովուրդն իրեն դավաճան կհամարեր:

Արտաքին պատվերի սպասարկմանն ուղղված գործողություններով շեղելով մարդկանց ուշադրությունը, նույն ժամանակ կուլիսների ետևում իրականացվում է մեկ այլ հանցագործ ծրագիր՝ Զանգեզուրի, այսպես կոչված, միջանցքն օտարին հանձնելու դավադրությունը: Տվյալ պահին իր համար անցանկալի, հասարակական հնչեղություն ունեցող քայլերից հասարակության ուշադրությունը շեղելու փաշինյանական գործելակերպը ծանոթ է բոլորիս: Հիշենք նաև, որ Ստամբուլում Էրդողանի և Աբու Դաբիում Ալիևի հետ վերջին հանդիպումներին զուգահեռ տեղի ունեցան նոր հետապնդումները և ձերբակալությունները: Փաշինյանն այսօր Հայաստանի գլխին բերում է նույն փորձանքը, ինչ որ ժամանակին բերեց Արցախի գլխին: Նույն 2019 թվականին Ստեփանակերտի հրապարակում նա ճչում էր, թե. «Արցախը Հայաստան է և՝ վերջ», 2020 թվականին, պատերազմում պարտվելուց հետո, անօրինականորեն Արցախից տարածքներ զիջեց, երբ մինչ այդ ասում էր, թե Արցախի ճակատագիրը որոշել ինքը չի կարող, որովհետև արցախցիներն իրեն չեն ընտրել: Այնուամենայնիվ, 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ ամրագրվեց և՛ Արցախի հայկական մնացած տարածքը, և՛ Լաչինի հայապատկան ճանապարհը, սակայն հետո Փաշինյանը դրանք էլ զիջեց՝ այս անգամ հայտարարելով, թե Արցախը պատկանում է Ադրբեջանին: Այս ողջ ընթացքում ինչ որ չափով իր պահանջները բավարարելով և արձանագրելով նոր վիճակը՝ Ադրբեջանի ղեկավարն այնուհետև տեսնում էր, որ Փաշինյանից կարելի է նորանոր զիջումներ կորզել, որոնց մասին նախկինում չէր էլ կարող երազել: Նա դնում է իր նոր պահանջները և հասնում է դրանց իրականացմանը: Արցախի հարցը հայկական կողմի ջանքերով տասնամյակներ շարունակ աշխարհին ընդունել էր որպես արցախահայության ինքնորոշման խնդիր, բայց Նիկոլ Փաշինյանն իր ապուշության պատճառով, իսկ ավելի շուտ միտումնավորությամբ, վերածեց այն տարածքային վեճի, այսինքն՝ Հայաստանի հավակնության ադրբեջանական տարածքների նկատմամբ: Այսօր հասել ենք այնտեղ, որ տարածքային վեճերի հետ ոչ մի առնչություն չունեցող Զանգեզուրն է դարձել պետությունների միջև վեճի առարկա: Հայաստանի ինքնիշխանությունը զիջելու, Հայաստանի հարավային դարպասներն անկայունության գոտու վերածելու գործընթացը Փաշինյանի ձախող, հանցավոր և դավադիր գործունեության հետևանքն է՝ ինչի գինը թուրք-ադրբեջանական պանթուրանական և արևմտյան աշխարհաքաղաքական շահերի դիմաց սեփական իշխանության պահպանումն է: Հայաստանը, փաստորեն, վերածվել է Անդրկովկասից Ռուսաստանին դուրս մղելու, Իրանի հյուսիսային սահմանները թշնամական հենակետի վերածելու գործիքի, և այս բարդ խաղին պատանդ դառած Փաշինյանը փորձում է պահպանել իշխանական աթոռը միաժամանակ խաբելով բոլորին: Պետք է խոստովանել, որ անընդհատ ներքին խնդիրներ հրապարակ նետելով՝ Փաշինյանին ցայսօր հաջողվում է քթից բռնած ողջ հայ ժողովրդին տանել իր օրակարգերի ետևից: Նրան ցայսօր հաջողվել է բարեկամության ու հավատարմության երդումներ տալով ապահովել Ռուսաստանի և Իրանի կրավորական պահվածը իր պրոթուրք, պրոարևմտյան խաղերի դիմաց: Միաժամանակ իր անվերջանալի խուսանավումների, անկանխատեսելիության պատժառով նա կորցնում է նաև Արևմուտքի վստահությունը, և այս ամենին հակազդելու այլ ռեսուրս չունի, քան ցուցադրելը երկրի ներսում իր իշխանության կայունությանն ուղղված հետապնդումները, և հայկական խաղաքարտի շահարկումը որպես առևտրի միջոց:

Կհաջողվի՞ Նիկոլին բախումներ հրահրել առաջիկայում և դրանց թոհուբոհում չեզոքացնել ազգային ուժերին իր կապիտուլյացիոն ծրագրերի և իշխանական վերարտադրության ճանապարհից, թե՞ այլևս սպառվում են նրա արտաքին ու ներքին խուսանավումների հնարավորությունները: Փաշինյանը նախաձեռնող է, Փաշինյանը լավագույնս զգալով իրավիճակի բարդությունը գնում է վա բանկ: Ունի՞ սրա դիմաց ընդդիմությունը հակաքայլեր, թե՞ դեռ պատրաստ է միայն իր դաշտում հակադարձելուն: Ժամանակն այլևս Նիկոլի օգտին չի ընթանում, բայց դեռևս չկան հիմքեր մտածելու համար, որ ազգային ուժերը դարձել են իրավիճակի և ժամանակի տերը, իսկ ժամանակի կշեռքին Հայաստանի ինքնիշխանությունն է:

Դաշնակցության դեմ Փաշինյանի ոտնձգությունների գաղափարական դրդապատճառները

Անի Մելքոնյան
Պատմաբան

Ինչպես արդեն բազմիցս նշել ենք, Հայաստանում՝ 2018-ից սկսած, գրոհ է սկսվել ազգային արժեքների դեմ, այդ գրոհի առաջնային թիրախներից մեկը դարձավ Դաշնակցությունը, որպես ազգային կուսակցություն:

Իրավիճակը բարդացավ հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ նոյեմբերի 9-ին Մոսկվայում Փաշինյանը կնքեց դավաճանական կապիտուլյացիա և հանձնեց Արցախի 75%-ը: Դաշնակցության Հայաստանի ԳՄ-ը հայտարարեց, որ համաձայն չէ Նիկոլ Փաշինյանի ստորագրած կապիտուլյացիոն համաձայնագրի հետ և կոչ արեց ժողովրդին փողոց դուրս գալ:

Հայրենիքի փրկության շարժման և մյուս շարժումների ու վերջին 5 տարիներին ծավալված իրադարձությունների մասին շատ ենք խոսել, հետևաբար չմանրամասնենք և խոսենք միայն վերջին ամիսներին ծավալված Փաշինյան-ՀՅԴ պայքարի մասին:

Հայաստանը «ժողովրդավարության բաստիոն» հռչակած փաշինյանական վարչակազմը հատկապես վերջին 1-2 տարիներին անթաքույց հետապնդումներ է սկսել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր քննադատում են իշխող վարչակազմի քաղաքականությունը, ընդ որում՝ մարդիկ կարող են կալանավորվել «մեր ձևով կմասնակցենք» արտահայտության համար, ինչպես եղավ Սամվել Կարապետյանի դեպքում, իսկ Սամվել Կարապետյանն ընդամենը նշել էր. «Մի փոքրիկ խմբակ, մոռանալով հայոց պատմությունը, հայ եկեղեցու հազարավոր տարիների պատմությունը, հարձակվել է հայ եկեղեցու վրա, հայ ժողովրդի վրա:

Քանի որ ես միշտ եղել եմ հայոց եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին, ունենալու եմ անմիջական մասնակցություն: Եթե քաղաքական գործիչներին չհաջողվի, ապա մենք մեր ձևով ենք մասնակցելու այս ամեն ինչին»[1] - և, ըստ փաշինյանական վարչակազմի, նա «իշխանությունը զավթելու» կոչ է արել:

Մինչդեռ, եթե մարդուն իր օգտագործած բառերի համար կալանավորում են, ապա առաջին հերթին պետք է կալանավորվեր Փաշինյանը. «կծեփենք պատերին», «կփոռենք ասֆալտին» ու նմանատիպ այլ բառերի և Ամենայն հայոց կաթողիկոսին «դուրս շպրտելու», ավելի վաղ արված՝ Սահմանադրական դատարանը «ազատագրելու» կոչերի համար:

Այլ կերպ ասած, Փաշինյանը կարող է բոլորին սպառնալ, ահաբեկել, խաղաղ ցուցարարների վրա կրակելու հրաման տալ (2022 թ. հունիսի 3) և (2024 թ. հունիսի 12), իսկ Փաշինյանին քննադատելը «ժողովրդավարության բաստիոն» Հայաստանում համարվում է քրեորեն պատժելի արարք:

Ինչևէ, հայտնի գործարար ու բարերար Սամվել Կարապետյանի ապօրինի կալանավորումն ու հայոց եկեղեցու դեմ փաշինյանական իշխանության գրոհը թողնենք մի կողմ (նախորդ հոդվածում այդ մասին արդեն խոսել ենք) և գանք Դաշնակցության դեմ փաշինյանական հարձակումներին: Դրանց պատճառը իհարկե միայն Դաշնակցության ընդդիմադիր կուսակցություն լինելը չէ, այլ նաև ՀՅԴ-ի գաղափարախոսության նկատմամբ Փաշինյանի ունեցած խորը թշնամանքն ու ատելությունը:

Ի՞նչ է քարոզում Դաշնակցությունը՝ Ազատ Անկախ և Միացյալ Հայաստան, Հայոց ցեղասպանության ճանաչում, դատապարտում և հատուցում՝ ասել է թե Թուրքիան պետք է հատուցի հայ ժողովրդին՝ նրան ցեղասպանության ենթարկելու համար, այդ նպատակով՝ դեռ նախորդ դարի 40-ականներին ՀՅԴ-ն հիմնադրել է Հայ դատի հանձնախումբը, որն ամբողջ աշխարհում զբաղվում է հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ:

Դաշնակցության՝ Միացյալ Հայաստանի գաղափարի ներքո միավորվում են Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունն ու Արևմտյան Հայաստանը և Դաշնակցությունը միակ կուսակցությունն է, որը բոլոր պատերազմներին ունեցել է կուսակցական վաշտեր ու ջոկատներ, որոնք ամենաթեժ հատվածներում մասնակցել են ռազմական գործողություններին:

Դաշնակցությունը հանդես է գալիս նաև որպես հայկական ավանդույթների, հայ ընտանիքի ու հայոց եկեղեցու պաշտպան:

Իսկ ի՞նչ է անում Փաշինյանը՝ նրա համար չկա ոչ անկախ, ոչ ազատ, ոչ էլ առավել ևս միացյալ Հայաստան, նա ընդամենը քարոզում է, որ պետք է «լավ ապրել» ու «առևտուր անել» թուրքերի հետ:

Հայաստանը՝ ըստ Փաշինյանի, 29.800 քառ կմ էր, հետո դարձավ 29.743 քառ կմ, իսկ վերջին օրերին Փաշինյանի թիմակիցների ու աջակիցների՝ մասնավորապես Արամ Զավենի Սարգսյանի համար՝ Հայաստանի տարածքը 29.400 քառ կմ է[2]:

Իսկ Արևմտյան Հայաստանը Փաշինյանի համար առհասարակ գոյություն չունի, ըստ նրա «Արաքսից այն կողմ Հայաստան չկա, Արաքսից այն կողմ Թուրքիան է»[3], իսկ ինչ վերաբերում է ցեղասպանությանը, մենք այն ուղղակի սխալ ենք հասկացել. հունվարի 24-ին Ցյուրիխում Շվեյցարիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը ի պատասխան Ցեղասպանության մասին հարցի՝ Նիկոլ Փաշինյանն ասել է. «Պետք է հասկանանք՝ լավ, ինչ է տեղի ունեցել և ինչու է տեղի ունեցել: Եվ ինչպե՞ս ենք մենք դա ընկալել, ո՞ւմ միջոցով ենք ընկալել: Ո՞նց է, որ 1939 թվին Հայոց ցեղասպանության օրակարգ չի եղել, և ո՞նց է, որ 1950 թվին Հայոց ցեղասպանության օրակարգ հայտնվել է: Ո՞նց է եղել, Մենք պետք է հասկանա՞նք, թե չպետք է հասկանանք»[4]:

Եվ ի տարբերություն Դաշնակցության, Փաշինյանը պատրաստ է զիջել Հայաստանի վերջին թիզ հողը՝ կեղծ «խաղաղությամբ» ժողովրդին կերակրելու ու իր աթոռը պահելու համար, և ամենևին կարևոր չէ, այդ աթոռը կլինի Հայաստանի Հանրապետության վարչապետի՞, թե՞ թուրքական նահանգապետի աթոռը:

Ինչ վերաբերում է հայոց եկեղեցուն, ապա Փաշինյանը «խաչակրաց արշավանք» է սկսել հայոց եկեղեցու դեմ, շատ լավ հասկանալով, որ հայոց եկեղեցու վարկաբեկումը կարող է հայ ժողովրդի համար թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր բնաջնջման պատճառ դառնալ, քանի որ վերջին 1000 տարիներին՝ հատկապես պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդին հայրենի հողում պահողը եղել է հիմնականում հայոց եկեղեցին:

Սակայն, ՀՅԴ-ի դեմ Փաշինյանի հակամարտության պատճառները վերը նշվածով չեն սահմանափակվում. կա նաև թուրքական գործոնը:

Դաշնակցությունն իր հիմնադրման օրվանից պաքարել է Հայաստանի «տնտեսական և քաղաքական» ազատագրման համար, ինչպես նաև եղել է ֆիդայական պայքարը կազմակերպողն ու դրան ուղղություն տվողը, կռվող ֆիդայիներին զենք-զինամթերքով ապահովողը:

Հայերին թալանելու, կեղեքելու ու սպանելու սովոր թուրքը, 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին երբ գնում էր հայ ժողովրդին թալանելու, կամ զանգվածաբար սպանելու, հանդիպում էր դաշնակցական ֆիդայու կատաղի դիմադրությանը, նույնիսկ 1915-ին Վանում, Մուսա լեռան վրա ու Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի շատ այլ վայրերում դաշնակցական գործիչների գլխավորությամբ կազմակերպվեցին ինքնապաշտպանական կռիվներ, ինչի շնորհիվ բազմաթիվ հայեր փրկվեցին ցեղասպանությունից:

1918 թ. դաշնակցական գործիչները՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ, կարողացան կազմակերպել հայ ժողովրդին, Սարդարապատում, Բաշ-Ապարանում ու Ղարաքիլիսայում հաղթական մարտեր վարել, և վիժեցնել պանթյուրքիզմի ծրագիրը: Ի վերջո հե՛նց Դաշնակցությունը «Նեմեսիս» գործողությամբ պատժեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչ երիտթուրք պարագլուխներին և այնուհետ էլ մի ողջ հարյուրամյակ շարունակվում է արդարության հաստատման և ազգային իրավունքների ճանաչման համար այս կուսակցության անսահանջ պայքարը:

Հայաստանի անկախացումից հետո էլ Դաշնակցությունը մնաց Սփյուռքում հայությանը կազմակերպող ամենաազդեցիկ ուժը, որին բախվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ պայքարող թուրքական պետությունը, ուստի պատահական չէ, որ իր դրածո Նիկոլ Փաշինյանին թուրքական պետությունը պետք է ուղղորդեր ամենաանզիջում պայքարը մղելու Դաշնակցության դեմ: Այդ համատեքստում Նիկոլ Փաշինյանը մի շարք դաշնակցականների ապօրինի ձերբակալման հրամաններ արձակեց, մասնավորապես՝ հուլիսի 10-ին ՀՅԴ հանրային կապերի գրասենյակը հայտարարեց, որ «Բերման է ենթարկվել ՀՅԴ Երևանի Քաղաքային կոմիտեի անդամ Արսեն Մարտոյանը:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի և ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի աշխատակազմի ղեկավար Վահագն Մատինյանի տանը խուզարկություններին զուգահեռ խուզարկություն է ընթանում նաև «Եղվարդ» խոշորացված համայնքի ավագանու անդամ, ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միության կենտրոնական վարչության նախագահ Գևորգ Մուրադյանի տանը»[5]:

Բերման ենթարկվածներին մեղադրում էին «ահաբեկչության նախապատրաստման» մեջ, իսկ, որպես «ապացույց» ներկայացվում էին մի քանի օրինական որսորդական հրացաններ, սթրայքբոլ խաղի համար նախատեսված մի նռնականման պատյան, որի «ներսում պահվել են այս խաղի համար նախատեսված սիսեռի հատիկներ»[6]:

Փաշինյանի հրահանգները կատարող քննչական կոմիտեի հրապարակած «ապացույցներում» ամենազավեշտալին՝ երիտասարդ դաշնակցականներից մեկի տնից «առգրված» մահ կամ ազատություն գրությամբ շապիկն էր:

«Ու այդ շապիկի նկարը հրապարակել են՝ իբր ահաբեկչության նախապատրաստվելու անհերքելի ապացույց»[7]:

Քննչական կոմիտեն մի «ճոխ» հայտարարություն տարածեց, հավելելով, որ ձերբակալվել է 7 անձ՝ ոչ ավել-ոչ պակաս «ահաբեկչության նախապատրաստության, ինչպես նաև՝ հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 43-308-րդ հոդվածի 1-ին մասով և 335-րդ հոդվածի 1-ին մասով»[8]:

Կատարվածի վերաբերյալ փաստաբան Սերգեյ Հարությունյանի հայտարարությունը հետևյալն էր.

«Դաշնակցության 7 անդամներ են ձերբակալվել, կարծում եմ 72–ժամյա ռեժիմով նրանց կպահեն:... Պարզ է չէ՞, որ այս ամենը քաղաքական հետապնդում է Դաշնակցության նկատմամբ»[9] - ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, փաստաբանը ճիշտ էր, և 72 ժամ հետո «ահաբեկչության նախապատրաստման» հոդվածով բերման ենթարկվածները ազատ արձակվեցին, իսկ քաղաքական պատվեր կատարող ՔԿ-ն և «ահաբեկչության» մասին հեքիաթներ պատմող ՔՊ-ական պատգամավորները հերթական անգամ ծաղրի առարկա դարձան հասարակության աչքում, հատկապես, որ ապօրինի բերման ենթարկվածներից մեկը առհասարակ ՀՅԴ-ի հետ կապ չունեցող անձ էր. Այդ մարդը սանտեխնիկ է և, ամենայն հավանականությամբ, անունների համընկնում է եղել: Նրան էլ են բերման ենթարկել և պահել 72 ժամ՝ առանց որևէ հիմքի»[10]:

Փաշինյան-ՀՅԴ հակամարտությունը, և Դաշնակցության նկատմամբ փաշինյանական իշխանության ապօրինի բռնաճնշումները իհարկե այսքանով չեն ավարտվելու, և շարունակվելու են այնքան ժամանակ քանի դեռ Հայաստանի վարչապետի աթոռը զբաղեցնում է Նիկոլ Փաշինյանը, քանզի հայրենիք ազատագրող, հայրենիք պաշտպանող, աշխարհի 35 երկրներում հայկական շահերին հետամուտ ՀՅԴ-ն չի կարող համերաշխ լինել հայրենիք հանձնող, ազգային շահերին դավաճանող Փաշինյանի և նրա քաղաքականության հետ, ճիշտ այնպես, ինչպես չհաշտվեց Փաշինյանի քաղաքական կնքահայր Լևոն Տեր-Պետրոսյանի պարտվողական քաղաքականության հետ: Այն ժամանակ ՀՅԴ-Տեր-Պետրոսյան բախման վերջնարդյունքը ցույց տվեց, որ ՀՅԴ-ն ճիշտ



էր և նրա ուղեգիծը՝ ավելի քան երկու տասնամյակ Հայաստանին խաղաղություն ու բարգավաճում բերեց:

Այսօր ևս Փաշինյան-ՀՅԴ հակամարտության մեջ՝ որքան էլ Փաշինյանը իշխանական լծակներ ու իրեն հավատարմորեն ծառայող իրավապահներ ունենա՝ ճշմարտությունը ՀՅԴ-ի կողմն է, քանզի վերջինս պայքարում է հայկական պետությունն ու հայ ժողովրդին պաշտպանելու համար, հետևաբար Նիկոլ Փաշինյանը դատապարտված է անհաջողության: Եթե անգամ նա աշխարհի բոլոր դաշնակցականներին, բոլոր հոգևորականներին և իրեն քննադատող ՀՀ բոլոր քաղաքացիներին կալանավորելու հրաման տա՝ միևնույն է, նրա ազգային ու հակապետական քաղաքականությունը ապագա չունի, և չնայած դրան առաջիկա ամիսներին Հայաստանին թե ներքին և թե արտաքին լուրջ մարտահրավերներ են սպասվում, որոնք հաղթահարելու համար Հայաստանի ժողովուրդը, հայոց եկեղեցին և հայաստանյան քաղաքական դաշտի լուրջ «խաղացողները» պետք է միավորեն ուժերը և, անձնական ամբիցիաները մի կողմ դնելով, ազատագրեն Հայաստանը փաշինյանական հակապետական վարչակազմից՝ հակառակ դեպքում, ոչ հեռավոր ապագայում հայաստանյան քաղաքական դաշտում դարձյալ կմնա միայն Դաշնակցությունը՝ Երևանի «դարպասների» մոտ հասած թուրքերի դեմ՝ հերթական «Սարդարապատը» մղելիս:

Որպես ամփոփում ասենք, որ իրենց ազգային համարող քաղաքական ուժերը վերևում ասվածի մասին շատ լուրջ պետք է մտածեն ու հնարավորինս արագ ընտրություն կատարեն՝ ի՞նչն է իրենց համար առավել կարևոր՝ սեփական շահերն ու քաղաքական հավակնությունն՝ը, թե հայրենիքը՝ հիշելով մեկ պարզ ճշմարտություն, որ հայրենիքը երբեք չի ներում նրանց, ովքեր անձնական շահը գերադասում են հայրենիքից՝ այդ մասին ամենից լավ կարող են վկայել հայրենիքի շահերը զոհաբերած հայ բոլշևիկները և հայտնի մելիք Ֆրանգյուլը, որոնց հայ սերունդները միայն անեծքով են հիշում...:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. https://24news.am/nerkin-kyank/416474/
2. https://168.am/2025/07/16/2247354.html
3. https://m.mamul.am/am/news/328902
4. https://www.civilnet.am/news/813948
5. https://yerevan.today/berman-e-entharkvel-hyd-yerevani-khaghakhayin-komitei-andam-arsen-martoyaneh/
6. https://www.facebook.com/photo.php?fbid=9863637520411208&set=pb.100002951738948.-2207520000&type=3
7. https://www.facebook.com/photo.php?fbid=9863262280448732&set=pb.100002951738948.-2207520000&type=3
8. https://24news.am/Nklqd204bk5LT2pHTWZsAR4gm5DLONv-VA0KP4PmSsHL7yMwHljSeX3FqUDynEOBPaVam7PR0yU01pg1C-Sw_aem_fP4pyNviQOYCGT1NN6Ps1g
9. https://yerkir.am/hy/article/2025/07/10/296020
10. https://hraparak.am/post/b8c18a837f8e7d1ce2f0d02e7418d265

Օգտագործված նյութերի ցանկ

1. https://24news.am/nerkin-kyank/416474/
2. https://168.am/2025/07/16/2247354.html
3. https://m.mamul.am/am/news/328902
4. https://www.civilnet.am
5. https://yerevan.today/berman-e-entharkvel-hyd-yerevani-khaghakhayin-komitei-andam-arsen-martoyaneh/
6. https://www.facebook.com/photo.php?fbid=9863637520411208&set=pb.100002951738948.-2207520000&type=3
7. https://www.facebook.com/photo.php?fbid=9863262280448732&set=pb.100002951738948.-2207520000&type=3
8. https://24news.am
9. https://yerkir.am/hy/article/2025/07/10/296020
10. https://hraparak.am/post/b8c18a837f8e7d1ce2f0d02e7418d265

Ամերիկյան միջնորդությունը Սյունիքի միջանցքի հարցում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Զանգեզուրի միջանցքը շարունակում է մնալ տարածաշրջանային ամենավիճելի և քննարկվող հարցերից մեկը: Ադրբեջանն օգտագործում է յուրաքանչյուր հնարավորություն՝ պահանջելու անարգել մուտք Հայաստանի տարածքով դեպի Նախիջևան: Այս առումով, ԱՄՆ-ն, կարծես, որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել՝ միջնորդի դերում հանդես գալու համար: Թուրքիայի Հանրապետությունում ԱՄՆ դեսպան Թոմաս Ջ. Բարաքը վերջերս առաջարկել է ԱՄՆ-ին հարյուր տարվա վարձակալությամբ վերահսկողություն ստանձնել 32 կիլոմետրանոց ճանապարհի նկատմամբ, և որպեսզի բոլոր կողմերը կարողանան օգտվել դրանից[1]:

Այս առաջարկին նախորդել էր ամսվա սկզբին Քարնեգիի փորձագետ Օլեսյա Վարդանյանի տարածած այն լուրը, որով վերջինս պնդում էր, որ ամերիկյան մասնավոր ընկերությունը կարող է ներգրավվել այս հարցում՝ որպես կայունացնող ուժ: Պաշտոնական աղբյուրներին հղում անելով՝ Վարդանյանն ասել է, որ ԱՄՆ-ը կարող է առաջ մղել այն տարբերակը, որի շրջանակում ամերիկյան մասնավոր ընկերությունը կներգրավվի որպես անկախ օտարերկրյա օպերատոր՝ երթուղու լոգիստիկայի կառավարման համար: Քանի որ դժվար կլինի ճնշում գործադրել Ադրբեջանի վրա՝ հրաժարվելու իր պահանջներից, ԱՄՆ-ը, ամենայն հավանականությամբ, հույսը կդնի Երևանի վրա՝ հետևելու ԱՄՆ-ի առաջարկած տարբերակին[2]: Դեսպանի առաջարկից առաջ պետքարտուղար Մարկո Ռուբիոն նախագահ Թրամփի հետ նիստի ժամանակ հույս էր հայտնել շուտով տեսնել «Ադրբեջանի և Հայաստանի միջև կնքված խաղաղության համաձայնագիրը[3]: Հայտարարությունը արվել էր հենց այն օրը, երբ Աբու Դաբիում հանդիպեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը: Պետքարտուղարությունը որևէ լրացուցիչ մեկնաբանություն չտվեց, բացի այն, որ.«Սա այն վարչակազմն է, որը աշխատում է խաղաղության համար: Նրանք կանեն այն, ինչ անհրաժեշտ է և կգնան այնտեղ, որտեղ անհրաժեշտ է»[4]:

Իրականում Թրամփի վարչակազմի հետաքրքրության ակտիվացումն ուշագրավ էր, քանզի նախագահի պաշտոնը ստանձնելուց ի վեր որևէ լուրջ հայտարարություն կամ քայլեր չեն եղել, առավելն հանրային կերպով, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման հարցում՝ բացառությամբ ԱՄՆ պետքարտուղարի կողմից բանակցությունների ավարտը ողջունելու հայտարարության: Սա բավական տարբերվում է Բայդենի վարչակազմի քաղաքականությունից, ով ստանձնել էր ակտիվ միջնորդի դեր և պաշտոնավարման ամիսներին ակտիվորեն հորդորում էր կողմերին ավարտին հասցնել և ստորագրել խաղաղության պայմանագիրը:

Ի հակադրություն Բայդենի՝ Թրամփը բիզնես մտածելակերպ ունեցող նախագահ է, ով չի ներգրավվում որևէ հարցում, քանի դեռ նրանում առկա չեն ամերիկյան հետաքրքրություններ և շահեր: Ուստի, հարկ է նշել, որ Հարավային Կովկասի տարածաշրջանը Դոնալդ Թրամփի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջան չէ: Ուստի, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և հայ-ադրբեջանական հարաբերությունները որևէ հետաքրքրություն չէին ներկայացնի նրա համար, եթե չլիներ վերջինիս ձգտումը ներկայանալու որպես հակամարտություններ կարգավորող ԱՄՆ նախագահ: Ուստի, ոչ միայն Թրամփի վարչակազմը Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների գործընթացին առնչվող հայտարարություն տարածեց վերջերս, այլև դրան հաջորդեց այդ թեմային անձամբ նախագահ Թրամփի կատարած անդրադարձը: 2025 թվականի հուլիսի 14-ին Սպիտակ տանը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռուտեի հետ հանդիպման ժամանակ Թրամփն ասաց, թե. «Կարծես, հայ-ադրբեջանական հակամարտությունը հաջող ավարտի է հանգում»[5]: Նախագահ Թրամփը ևս մեկ անգամ անդրադարձավ այս հարցին հուլիսի 19-ին՝ Սպիտակ տանը հանրապետական սենատորներին հյուրընկալելիս ունեցած իր ելույթի ժամանակ: Նա հայտարարեց, որ ԱՄՆ-ն «Այնտեղ հրաշքներ է գործել և Հայաստանի ու Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագիրը բավականին մոտ է կնքվելու, եթե այն դեռ չի կնքվել»[6]:

ԱՄՆ մասնավոր ընկերությանը որպես անկախ օտարերկրյա օպերատոր ներգրավելու առաջարկի առնչությամբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արձագանքը երկար սպասեցնել չտվեց: Շուշիում մեդիա ֆորումի ժամանակ վերջինս անդրադարձավ ԱՄՆ-ի կողմից արված առաջարկին՝ հայտարարելով, թե. «Մեր տարածքում չի կարող լինել ոչ մի օպերա-

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմաս Բարաք

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտե - Թրամփ

տոր, ոչ մի առևտրական, ոչ մի վարձակալ», հավելելով, որ հուլիսի 10-ին Աբու Դաբիում կայացած Նիկոլ Փաշինյանի հետ անձնական բանակցությունների ժամանակ ինքը Նիկոլ Փաշինյանին ասել է, որ Ադրբեջանը պետք է ունենա անարգել և անվտանգ անցում Ադրբեջանից Ադրբեջան… «Մեր բեռները և քաղաքացիները չպետք է ամեն անգամ այնտեղ տեսնեն հայ սահմանապահի դեմքը: Սա մեր պահանջն է: Սա օրինական պահանջ է, արդարացի պահանջ: Հակառակ դեպքում մեր քաղաքացիները վտանգի տակ կլինեն»[7]:

Ադրբեջանի նախագահի այս հայտարարությանը պատասխանել է վարչապետ Փաշինյանի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանը՝ կոչելով այն. «Թաքնված տարածքային պահանջ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, ինչը ընդունելի չի կարող լինել և հակասում է մինչև այս տեղի ունեցած բանակցությունների, համաձայնությունների ոգուն և տառին»: Այնուամենայնիվ, Ալիևի այս պահանջն էլ կարող է բավարարվել, քանի որ ըստ ՀՀ վարչապետի խոսնակի. «Փաշինյանը հայտարարել է հուլիսի 16-ի իր ասուլիսում. այդ հանդիպումները (ՀՀ սահմանապահ ծառայությունների հետ) Հայաստանի Հանրապետության սահմանային և մաքսային կետերում կարող են տեղի ունենալ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, երբեմն առանց կոնտակտի, կենսաչափական անձնագրերով ու բեռների առցանց հայտարարագրմամբ ու սքանավորմամբ»[8]: Ուստի, այս տեխնոլոգիաների ներդրմամբ, ադրբեջանցիները ստիպված չեն լինի ՀՀ սահմանապահների հետ առնչվել, իսկ ադրբեջանական բեռները կարող են առանց ՀՀ սահմանապահների անմիջական ստուգումների տեղափոխվել երկրի տարածքով:

Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների հայտարարություններից պարզ է դառնում, որ Հայաստանի իշխանություններն ավելի պատրաստակամ են ամերիկյան մասնավոր ընկերության՝ որպես անկախ օտարերկրյա օպերատորի ներգրավմանը, քան ադրբեջանական կողմը: Նախկինում նման առաջարկ արդեն իսկ եղել է ԵՄ-ի կողմից, որը, որպես այդպիսին, նման է Ռուսաստան-Վրաստան բանակցությունների ընթացքում անկախ օտարերկրյա օպերատորի ներդրման առաջարկին, որի միջոցով պետք է վերահսկվեր Աբխազիայի և Հարավային Օսեթիայի վիճելի տարածքներով անցնող երթուղիների լոգիստիկան, և տվյալներ փոխանակվեին բոլոր կողմերի հետ[9]: Ներկայումս, նախագահ Թրամփը ցանկանում է դառնալ այս հարցում միջնորդ, ինչը իրականում պատահական չէ: Լինելով բիզնես մտածելակերպ ունեցող նախագահ, Հարավային Կովկասի այս տարածաշրջանը թեև դուրս է իր հետաքրքրությունների և շահերի շրջանակից, սակայն Դոնալդ Թրամփի այս նախագահական շրջանի գլխավոր նպատակներից է հակամարտություններ կարգավորողի դերի ստանձնումը և իրեն դիրքավորելը որպես աշխարհում խաղաղություն հաստատող ղեկավար՝ փորձելով հասնել իր վաղուցվա բաղձալի նպատակին՝ Խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալուն: Ուստի, այս նպատակից ելնելով, Թրամփը փորձում է ցանկացած շանս օգտագործել Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրման հարցում մեծ դեր խաղալու համար: ■

Հղումներ

1. Strengthening U.S.-Türkiye Relations and Advancing Relations with Syria, https://www.state.gov/briefings-foreign-press-enters / strengthening-us-turkiye-relations-and-advancing-relations-with-syria, (21.07.2025).
2. Vartanyan O., Why Armenia Is Seeking to Normalize Relations With Turkiye,https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2025/06/ armenia-turkiye-rapprochement?lang=en, (21.07.2025).
3. Department Press Briefing – July 10, 2025, https://www.state.gov/briefings/department-press-briefing-july-10-2025/, (21.07.2025).
4. Նույն տեղում:
5. NATO Secretary General meets President Trump to bolster support for Ukraine, https://www.nato.int/cps/en/natohq/news_237031.htm, (22.07.2025).
6. Trump speaks to GOP senators at White House dinner, https://www.youtube.com/watch?v=69BIhm6wB4U, (22.07.2025).
7. Trump says US ‘worked magic’ in Armenia–Azerbaijan peace talks, as debate over corridor continues, https://oc-media.org/trump-says-us-worked-magic-in-armenia-azerbaijan-peace-talks-as-debate-over-corridor-continues/, (22.07.2025)
8. ՀՀ-ն երբեւէ որեւէ մեկի հետ չի քննարկել, չի քննարկում եւ չի քննարկելու Ադրբեջանի նախագահի նշած անվանաբանությունը եւ դրանից բխող տրամաբանությունը. Վարչապետի խոսնակ, https://armenpress.am/hy/article/1225308 , (07.2025).
9. Նշվ. աշխ. Vartanyan O.

Ռուս-ադրբեջանական հարաբերությունների շուրջ. ճգնաժամ հռետորաբանության և շահերի միջև

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Վերջին ամիսներին Ռուսաստանը և Ադրբեջանը հայտնվել են քաղաքական լարվածության կիզակետում՝ երբեմնի ռազմավարական գործընկերների հարաբերություններն այսօր նմանվում են փոխադարձ անվստահությամբ լի մրցակցության: Դրա հիմքում ոչ միայն առանձին միջադեպեր են, այլ նաև խորքային փոփոխություններ՝ արտաքին քաղաքական ուղղությունների, հասարակական ընկալումների ու պետական հռետորաբանության մակարդակներում:

Ռուսաստանը և Ադրբեջանը ժառանգել են Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված բարդ հարաբերություններ՝ նորանկախ պետությունների դաշտում: 1990-ականների սկզբին Բաքուն դուրս է եկել Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունից, ինչը անկախ քաղաքական ուղու ընտրության ազդանշան էր: Պատերազմների ու տարածաշրջանային հակամարտությունների համատեքստում, հատկապես 2020 թ. Արցախում 44-օրյա պատերազմից և Ուկրաինայում հատուկ ռազմական գործողությունների մեկնարկից հետո, Ադրբեջանը մեծացրել է իր համագործակցությունը Թուրքիայի, Իսրայելի և Պակիստանի հետ, որոնք այդ երկրին ժամանակակից զինտեխնիկա են մատակարարում: Արդյունքում, Բաքուն սկսել է ավելի քիչ հենվել Ռուսաստանի զենքի վրա, ինչը փոխհարաբերությունների փոփոխության կարևոր ցուցիչներից մեկն է:

Ռուսաստանը, ի պատասխան, խիստ զսպողականություն է ցուցաբերել, փորձելով զսպել տարածաշրջանային հակամարտությունները, սակայն այժմ սթափ է գնահատում իրավիճակը, հասկանալով, որ նախկին դաշնակիցն աստիճանաբար իրենից օտարանում է: Այս հանգամանքը Ռուսաստանի ներսում խորացնում է մտահոգություններն ու հակադրությունները:

Այս ամենին գումարվել է նաև տնտեսական բաղադրիչը, քանի որ տնտեսական հարաբերությունները նույնպես զգալի փոփոխությունների են ենթարկվել: Ներգաղթյալների և աշխատողների՝ ռուսական շուկայում եղած ադրբեջանական համայնքի նկատմամբ բռնությունները, ինչպես նաև տնտեսական պատժամիջոցները, զգալիորեն ազդում են երկու կողմերի փոխհարաբերությունների վրա: Վերլուծաբանները նշում են, որ ռուսական շուկան կորցնում է ռազմավարական դերը Բաքվի համար, որի տնտեսությունը խարսխվում է նավթի ու գազի արտահանման վրա: Ըստ այդմ, տնտեսությունը դառնում է ևս մեկ դաշտ, որտեղ արձանագրվում են շահերի բախումներ, ինչը

լրացուցիչ հարված է հասցնում դիվանագիտական հարաբերություններին:

Վերոնշյալը կարևոր է, հասկանալու համար, թե ինչու են այժմ ռուս-ադրբեջանական հարաբերությունները այսքան սրվել: Վերջին շրջանի զարգացումների համատեքստում լարվածության առաջին էտապը սկսվել է դեռևս 2024 թվականի դեկտեմբերին, երբ Ռուսաստանի տարածքում՝ Դաղստանի երկնքում, խոցվեց ադրբեջանական ուղևորատար ինքնաթիռը: Պաշտոնական տվյալներով՝ զոհվեց 38 մարդ: Ադրբեջանը մեղադրեց ռուսական կողմին անհարկի ագրեսիայի մեջ՝ պահանջելով բացատրություններ ու պատասխանատվության ենթարկում[1]:

Արևմտյան և միջազգային լրատվամիջոցները ևս անդրադարձել են խնդրին՝ սրելով իրավիճակն ու սադրելով Ադրբեջանին: Միջազգային վերլուծականները, մասնավորապես CNN-ը և BBC-ն, չեն բացառել, որ «Pantsir-S1» համակարգը գործողության է դրվել՝ ենթադրելով, թե ուղևորատար ինքնաթիռն անօդաչու թռչող սարք կարող էր լինել: Այդ վարկածը, բնականաբար, խիստ քննադատության է արժանացել Բաքվում[2]: Ռուսաստանը, իր հերթին, միայն ցավակցություն է հայտնել՝ առանց պատասխանատվության ստանձնման: Այդ միջադեպը դարձավ

հարաբերություններում վստահության ճաքեր տալու մեկնարկային կետը:

Փաստացի այս ճգնաժամը նոր փուլ էր ռուս-ադրբեջանական հարաբերություններում՝ պայմանավորված ոչ միայն ռազմաքաղաքական խնդիրներով, այլև հասարակական ու տեղեկատվական դաշտերում ձևավորված հակադրություններով: Սակայն ներկայիս ճգնաժամը դուրս է եկել պետական մակարդակից: Տարածաշրջանային լարվածությունն այսօր արտացոլվում է նաև տեղեկատվական դաշտում, սոցիալական հարթակներում ու քաղաքացիական ընկալումներում՝ ձևավորելով խորքային անվստահության մթնոլորտ:

2025 թվականի հունիսին լարվածությունն առավել սրվեց, երբ լրտեսության և ֆինանսական խարդախության կասկածանքով Եկատերինբուրգում ձերբակալվեցին մի խումբ ադրբեջանցիներ: Հայտնի դարձավ նաև ձերբակալության ընթացքում երկու ադրբեջանցու մահվան մասին, ինչն Ադրբեջանում ընկալվեց որպես քաղաքական հաշվեհարդար: Մահվան դեպքը սոցմեդիայում վրդովմունքի մեծ ալիք բարձրացրեց, իսկ ադրբեջանական թելեգրամյան հարթակներում ներկայացվեց որպես էթնիկ հաշվեհարդար: Թելեգրամյան ադրբեջանցի օգտատերերն ու օգտահաշիվները գրում էին, թե մահացածներից մեկը ենթարկվել է համակարգված ֆիզիկական բռնության, ինչն էլ հենց ադրբեջանական հանրության շրջանում ընկալվեց որպես էթնիկ հաշվեհարդարի ակտ[3]:

Ի պատասխան՝ Բաքուն մի շարք դիվանագիտական և տեղեկատվական քայլեր ձեռնարկեց՝ սկսած Ռուսաստանում մշակութային միջոցառումների չեղարկումից, մինչև «Sputnik Ադրբեջան» լրատվական գործակալության աշխատակիցների ձերբակալումը՝ ապօրինի գործունեության մեղադրանքով[4]:

Ավելին, վերջին շրջանում պաշտոնական Բաքուն սկսել է առավել կտրուկ արտահայտվել Մոսկվայի հասցեին: Նախագահ Ի. Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանի դեմ իրականացվում է «թաքնված ճնշում և նվաստացում»[5], իսկ արտաքին գործերի նախարարությունը Ռուսաստանին մեղադրել է Հարավային Կովկասում «միակողմանի և երկակի ստանդարտների վրա հիմնված քաղաքականություն» վարելու մեջ: Բաքվի մամուլում ու հեռուստաեթերում ակնհայտ հակառուսական շեշտադրումներ են ավելացել: Դրանք ուղեկցվում են հասարակական լայն դժգոհությամբ՝ հատկապես սոցիալական հարթակներում, որտեղ ակտիվ քննարկվում է Ռուսաստանի՝ Ադրբեջանի ինքնիշխանությունը անտեսելու մարտավարության հարցը:

Ռուսաստանի արձագանքը հակասական է եղել: Մի կողմից՝ պաշտոնական Մոսկվան հայտարարել է, որ պատրաստ է երկխոսության և հարաբերությունների վերականգնման, սակայն մյուս կողմից՝ խոսնակներ Մարիա Զախարովան և Դմիտրի Պեսկովը մեղադրել են Ադրբեջանին էմոցիոնալ և չկշռադատված արձագանքների մեջ՝ ակնարկելով նաև երրորդ երկրների՝ մասնավորապես Ուկրաինայի, ազդեցության մասին[6]: ՌԴ պետական լրատվամիջոցները սկսել են թիրախավորել ադրբեջանական իշխանություններին՝ ներկայացնելով նրանց որպես ոչ հավատարիմ գործընկերներ, իսկ Բաքվի գործողությունները՝ որպես «անհարգալից և վտանգավոր»[7]:

Պետական հռետորաբանության մակարդակում կրքերը թեժացել են այնքան, որ Ադրբեջանի ԱԳՆ-ն բաց տեքստով խոսել է ԵԱՏՄ–ի «դաշնակիցների հետ վստահության խաթարման մասին», իսկ Մ. Զախարովան Ադրբեջանին մեղադրել է «էմոցիոնալ արկածախնդրության» մեջ[8]:

Սոցիալական մեդիայում և ոչ պետական հարթակներում իրավիճակը դարձել է առավել պայթյունավտանգ: Ռուսաստանում ակտիվացել են ադրբեջանատյաց խմբերը՝ տարածելով կեղծ տեղեկություններ և էթնիկ խտրականություն հրահրող կոչեր: Ադրբեջանում էլ լայն տարածում են ստացել տեսակետներն այն մասին, որ Ռուսաստանը վարկաբեկում է ադրբեջանական ինքնիշխանությունը և փորձում է միջամտել երկրի ներքին գործերին: Ադրբեջանում հակառուսական թեմատիկ նյութերը հաճախ ներկայացվում են կիսապատերազմական հռետորաբանությամբ:

Ադրբեջանական ընդդիմադիր և անկախ լրատվամիջոցներն անգամ գրում են, թե Ռուսաստանը «թաքուն վրեժխնդրություն է փորձում իրականացնել»՝ Ղարաբաղից դուրս մղվելուց հետո: Ադրբեջանական AZTV պետական հեռուստաալիքն հանրային խոսքում Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինին անգամ անվանել է «նացիստ»՝ համեմատելով նրան Ի. Ստալինի, իսկ նրա քաղաքականությունը՝ 1937 թվականի հետ: Ադրբեջանական ազգային հեռուստաալիքում արծարծվել է, որ Ռուսաստանն ունի «ռասիստական մշակույթ», որը շարունակվում է «ցարական և խորհրդային ժամանակներից»[9]: Թելեգրամյան ալիքներում էլ Ռուսաստանի կողմից կազմակերպված կիբերհարձակումների և տեղեկատվական մանիպուլյացիաների վերաբերյալ մեղադրանքներ են շրջանառվում: Բացի այդ, բողոքներ կան, որ Մոսկվան, իբրև թե, խոչընդոտում է ադրբեջանական ապրանքների մուտքը ԵԱՏՄ շուկա:

Քաղաքական վերլուծաբանների գնահատմամբ, լարվածությունը դուրս է գալիս սովորական դիվանագիտական միջադեպերի շրջանակից: Խոսքը տարածաշրջանային ազդեցության համար պայքարի մասին է: Ադրբեջանը վերջին տարիներին ցուցաբերել է առավել ինքնուրույն արտաքին քաղաքականություն՝ խորացնելով կապերը մի կողմից Թուրքիայի, Չինաստանի և Ուկրաինայի հետ, մյուս կողմից՝ Իսրայելի և Պակիստանի: Բաքվում սկսել են ակնարկներ հնչեցնել նաև BRICS միությանը մերձենալու նախաքայլերից, ինչպես Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցությունից հրաժարվելու մասին: Մոսկվան այդ ֆոնին փորձում է վերանայել իր քաղաքականությունն ու ամրապնդել վերահսկողությունը, սակայն առանց այն նախկին ուժեղ դիրքի, որն ուներ 10–15 տարի առաջ:

Արդյունքում, այսօր Մոսկվան ու Բաքուն գտնվում են մի կետում, որտեղ վստահությունը թե՛ քաղաքական, թե՛ հանրային մակարդակներում խիստ մաշված է: Պաշտոնական հռետորաբանությունը շարունակաբար կոշտանում է, իսկ հասարակական տրամադրություններն արդեն ձևավորում են վտանգավոր աշխարհաքաղաքական պատկեր: Սա պարզապես հերթական ճգնաժամ չէ: Սա տարածաշրջանում քաղաքական ուժերի դասավորության վերափոխման ազդակ է, որտեղ Ռուսաստանը այլևս միակ որոշողը չէ, իսկ Ադրբեջանը ձգտում է առավել ինքնիշխան դերակատարության հասնել:

Ինչպիսի զարգացումներ էլ որ տեղի ունենան, ակնհայտ է՝ Մոսկվա–Բաքու հարաբերությունները վերադարձ չունեն դեպի նախկին «եղբայրական» համատեքստ: Նոր դարաշրջանը՝ լարված, մրցակցային և բազմաբևեռ, արդեն սկսվել է: Վերջին ամիսներն էլ ցույց են տալիս, թե որքան փխրուն է Ռուսաստանի համար տարածաշրջանային խաղաղության ձևավորման մոդելը: Սրա վկայությունն է ադրբեջանական հռետորաբանության փոփոխությունը պետական և ոչ պետական մակարդակներում, այն է՝ պաշտոնական մեղադրանքներ՝ էթնիկ բռնությունների, տեղեկատվական պատերազմի, երկակի ստանդարտների դեմ: Իրական վտանգն այն է, որ սա ոչ միայն զուտ դիվանագիտական սկանդալ է, այլև կարող է լուրջ տարածաշրջանային և աշխարհաքաղաքական խնդիրների հանգեցնել:

Այս փուլում կողմերը կարծես շարժվում են դեպի մրցակցային, ոչ թե գործընկերային դաշտ: Եթե չձևավորվի նոր վստահության պլատֆորմ, ներկայիս լարվածությունը կարող է վերաճել անվտանգության համակարգերի բախման վտանգավոր փուլի: Հաջորդ փուլում, արդեն, կարող են հակամարտությանը նոր դերակատարներ ավելանալ, օրինակ, ի դեմս Թուրքիայի: Ակնհայտ է, որ Մոսկվան, այլևս ի տարբերություն 10 տարի առաջվա, ուղղակի «լա՛վ հարևան» չէ Բաքվի համար:

Հղում

1. Иванова А., Алиев: Россия должна признать вину в крушении самолета AZAL, 29.12.2024, https://www.dw.com/ru/aliev-rossia-dolzna-priznat-vinu-v-krusenii-samoleta-azal/a-71180152,(д/в. 16.07.2025).
2. Official sources: Russian investigators suggest Pantsir-S1 missile downed Azerbaijan Airlines flight, 24.01.2025, https://www.euronews.com/2025/01/24/official-sources-russian-investigators-suggest-pantsir-s1-missile-downed-azerbaijan-airlin, (Acc. 16.07.2025).
3. Guliyev A., Azerbaijani journalist accuses Russian authorities of torture, cover-up in Yekaterinburg deaths, 01.07.2025, https://caliber.az/en/post/azerbaijani-journalist-accuses-russian-authorities-of-torture-cover-up-in-yekaterinburg-deaths?utm_source=chatgpt.com, (Acc. 16.07.2025).
4. Azerbaijan arrests journalists at Russian state outlet as tensions with Moscow rise, 30.06.2025, https://www.reuters.com/world/kremlin-condemns-azerbaijans-move-cancel-russian-cultural-events-following-2025-06-30/?utm_source=chatgpt.com, (Acc. 16.07.2025).
5. Баку предупредил Москву о недопустимости оскорблений в адрес Алиева, 09.01.2025, https://www.rbc.ru/politics/09/01/2025/677fe8009a79478262fdfca7, (д/в. 16.07.2025).
6. Peskov regrets the anti-Russian measures taken by Azerbaijan, 30.06.2025, https://eadaily.com/en/news/2025/06/30/peskov-regrets-the-anti-russian-measures-taken-by-azerbaijan, (Acc. 16.07.2025).
7. Смерть при задержании и агенты ФСБ: как конфликт Азербайджана и России связан с геополитикой, 01.07.2025, https://www.bbc.com/russian/articles/cly882jn768o, (д/в. 16.07.2025).
8. Захарова об отношениях с Баку: Вопросы необходимо решать в партнерском ключе, 07.09.2025, (Acc. 16.07.2025).
9. Главный телеканал Азербайджана обвинил и пригрозил Москве и лично Путину, 08.07.2025, https://tolishmedia.com/2025/07/60468, (Acc. 16.07.2025).

Իրան-Իսրայել 12-օրյա հակամարտությունը և Ադրբեջանի հնարավոր ներգրավվածությունը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2025 թ. հունիսի 13-ին Իսրայելը սկսեց «Առյուծի վերելք» (Rising Lion) ռազմական գործողությունը՝ ուղղված Իրանի միջուկային և ռազմական ենթակառուցվածքների դեմ: Իսրայելի օդուժը, օգտագործելով F-35 կործանիչներ և անօդաչու թռչող սարքեր, հարվածներ հասցրեց Նաթանզի, Ֆորդոյի և Բուշեհրի միջուկային օբյեկտներին, ինչպես նաև Համադանի ռազմաբազային: Պատերազմի հրահրման Իսրայելի նպատակներից էր խաթարել Իրանի միջուկային ծրագիրը, որը, Իսրայելի պնդմամբ, մոտ էր ռազմական կիրառման համար անհրաժեշտ մակարդակին: Իսրայելի վարչապետը հայտարարել էր, թե գործողությունը «պաշտպանական» էր՝ կանխելու Իրանի կողմից միջուկային սպառնալիքը: Բայցևայնպես ակնհայտ էր, որ Իսրայելի համար ԻԻՀ վրա հարձակվելու, թերևս, բարենպաստ ժամանակն էր ընտրված:

Իրանն արագ արձագանքեց՝ հակադարձելով «Խիստ պատիժ» գործողությամբ: Իրանի պատասխան հարվածներին (ավելի քան 550 բալիստիկ հրթիռ և 1000 պայթուցիկ ԱԹՍ) դիմակայելու համար Իսրայելն օգտագործել է իր բազմաշերտ հակահրթիռային պաշտպանության համակարգը[1]:

Իրանը թիրախավորել էր Իսրայելի ռազմական օբյեկտները, ներառյալ Թել Ավիվի մերձակայքում գտնվող ռազմաբազան և «Arrow» հակահրթիռային պաշտպանության համակարգի կայանները: Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ գործողությունները «պաշտպանական» էին և նպատակ ունեին «պատժել ագրեսորին»: Պատերազմը զգալի կորուստներ պատճառեց երկու կողմերին էլ: Զոհերի թիվը տարբեր աղբյուրներում հակասական են՝ պայմանավորված ռազմական գրաքննությամբ, քարոզչությամբ և տեղեկատվության սահմանափակ հասանելիությամբ: Օրինակ՝ Իրանի պաշտոնական աղբյուրները հակված են ընդգծելու քաղաքացիական զոհերի թիվը, մինչդեռ Իսրայելը պնդում է, որ իր հարվածները եղել են ճշգրիտ և ուղղված ռազմական թիրախներին:

Ըստ ԱՄՆ-ում գործող Human Rights Activists in Iran (HRANA) կազմակերպության՝ Իսրայելի հարվածների հետևանքով մինչև 2025 թ. հունիսի 24-ը զոհվել է 974 մարդ, այդ թվում՝ 268 ռազմական անձնակազմի անդամ, 387 քաղաքացիական անձինք և 319 չճանաչված անձինք: Վիրավորների թիվը կազմել է ավելի քան 3000: Իսկ Իրանի առողջապահության նախարարության հաշվետվությունների համաձայն՝ զոհվել է 610-ից մինչև 1060 մարդ, որոնց մեծ մասը քաղաքացիական անձինք են (ավելի քան 90%): Վիրավորների թիվը տատանվում է 2500-ից մինչև 4700:

Իսրայելի պաշտոնական տվյալների համաձայն՝ Իրանի հրթիռային և ԱԹՍ հարձակումների հետևանքով զոհվել է 28-30 մարդ, որոնք գրեթե բոլորը քաղաքացիական անձինք են (մեկ զինվոր զոհվել է Բեեր Շևայում, ևս յոթ զինվոր վիրավորվել է): Վիրավորների թիվը կազմում է ավելի քան 3238 մարդ[2]:

Պատերազմը ներքաշեց այլ խաղացողների ևս, մասնավորապես, Եմենի հութիները հարձակումներ իրականացրին Իսրայելի ռազմական նավերի վրա Կարմիր ծովում: ԱՄՆ-ն, աջակցելով Իսրայելին, լրացուցիչ ռազմական ուժեր տեղակայեց Պարսից ծոցում: Թուրքիան, չնայած Իսրայելի հետ լարված հարաբերություններին, չեզոք դիրքորոշում որդեգրեց, սակայն Ադրբեջանը, լինելով Իսրայելի ռազմավարական դաշնակիցը և Իրանի հարևանը, հայտնվեց բարդ դիվանագիտական և անվտանգային իրավիճակում և մեղադրվեց Իսրայելին հետախուզական տվյալներ փոխանցելու մեջ, որոնք հիմնված էին Նախիջևանի վրայով իսրայելական անօդաչուների անցման մասին հաղորդումների վրա, որոնք նկատվել են 2025 թ. հունիսի 13-ին:

Գաղտնիք չէ, որ Ադրբեջանը Իսրայելի կարևոր դաշնակիցն է Հարավային Կովկասում: Ըստ Stockholm International Peace Research Institute-ի, 2016-2021 թվականներին Իսրայելն իրականացրել է Ադրբեջանի

զենքի ներմուծման մինչև 69%-ը, ներառյալ անօդաչու թռչող սարքերը, որոնք կիրառվել են 2020 թ. Արցախի դեմ պատերազմում[3]: Ադրբեջանը, իր հերթին, Իսրայելին մատակարարում է նավթ՝ ապահովելով նրա նավթի ներմուծման մինչև 65%-ը[4]: Այս կապերն Իրանում ընկալվում են որպես սպառնալիք:

Իրանի կողմից Ադրբեջանը բազմիցս մեղադրվել է Իսրայելին հետախուզական տվյալներ տրամադրելու և նրա տարածքը Իրանի դեմ գործողությունների համար օգտագործելու մեջ: Սրա վառ ապացույցներից է Իսրայելի ՄՈՍԱԴ-ի 8-րդ տնօրեն Դանի Յաթոմի՝ 2023 թ. հարցազրույցը, որտեղ այն հարցին, թե ինչ նշանակություն ունի Իսրայելի և Ադրբեջանի համագործակցությունն Իսրայելի ազգային անվտանգության համար, նա պատասխանում է, որ այդ հանգամանքը Իսրայելին տալիս է Իրանի դեմ գործելու բազմաթիվ հնարավորություններ՝ սկսած կործանիչների լիցքավորման համար ադրբեջանական օդանավակայանների օգտագործումից մինչև Իրանից հետախուզական տեղեկատվության հավաքման համար Ադրբեջանի տարածքի լիարժեք օգտագործումը[5]:

Իրանը պաշտոնապես չի հաստատել Ադրբեջանի տարածքի օգտագործումը, սակայն սոցիալական մեդիայում և որոշ լրատվամիջոցներում տարածվել են մեղադրանքներ, որ Ադրբեջանը «հաշվեհարդար է տեսնում» Իրանի հետ՝ թույլ տալով Իսրայելին օգտագործելու իր օդային տարածքը:

Հարկ է նշել, որ Իրանի դեմ իրականացված գործողություններում Ադրբեջանի ներգրավվածության հարցը բավականին զգայուն է ընկալվում Ադրբեջանում, ինչը փաստում է նաև այն հանգամանքը, որ այս թեմային անդրադարձավ անձամբ Ալիևի օգնական Հիքմեթ Հաջիևը, որը, մասնավորապես նշեց, որ. «*վերջին շրջանում որոշ լրատվամիջոցներ և սոցիալական ցանցերի էջեր տարածում են ամբողջովին անհիմն և կեղծ պնդումներ այն մասին, թե իբր Ադրբեջանը իսրայելական կողմի հանձնարարությամբ հավաքագրել է էթնիկ ադրբեջանցիների որպես գործակալների և ուղարկել Իրանի տարածք: Այս տեսակի անհեթեթ և երևակայական մեղադրանքները որևէ առնչություն չունեն իրականության հետ և ներկայացնում են բացահայտ ապատեղեկատվություն: Մենք կտրականապես հերքում ենք նման կեղծ լուրերն ու անհիմն մեղադրանքները*»[6]:

Ադրբեջանը պահպանել է չեզոք դիրքորոշում՝ հայտարարելով, որ իր տարածքը չի օգտագործվի երրորդ կողմերի դեմ գործողությունների համար: Այս դիրքորոշումն արտացոլվել է արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի 2025 թ. հունիսի 14-ի հայտարարություններում, երբ նա զանգահարել է իր իրանցի գործընկեր Աբբաս Արաղչիին՝ վստահեցնելու, որ Ադրբեջանը չի թույլատրում իր տարածքի օգտագործումը որևէ երրորդ կողմի դեմ[7]: Այս հայտարարությունները ցույց են տալիս Ադրբեջանի փորձը՝ խուսափելու ուղղակի առճակատումից:

Իրանի նախկին դեսպանը Ադրբեջանում՝ Սեյեդ Աբբաս Մուսավին, Իսրայելի կողմից Ադրբեջանի օդային տարածքի օգտագործման մասին ասել է. «Իմ ծանոթությունը նրանց հետ ցույց է տալիս, որ նրանք չունեն այնքան խիզախություն, որ նման դավադրություններ կազմակերպեն՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն Իրանի Իսլամական Հանրապետության դեմ: Նրանք տեսել են Քաթարում ԱՄՆ-ի ռազմաբազայի ճակատագիրը: Իրանը չի կատակում ազգային անվտանգության հարցում: Եթե այս մեղադրանքները հաստատվեն, դա կարող է համապատասխան ժամանակին և վայրում հետևանքներ ունենալ նրանց համար»[8]:

Իրանի դեսպանը Հայաստանում՝ Մեհդի Սոբհանին, նույնպես խոսել է Իսրայելի կողմից Ադրբեջանի օդային տարածքի հնարավոր օգտագործման մասին՝ առաջացնելով Ադրբեջանի արտգործնախարարության կոշտ արձագանքը: Ադրբեջանի արտգործնախարարությունը Սոբհանիի հայտարարությունները որակել է «սադրիչ» և «անհիմն»՝ ընդգծելով, որ նման մեղադրանքները վնասում են երկու երկրների միջև փոխադարձ հարգանքի և տարածքային ամբողջականության վրա հիմնված հարաբերություններին[9]:



Այս ամենի ֆոնին բավականին հետաքրքիր էր ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանի հուլիսի 4-ի այցը Ստեփանակերտ՝ Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO) 17-րդ գագաթնաժողովին մասնակցելու համար: Այս այցը, որը նրա առաջին արտասահմանյան այցն էր Իրան-Իսրայել հակամարտությունից հետո, կրում էր խորհրդանշական և ռազմավարական նշանակություն, չնայած այն ոչ միանշանակ ընկալվեց հասարակության տարբեր հատվածների կողմից:

Իրանի հասարակության զգալի մասը, մասնավորապես՝ իշխանամետ և պահպանողական խմբերը, դրական են ընդունել Փեզեշքիանի այցը Ստեփանակերտ՝ այն դիտարկելով որպես Իրանի ազգային շահերի պաշտպանության խորհրդանշական քայլ: Փեզեշքիանի այցը Ստեփանակերտ ընկալվել է որպես ազդանշան Ադրբեջանին և Իսրայելին, որ Իրանը չի հանդուրժի իր սահմանների մոտ թշնամական գործողություններ:

Հասարակության մի մասի մոտ էլ այս այցը ոչ միայն քննադատության մեծ ալիք է բարձրացրել, այլ նաև մեծ հակազդեցություն է առաջացրել իրանական հասարակական և քաղաքական շրջանակներում՝ ընդհուպ մինչև այն, որ սոցիալական ցանցերի պարսկալեզու տիրույթում շրջանառվում են «քաղաքական սնանկություն» հեշթեգով գրառումներ՝ պահանջելով նախագահի պաշտոնանկության գործընթացի մեկնարկ և նրա հեռացում[10]:

Այսպիսով, Իրան-Իսրայել պատերազմը Ադրբեջանին դրել է բարդ ընտրության առջև: Չնայած Իսրայելի հետ ռազմավարական կապերին, Ադրբեջանը փորձել է խուսափել ուղղակի ներգրավվածությունից՝ պահպանելով չեզոքություն: Սակայն Իրանի մեղադրանքները և սահմանային լարվածությունը խորացրել են երկու երկրների միջև անվստահությունը: Պատերազմը նաև ընդգծել է Ադրբեջանի էներգետիկ ենթակառուցվածքների խոցելիությունը և տարածաշրջանային կայունության կարևորությունը: Իրանի կողմից հնարավոր հակահարվածները կարող էին թիրախավորել Ադրբեջանի էներգետիկ օբյեկտները, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (BTC) խողովակաշարը և Southern Gas Corridor-ը, որոնք կարևոր են Եվրոպայի էներգետիկ մատակարարումների համար: Ի պատասխան՝ Ադրբեջանը 2025 թ. հունիսի 15-ին ամրապնդել է այս օբյեկտների պաշտպանությունը՝ ներառյալ ռազմական ներկայության ուժեղացումը խողովակաշարերի երկայնքով[11]: Ուստի, Ադրբեջանը կանգնած է դիվանագիտական մարտահրավերների առջև՝ հաշվի առնելով Իրանի հետ հարաբերությունները և Իսրայելի հետ ռազմավարական գործընկերությունը:

Հղումներ

1 https://www.youtube.com/watch?v=px72QB_Sr1E
2 https://www.timesofisrael.com/the-israel-iran-war-by-the-numbers-after-12-days-of-fighting/
3 https://www.sipri.org/commentary/topical-backgrounder/2021/arms-transfers-conflict-zones-case-nagorno-karabakh
4 https://blankspot.se/israels-arms-export-lacks-morality/
5 https://t.me/caspian_frontiers/202
6 https://x.com/HikmetHajiyev/status/1933548695682687159
7 https://www.eghtesadonline.com/fa/news/2066324/
8 https://iranwire.com/fa/features/142984-%D8%B3%D9%81%D8%B1-%D9%BE%D8%B2%D8%B4%DA%A9%DB%8C%D8%A7%D9%86-%D8%A8%D9%87-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AF%D8%B1-%D8%B3%D8%A7%DB%8C%D9%87-%D8%A7%D8%AF%D8%B9%D8%A7%D9%87%D8%A7%DB%8C-%D8%AD%D9%85%D9%84%D9%87-%D8%A7%D8%B3%D8%B1%D8%A7%DB%8C%DB%8C%D9%84-%D8%A7%D8%B2-%D8%AE%D8%A7%DA%A9-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86/
9 https://x.com/CaucasusNew/status/1939600980481282501
10 https://t.me/vardan_voskanyan/1330
11 https://www.israelhayom.com/2025/06/25/the-impact-of-the-israel-iran-war-on-azerbaijan/

Այսօրուան մեր խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է համահայկական զօրաշարժ

Յովսէփ Տէր Գէորգեան
ՀՅԴ Բիւրոյի անդամ

Յարգելի՛ ներկաներ, սիրելի՛ երիտասարդ ընկերներ, սիրելի ընկերներ

Հ.Յ.Դ. երիտասարդական-ուսանողական 12-րդ համահայկական այս բանակումը տեղի կունենայ համաշխարհային տագնապներու, միջազգային եւ տարածաշրջանային ահագնացող հակամարտութիւններու պայմաններուն մէջ:

Առաւել եւս, այս բանակումը տեղի կ'ունենայ տարբեր երկիրներու պատուհասած տեղական քաղաքական տնտեսական, ռազմական սուր իրադարձութիւններու, մանաւանդ Արցախի ժամանակաւոր կորուստի, եւ Հայաստանի իշխանութեան կողմէ հայոց եկեղեցւոյ, ընդդիմութեան եւ մասնաւորապէս ՀՅԴ-ի դէմ հալածանքի օրերուն:

Այո, ճիշդ այս պայմաններու մէջ, 17 երկիրներէ մասնակցող 400 երիտասարդներ համախմբուած են այսօր այստեղ, անգամ մը եւս թիավարելու հոսանքն ի վեր, յանուն Հայաստանի ազգային պետականութեան կերտման, յանուն «*Ազատութիւն կամ Մահ*» դաշնակցական գաղափարին:

Հակառակ անոր որ միջազգային ընտանիքը, մեր թշնամիներն ու Հայաստանի իշխանութիւնները կ'ուզեն փակել Արցախի էջը. «*Պիտի վերադառնանք*» կարգախօսով այս բանակումով դաշնակցական երիտասարդութիւնը անգամ մը եւս կը հաստատէ որ պիտի չհրաժարի Արցախի ազատագրական պայքարէն:

Հակառակ անոր որ ներկայիս պառակտուած է հայութիւնը եւ աշխատանք կը տարուի Հայաստանը

Սփիւռքէն հեռացնելու. այս բանակումով, ՀՅԴ երիտասարդութիւնը օրինակը կու տայ համահայկական համախմբուածութեան, եւ Սփիւռքէն մեծ թիւերով Հայաստան գալով կ'ամրապնդէ Հայաստան-Սփիւռք կապը:

Հակառակ անոր որ յուսալքուած եւ հոգեպէս ընկրկած է հայ ժողովուրդի ստուար հատուած մը, այս բանակումը կը միաւորէ ՀՅԴ մարտունակ երիտասարդութիւնը. Նայեցէ՛ք անոնց աչքերուն մէջ, հոն պիտի տեսնէք համարձակութիւն, բոցավառող պայքարի ոգի ու յաղթանակի կամք:

Հակառակ անոր որ մեր թշնամիներու եւ անոնց կամակատար իշխանութիւններու կողմէ թիրախաւորած է դաշնակցական երիտասարդութիւնը. հարիւրաւոր դաշնակցական երիտասարդներ աշխարհի տարբեր անկիւններէն եկած են հայրենիք թիկունք կանգնելու իրենց ընկերներուն:

Հակառակ անոր որ կը փորձուի ՀՅԴ երիտասարդականը ներկայացնել որպէս ահաբեկչական կազմակերպութիւն, մեր գործունէութիւնը կը փաստէ որ Դաշնակցական երիտասարդութիւնը կը ձգտի իր տեսլականները իրականացնել նորարարական եւ յառաջադիմական ծրագիրներով: Միեւնոյն ատեն, մենք կը մնանք կառչած մեր գաղափարական հիմնասիւներուն, ի մասնաւորի ազգային եւ յեղափոխական նկարագրին:

Սիրելի՛ ներկաներ, այսօրուան մեր խնդիրները այնքան բարդ են, որ լուծելու համար անհրաժեշտ է համահայկական զօրաշարժ, համահայկական ուժ: Այս համահայկական բանակումը, որուն կը մասնակցին, ինչպէս ըսինք, 17 երկիրներէ 400 երիտասարդներ, վառ օրինակ մըն է այդ համահայկական տարողութեամբ անհրաժեշտ շարժումին:

Այսօր կը փորձուի հայութիւնը վերածել հլու հնազանդ, թրքացման ծրագիրը հանդուրժելու պատրաստ հաւաքականութեան. այս բանակումը տրամագծօրէն հակառակ տրամաբանութեան արգասիքն է՝ արդարեւ համահայկական այս բանակումը մեր հաւատացած համահայկական՝ ազգ բանակի խտապատկերն է, այս տարածաշրջանին մէջ գոյատեւելու, մեր իրաւունքներուն վերատիրանալու եւ զարգանալու միակ տարբերակը:

Սիրելի՛ երիտասարդ ընկերներ, դար մը ու տասնամեակներէ ի վեր Դաշնակցութիւնը իր երիտասարդ անդամներով իր գաղափարական հանգանակը շարունակեց կատարելագործել. դո՛ւք էք, որ տէր պիտի կանգնիք այս դաւանանքին եւ այս անգնահատելի ժառանգութեամբ հայ մարդու ինքնութեան ձեւաւորման առաքելութեանը պիտի ծառայէք:

- Ինչպէս միշտ պիտի շարունակէք Հայրենիքի ու Սփիւռքի մէջ ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային, կրթական, յարաբերական ոլորտներու մէջ առաջնագծի վրայ մնալ:

- Ինչպէս միշտ պիտի չազդուի՛ք մոլորեցնող ազդակներէ, ընդհակառակը՝ անոնք առաւել պիտի ամրապնդեն ձեր սկզբունքները եւ զօրացնեն ձեր կամքը:

- Ինչպէս միշտ ձեր նորարար միտքերով, ձեր մարտունակ ոգիով, ձեր անպարագիծ աշխարհահայեացքով ուժ ու կորով պիտի ներշնչէք շրջապատին:

Կեցցէ՛ Հայութիւնը, Կեցցէ՛ մեր հայրենիքը, կեցցէ հայոց պետականութիւնը եւ յանձնառու հայ երիտասարդութիւնը:

Ելոյթ Հ.Յ.Դ. երիտասարդական եւ ուսանողական 12-րդ համահայկական բանակումի պաշտոնական բացման ժամանակ. 15.07. 2025 թ.

Ո՞վ է դաշնակցական երիտասարդը

Սարգիս Մկրտչեան
Ընկերաբան, պատմական գիտութիւնների թեկնածու

Սիրելի՛ ընկերներ

Հ.Յ.Դաշնակցութեան համահայկական երիտասարդական 12-րդ բանակումը իրականացուում է Հայաստանի, հայութեան եւ Դաշնակցութեան համար իրօք բացառիկ պայմաններում:

Ցաւով ենք արձանագրում այս հաստատումը, որովհետեւ կարող էր բոլորովին այլ ընթացք ունենալ մեր երկրի ու մեր ազգի ճակատագիրը: Կարող էր դրական լինել, լուսաւոր լինել, վառ գոյներով լինել, բայց այդպէս չէ:

Այդպէս չէ, որովհետեւ 2018 թուականին Հայաստանում իշխանութեան բերուեցին գլոբալիստական ապազգային ուժեր, որոնց համար հայրենիքի ու ազգի գաղափարները խորթ են: Նրանք հայեցի եւ ազգային դաստիարակութիւն չեն ստացել: Նրանց համար հայրենիքը ընդամէնը բնակութեան տարածք է, իսկ ազգը ընդհանրապէս անհասկանալի եւ ժամանակավրէպ երեւոյթ: Կարեւորը քաղաքացին է, որը կարող է այս կամ այլ երկրի քաղաքացի լինել, թէկուզեւ թշնամի երկրի, որը ամէն պահի նախապատրաստուում է քեզ ոչնչացել: Այդ քաղաքացին է կարեւորը եւ ոչ թէ ազգը, իր ընդհանրութեան մէջ, հազարամեակներով անցած իր ուղով, իր ինքնութեամբ, մշակոյթով, լեզուով, գիտակցութեամբ ու այն բնապատմական միջավայրով, որտեղ կերտել է իր պատմութիւնը եւ որը կոչւում է հայրենիք:

Այսօր, Հայաստանի Հանրապետութեան բանտերում են մեր դաշնակցական ընկերներից մի քանիսը: Նրանց շարքում Հ.Յ.Դաշնակցութեան Հայաստանի Երիտասարդական միութեան անդամներից երկուսը: Նրանք, ովքեր հիմա այս բանակումում ներկայ պիտի լինէին, Հայաստանի, այսինքն, մեր հայրենիքի բանտերում են:

Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ ընկեր Դաւիթ Իշխանեանը Ադրբեջանի, այսինքն Հայաստանի ու հայութեան թշնամի երկրի, բանտում է:

Ինչ կապ կայ այս երկուսի միջեւ, ինչո՞ւ են դաշնակցականները Հայաստանի եւ Ադրբեջանի բանտերում: Ինչո՞ւ են դաշնակցականները հալածանքի ենթարկուում Թուրքիայի, Ադրբեջանի եւ նաեւ Հայաստանի իշխանութեան կողմից: Այս հարցերի պատասխաններն ուղիղ կապ ունեն այսօրուայ մեր դասախօսութեան թեմայի հետ:

Դասախօսութեան թեման է՝ «Ո՞վ է դաշնակցական երիտասարդը»: Պատասխանենք՝ դաշնակցական երիտասարդն այն երիտասարդն է, ով պաշտպանում է իր ազգի ու հայրենիքի շահերը: Պաշտպանում է հայոց պետականութիւնը եւ ամէն ջանք գործադրում է, որպէսզի հայոց պետականութիւնը հզօրանայ: Պայքարում է անարդարութեան դէմ եւ արդարութեան հաստատման ուղղութեամբ: Այդ անարդարութիւնը

կարող է լինել անհատի մակարդակի վրայ, կարող է լինել ազգային կամ միջազգային մակարդակի վրայ: Դաշնակցական երիտասարդը պայքարում է յանուն արդարութեան հաստատման:

Մեր բանտարկուած ընկերները պայքարել են Հայաստանի ու հայութեան իրաւունքների ու շահերի պաշտպանութեան, հայոց պետականութեան անվտանգութեան ու հզօրացման եւ երկրում արդարութեան հաստատման ուղղութեամբ:

Եւ տրամաբանական հարց է առաջանում, իսկ մի՞թէ Հայաստանի իշխանութիւնը, որի ձեռքում է Հայաստանի պետականութեան ղեկը, չի պաշտպանում Հայաստանի ու հայութեան շահերն ու իրաւունքները:

Անցնող 7 տարիների պատմութիւնն ու փորձը ցոյց են տալիս, որ ո՛չ, չի պաշտպանում:

Եւ որովհետեւ չի պաշտպանում, հայութիւնը կորցրեց իր հայրենիքի մի մասը՝ Արցախը, որտեղ հազարամեակներ շարունակ ապրել են հայերը եւ կերտել են իրենց պատմութիւնը, մշակոյթն ու ինքնութիւնը:

Եւ որովհետեւ չի պաշտպանում, Հայաստանն ու հայութիւնը կորցրեցին Տաւուշից հատուածներ, Վայոց Ձորից հատուածներ, Սիւնիքից հատուածներ:

Եւ որովհետեւ չի պաշտպանում, Հայաստանի բանտերում են յայտնուում Հայաստանի ու հայութեան իրաւունքները պաշտպանող մարդիկ եւ այդ մարդկանց շարքում՝ մեր դաշնակցական ընկերները:

Այս շարքը կարելի է շարունակել:

Ուրեմն՝ ո՞վ է դաշնակցական երիտասարդը: Դաշնակցական երիտասարդը արդարութեան համար պայքարող երիտասարդն է: Դաշնակցական երիտա-

սարդը ազգի շահերն ու իրաւունքները պաշտպանող երիտասարդն է: Դաշնակցական երիտասարդը ազգի ոտնահարուած իրաւունքների ձեռքբերման ուղղութեամբ պայքարող երիտասարդն է: Դաշնակցական երիտասարդը հայոց պետականութեան հզօրացման համար ամէն ջանք գործադրող երիտասարդն է: Դաշնակցական երիտասարդը այն երիտասարդն է, ով ձգտում է Հայաստանը դարձնել աշխարհի ամենազարգացած ու ամենաանվտանգ երկրներից մէկը:

Դաշնակցական երիտասարդը ոչ միայն Դաշնակցութեան ֆիզիքական շարունակականութեան երաշխաւորն է, այլև գաղափարական: Հետեւաբար դաշնակցական երիտասարդը գաղափարական երիտասարդ է, քաղաքական երիտասարդ է, համոզումներ ունի, իւրատեսակ աշխարհայեացք ունի, արժէքային յատուկ համակարգի տէր է, հաւատում է ժողովրդավարութեանը, հաւատում է ընկերվարութեանը, հաւատում է մարդու իրաւունքներին, եւ չի վարանում յեղափոխական պայքարից, երբ դրա անհրաժեշտութիւնը լինի:

Այս ամբողջը, այսինքն արդարութեան հաստատումը, Հայաստանի ու հայութեան իրաւունքների պաշտպանութիւնն ու ոտնահարուած իրաւունքների ձեռքբերումը, Հայաստանը գերզարգացած ու անվտանգ երկիր դարձնելը՝ կը մնան ցանկութիւնների ծիրում, եթէ չլինի յստակ նպատակ, այդ նպատակին հասնելու յստակ ու մանրամասն ծրագիր, կազմակերպուած աշխատանք, հետեւողականութիւն, կարգապահութիւն, զարգացուածութիւն, խիզախութիւն, քննադատական միտք, նուիրուածութիւն եւ յեղափոխական ոգի:

Սրանք ի՞նչ են նշանակում: Արդեօք սոսկ բառեր են, որ հէնց այնպէս գործ ենք ածում, թէ՞ իմաստ ունեն եւ յատուկ նպատակով ենք գործածում:

Սիրելի՛ ընկերներ,

Դուք, որպէս դաշնակցական երիտասարդներ, պէտք է մտածէք, թէ ինչպէս էք տեսնում Հայաստանն ու Սփիւռքը սրանից 5 տարի յետոյ, 25 տարի յետոյ եւ 100 տարի յետոյ: Այսինքն ինչպէս էք պատկերացնում Հայաստանը եւ Սփիւռքը 2030 թուականին, 2050 թուականին եւ 2125 թուականին:

2030-ին եւ 2050-ին դուք ողջ կը լինէք եւ կը յիշէք այսօրուայ խօսքերը: 2125-ին դժուար եմ տեսնում մեզանից որեւէ մէկը ողջ լինի, բայց մենք պարտաւոր ենք մտածել մեր ապագայ սերունդների մասին:

Թերեւս այս իմ ասածը երեւակայական թուայ: Կարող է հարց տաք՝ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս մտածենք այն մասին, թէ սրանից մի քանի տասնամեակ կամ մէկ դար յետոյ ի՞նչ է լինելու, երբ դէպքերի այս ընթացքով, աշխարհաքաղաքական այս արագ զարգացումների պայմաններում, պարզ չէ, թէ վաղը ինչ է լինելու:

Ես համաձայն չեմ այս տեսակէտին, որովհետեւ դա նշանակում է լինել ազդուող եւ ոչ թէ ազդող, գործել օտարների օրակարգով եւ ոչ թէ թելադրել սեփական օրակարգը, ոչ թէ ծրագրուած աշխատել, այլ մնալ բախտի քմահաճոյքին:

Բերեմ մէկ օրինակ:

19-րդ դարի երկրորդ կէսին առաջացաւ պանթիւրքիզմը: Պանթիւրքիզմը քաղաքական եւ ազգայնամոլական շարժում է, որի նպատակը Բալկաններից մինչեւ Չինաստան ու Սիբիր թիւրքալեզու ցեղերի համախմբումն է մէկ ու միասնական անկախ պետութեան մէջ: Այդ գաղափարախօսութիւնը սկզբում շատ աղօտ, բայց աստիճանաբար յղկուեց, բիւրեղացաւ եւ դարձաւ Թուրքիայի, այն ժամանակ Օսմանեան կայսրութեան, յետոյ Թուրքիայի Հանրապետութեան, պետական պաշտօնական, բացայայտ կամ գաղտնի, գաղափարախօսութիւնը: Սկզբից մինչեւ հիմա այդ ծրագրի իրականացմանը խոչընդոտում է Հայաստանը: 150 տարի շարունակ թիւրքերը հետապնդել են պանթիւրքական գաղափարներ: Մշակել են ծրագիր եւ գործադրել են ըստ պայմանների: Երբ առիթը յարմար է եղել՝ գործադրել են Հայոց Ցեղասպանութիւնը: Յետոյ ժխտել են ցեղասպանութեան իրողութիւնը: Շրջափակման մէջ են պահել Հայաստանը: Գրաւել են Արցախը եւ դատարկել են հայութիւնից: Այսօր խօսում են Սիւնիքի մասին: Խօսում են Հայաստանում 300.000 ադրբեջանցու բնակութիւն հաստատելու մասին: Այսինքն խօսում են իրենց վաղեմի ու մեծ երազանքը իրականացնելու մասին: Եւ ոչ միայն խօսում են, այլեւ քայլ առ քայլ դա իրականացնում են:

Բերեմ երկրորդ օրինակը:

19-րդ դարի երկրորդ կէսին առաջացաւ սիոնիզմը: Քաղաքական եւ ազգայնամոլական մի գաղափարախօսութիւն, որի գլխաւոր նպատակը հրեաների համար երկիր ու պետութիւն ստեղծելն էր: 1948 թուականին կեանքի կոչուեց Իսրայէլ պետութիւնը: Այսինքն մօտ 100 տարի հրեաները պայքարեցին պետութիւն ստեղծելու համար եւ հասան իրենց նպատակին: Իսկ այդ օրուանից մինչեւ այսօր, այսինքն շուրջ 80 տարի, Իսրայէլը անընդհատ պատերազմների մէջ է իր հարեւան արաբական երկրների եւ Իրանի հետ՝ իր պետութիւնը պահպանելու հիմնաւորմամբ:

Այս երկու օրինակները ցոյց են տալիս, թէ ինչպէս կարելի է ունենալ գաղափար, մշակել ծրագիր եւ հետեւողականօրէն աշխատել այդ ծրագիրն իրականացնելու համար:

Ցաւօք, մենք այդ հարցում թոյլ ենք եղել:

Չկայ հայոց ազգային այն գաղափարախօսութիւնը, որը, անկախ բոլոր պայմաններից, հայերը հետեւողականօրէն ձգտում են իրականացնել:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, օրինակ, ձգտում է Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի կերտմանը: Ձգտում է Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչմանը եւ վնասից հատուցմանը: Ձգտում է Հայաստանում իրաւական, ժողովրդավարական եւ ընկերային արդարութեամբ պետութեան ստեղծմանը: Ձգտում է գերզարգացած երկիր կերտելուն: Ձգտում է Սփիւռքի ներուժը Հայաստանի հզօրացմանը ի նպաստ ծառայեցնելուն: Համոզուած է, որ կայ մէկ ազգ եւ մէկ հայրենիք: Համոզուած է, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեր ինքնութեան տարրերից մէկն է, որն ազգի համախմբան գործում անգնահատելի դեր ունի եւ որին պիտի պաշտպանել: Համոզուած է, որ հայ մարդն արժէք է, որի իրաւունքները պիտի պաշտպանուած լինեն ամէնուրէք, բայց մանաւանդ Հայաստանում:

Հայաստանի Հանրապետութեան այսօրուայ իշխանութիւնը այս ամբողջի ճիշտ հակառակն է մտածում: Նրանց համար Հայ Դատը, Արցախը, Սփիւռքը, Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ ազգային շատ ու շատ ուրիշ բաներ՝ որեւէ արժէք չեն ներկայացնում: Որովհետեւ, ինչպէս ամենասկզբում ասացի, նրանք գլոբալիստական ապազգային ուժեր են:

Ահա այդտեղ պէտք է փնտրել Հ.Յ.Դաշնակցութեան եւ Հ.Հ. այսօրուայ իշխանութեան գաղափարաքաղաքական տարակարծութեան հիմքերը:

Մենք պարտաւոր ենք ունենալ տեսլական եւ այդ տեսլականին հասնելու ծրագիր: Մենք պարտաւոր ենք ճիշտ գնահատել մեր եւ մեր թշնամիների կարողութիւնները, թոյլ ու ուժեղ կողմերը, ուժերի յարաբերակցութիւնը:

Ինչպիսի՞ն ենք ուզում լինի Հայաստանը սրանից հարիւր տարի յետոյ: Ինչպէ՞ս ենք տեսնում Սփիւռքի գաղթօջախները սրանից յիսուն կամ հարիւր տարի յետոյ: Դրան հասնելու համար ի՞նչ պիտի անել: Ո՞րն է հայ մարդու, այս պարագային դաշնակցական երիտասարդի դերը այդ ամբողջի մէջ:

Նշենք մի քանի յատկանիշ.

Առաջին՝ գաղափարապաշտութիւն եւ քաղաքական գիտակցութիւն: Դաշնակցական երիտասարդը պիտի լինի գաղափարականացած եւ քաղաքականացած: Պիտի գիտենայ Դաշնակցութեան Ծրագիրը: Պիտի տեղեակ լինի Դաշնակցութեան աշխարհայեացքին: Դաշնակցութիւնը ինչպէ՞ս է տեսնում հարցերը: Այս կամ այն հարցի կապակցութեամբ ինչու՞ է այսպէս մտածում: Ինչու՞ է այս նպատակը ճշտել: Ո՞րն է հիմքը: Մեր օրերին ի՞նչ է տեղի ունենում աշխարհում, մեր տարածաշրջանում, մեր երկրում: Ինչու՞: Որո՞նք են պատճառները: Այս ամբողջը անհրաժեշտ է, որպէսզի խորքային ճանաչողութիւն եւ մօտեցում ունենանք հարցերի կապակցութեամբ:

Երկրորդ՝ նպատակասլացութիւն: Իւրաքանչիւր մարդ, թէ՛ անձնական, թէ՛ հաւաքական կեանքում, պիտի ունենայ նպատակ: Ինչի՞ն է ուզում հասնել: Դա պիտի յստակ լինի: Եթէ դա չկայ, ուրեմն կընկնի կեանքի ալիքների գիրկը: Մի օր այս կողմից, մէկ ուրիշ օր այն կողմից, կը քշուի հոսանքի կողմից՝ առանց լուրջ բանի հասնելու: Հետեւաբար պիտի ճշտել յստակ նպատակ եւ քայլ առ քայլ ձգտել հասնելու այդ նպատակին:

Երրորդ՝ որակ: Մարդը պիտի բարձր որակ ունենայ այն բանում, ինչն իրեն հետաքրքրում է, որն իր կեանքի ասպարէզն է կամ մասնագիտութիւնը: Կիսատ-պռատ չպիտի լինի: Տուեալ ոլորտում մարդուն պիտի փնտրեն: Դաշնակցական երիտասարդը պիտի բազմակողմանիօրէն զարգացած լինի, լաւա-

պէս մի քանի օտար լեզու իմանայ, անընդհատ ինքնակրթութեամբ ու ինքնազարգացումով զբաղուի:

Չորրորդ՝ կազմակերպուածութիւն: Բազմաթիւ հայ հայրենասէր ու ազգասէր մարդիկ կան: Միայն դաշնակցականները չեն: Բայց դաշնակցականների տարբերութիւնը միւսներից այն է, որ կազմակերպուած են: Եւ սա է վախ պատճառում թշնամուն: Դաշնակցութիւնը կազմակերպութիւն է: Կազմակերպուածութիւնը խիստ կարեւոր է եւ անձնական կեանքում, եւ հաւաքական կեանքում:

Հինգերորդ՝ կարգապահութիւն եւ հետեւողականութիւն: Ցանկացած գործի յաջողութեան հիմքը կարգապահութիւնն է: Նպատակին հասնելը պիտի լինի ամէնօրեայ խնդիր: Ամէն օր պիտի աշխատել այդ ուղղութեամբ եւ ընդ որում՝ անվհատ: Որովհետեւ կեանքում հազար ու մի անկանխատեսելի բաներ կարող են պատահել, որոնք կարող են մարդուն շեղել նպատակին հասնելու ճանապարհից: Անվհատ կերպով եւ ամենայն կարգապահութեամբ պիտի հետեւողականութիւն ցուցաբերել նպատակին հասնելու համար:

Վեցերորդ՝ յանձնառութիւն: Դաշնակցական երիտասարդը յանձնառու երիտասարդ է: Յանձնառու իր անձի նկատմամբ, իր ընտանիքի նկատմամբ, իր ազգի ու պետութեան նկատմամբ: Անպատասխանատու մարդը որեւէ բանի պիտանի չէ: Պատասխանատուութեան գիտակցութիւն պիտի ունենալ շրջապատի նկատմամբ:

Եօթերորդ՝ յեղափոխականութիւն: Դաշնակցական երիտասարդը պիտի յեղափոխական նկարագիր ունենայ: Մարտունակ լինի: Յեղափոխութիւն ոչ միայն դասական իմաստով, այլ նաեւ յեղափոխութիւն մտքերի ու արժէքների հարցում: Պիտի պայքարել քարացած մտքերի ու կարծրատիպերի, հաշտուողականութեան ու յարմարուողականութեան դէմ:

Ութերորդ՝ քննադատական միտք: Դաշնակցութեանը կոյր հետեւորդներ պէտք չեն, այլ քննադատական միտք ունեցող երիտասարդներ: Երիտասարդներ, ովքեր հալած իւղի պէս չեն ընդունում ամէն բան եւ մտածելու ու վերլուծելու կարողութիւն ունեն: Երիտասարդներ, ովքեր կարող են նոր միտք, նոր գաղափար, նոր գործելաոճ բերել Դաշնակցութիւն: Նորարարական միտքը կարեւոր է պայքարի շարունակականութիւնը ապահովելու եւ յաջողութեան համար:

Ինսներորդ՝ պետականասիրութիւն: Պետութիւնը ժողովրդի քաղաքական կազմակերպուածութեան բարձրագոյն մակարդակն է: Պետութիւնն է, որ երաշխաւորում է ազգի անվտանգութիւնը, պաշտպանում է իր քաղաքացիների իրաւունքը, ապահովում է երկրի զարգացումը: Մենք դարեր շարունակ պետութիւն չենք ունեցել, իսկ 1991 թուականից, ի դէմս վերանկախացած Հայաստանի, արդէն 34 տարի է ինչ ունենք պետութիւն: Ինչքան պետութիւնը հզօր լինի՝ այդքան պաշտպանուած կը լինի քաղաքացին: Մեր պարագայի՝ ինչքան հայոց պետութիւնը հզօր լինի՝ այդքան պաշտպանուած կը լինի հայ մարդը: Հետեւաբար պետութեան հզօրութեանը նպաստելը իւրաքանչիւր հայ մարդու, իւրաքանչիւր դաշնակցական երիտասարդի պարտականութիւնն է:

Սիրելի՛ ընկերներ

34 տարի է անցել Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումից: Այսօր Հայաստանը կանգնած է բազմաթիւ մարտահրաւէրների առջեւ: Բազմաթիւ մարտահրաւէրների առջեւ է կանգնած նաեւ Սփիւռքը: Մտածել, որ կը գայ այն օրը, երբ մարտահրաւէր չենք ունենայ՝ սխալ է: Մարտահրաւէրները կը շատանան կամ կը պակսեն, բայց չեն վերանայ: Այստեղից էլ «Յարատեւ կռուի» գաղափարը: Մեր պայքարը անվերջ է եւ հետեւաբար պիտի ամենայն համբերատարութեամբ, աննկուն կամքով, ամէնօրեայ աշխատանքով դիմագրաւել այդ մարտահրաւէրները՝ յանուն Հայաստանի ու հայութեան վառ ապագայի, յանուն հզօր երկիր ու պետութիւն եւ հզօր Սփիւռք ունենալու:

Ելոյթ Հ.Յ.Դ. Երիտասարդական-ուսանողական 12-րդ համահայկական բանակումի ժամանակ
Հանքաւան 16 Յուլիս, 2025 թ.

Միսաք Թոռոլաքյանը ազգային-ազատագրական պայքարի գործիչ և վրիժառու (մաս երկրորդ)

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Ռուսական զորքի՝ Տրապիզոն մտնելուց երկու շաբաթ առաջ նահանգապետ Ջեմալ Ազմին 1916 թ. ապրիլի 3-ի հրամանագրով ստեղծում է առժամյա մի կառավարություն՝ հույների մետրոպոլիտ Խրիսանթոսի գլխավորությամբ: Կառավարության անդամներն էին ժանդարմերիայի պետը, ոստիկանապետը, հույն մեծահարուստներ Յորգիոս Ֆոստիրոպուլոսը, Փարասքևա Կրամատիկոպուլոսը և Եորգիոս Գոնգալիտիսը: Այս կառավարությունը նահանգապետի հեռանալուց հետո պետք է պահպաներ քաղաքի կարգ ու կանոնը՝ մինչև ռուսական զորքերի մուտքը քաղաք: Ջեմալ Ազմին, սակայն, քաղաքից հեռանում է զորքերի մուտքից երկու օր առաջ՝ պաշտոնապես իշխանությունը հանձնելով մետրոպոլիտին հետևյալ արտահայտությամբ. «Այս երկիրը ձեզմէ առած ենք, ձեզի կը վերադարձնենք»[1]:

Տրապիզոնը գրավելուց հետո Ռուսական զորքերի հրամանատար Լյախովը վերահաստատում է այս կառավարության կազմն իր պարտականությունների մեջ: Որոշումն ուժի մեջ է մնում մինչև 1918 թ. փետրվարի սկիզբը, երբ Տրապիզոնը նորից հայտնվում է թուրքերի տիրապետության տակ:

Բացի Հայ Առաքելական Եկեղեցու համայնքի գույքից և ունեցվածքից՝ առանց վերահսկողության էին մնացել նաև քաղաքի հայ կաթոլիկների եկեղեցին, համայնքի ողջ գույքը և կրթամշակութային հաստատությունները, որոնք զորավար Լյախովի թույլտվությամբ հանձնվեցին Ռուսաստանի հայ կաթոլիկների ներկայացուցիչ Թիմոթեոս Գուլյան քահանայի տնօրինությանը[2]:

Հայկական կոմիտեն իր գործունեության ընթացքում կատարում է զգալի աշխատանք. հաշվառում է հայերի անտեր մնացած ողջ գույքը՝ տներ, դպրոցներ, խանութներ և այլ շինություններ, որոնք հիմնականում թալանվել էին թուրքական իշխանությունների և ամբոխի կողմից: Փրկված գույքն անցնում է կոմիտեի տնօրինությանը[3]:

Հատկապես նշելի են Կոմիտեի՝ հայ որբերին հայտնաբերելու, հավաքելու և հարազատներին վերադարձնելու կամ Բաթումի որբանոցում տեղավորելու աշխատանքները: Հայերի նկատմամբ բարյացակամ տրամադրված զորավար Լյախովի առաջին հրամանագրերից մեկը պարտավորեցնում էր, որ «… անոնք որոնք հայ երեխաներ, կիներ ունին իրենց մօտ, ութ օրուան ընթացքին պէտք է յանձնեն Հայկական Կոմիտէին, հակառակ պարագային զանցառուները ծանրագոյն պատժի պիտի ենթարկուին»[4]:

Տեղահանությունից և կոտորածներից փրկված հայերի թիվը թեև մեծ չէր, սակայն նրանց տարածման

ավազանը բավականին ընդարձակ էր, որը պայմանավորված էր տարբեր հանգամանքներով և ներկայացնում էր հետևյալ պատկերը.

ա. Թուրքերի և այլ մահմեդականների տներում պահվող մանկահասակ երեխաներ, աղջիկներ և կանայք,

բ. բռնի կամ «կամավոր» իսլամացված հայեր, որոնց մի մասն աքսորվեց, իսկ մոտ 5 տոկոսը (բժիշկներ, արհեստավորներ, հատկապես դարբիններ և զինագործներ) փրկվեց՝ իշխանությունների հաշվառմամբ և խիստ վերահսկողությամբ բնակեցվելով մահմեդականների բնակավայրերում,

գ. այստեղ-այնտեղ մի կերպ գոյությունը քարշ տվող որբեր,

դ. տեղահանությունից խույս տված նոր, դասալիք զինվորներ, տեղահանվածների քարավաններից մի կերպ փախածներ, որոնք ապաստան էին գտել լեռներում և անտառներում, և որոնցից կազմվեցին ինքնապաշտպանական խմբեր,

ե. հատկապես ազգությամբ հույն, մասամբ թուրք ծանոթների և հարևանների մոտ թաքնվածներ:

Սրանք այն հիմնական խմբերն էին, որոնք ռուսական զորքերի կողմից Տրապիզոնը, Ռիզեն և այլ բնակավայրերը գրավելուց հետո աստիճանաբար դուրս եկան թաքստոցներից: Կարճ ժամանակում Տրապիզոն քաղաքում նման հայերի թիվը հասավ 4-500-ի:

Ռուսական զորքերի հրամանատարությունը վավերացրեց Հայկական կոմիտեն և նրան տվեց գործունեության լայն լիազորություններ՝ կոտորածներից փրկվածների խնամքը, նրանց համար նպաստի հայթայթումը, հայերի կալվածքների և գույքի հսկողությունը և տնօրինությունը, փրկվածների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծումը և այլն, որոնք դեպքերի ժամանակակիցն ու վկան ամփոփում է այսպես. «Կոմիտէն տէր կանգնեցաւ հայկական կալուածներուն, տուներուն, խանութներուն և ինչ որ հնարաւոր էր հաւաքեց նորաշէն եկեղեցիին մէջ: Գիւղերէն և աւաններէն ամէն օրն որբեր և դեռատիներ կը գտնուէին և կը ղրկուէին Պաթում»[5]:

Ահա այսպիսին էր իրավիճակը գարնան առաջին ամիսներին, որը կարելի է բնորոշել որպես վերականգնումի և վերակազմակերպումի շրջան:

Մ. Թոռլաքյանը, աշխատանքի անցնելով ռուսական զորքերի հակահետախուզական բաժնում, ինչպես տեսանք իր խոստովանության մեջ, նպատակ էր դրել, օգտագործելով իր պաշտոնական դիրքն ու հնարավորությունները, վրեժ լուծել թուրք ոճրագործներից:

Կոտորածներից փրկված հայ խլյակների նկատմամբ ռուսական հրամանատարության բարյացակամ վերաբերմունքը, սակայն, խիստ յուրահատուկ էր. նրանք ջանքեր գործադրում էին հայերի բեկորները հավաքելու ուղղությամբ, սակայն նպատակը մեկն էր՝ նրանց ուղարկել ռուսական քաղաքներ՝ Բաթում, Սուխում, Սոչի և այլն: Իսկ զենքի ընդունակ փոքրաթիվ հայերից ակնկալում էին ընդամենը աջակցություն՝ իրենց ծրագրերի իրականացման համար: Հայ ազգային-քաղաքական գործիչները շատ շուտ հասկացան ռուսների մտադրությունները: Մ. Թոռլաքյանը, նշելով, որ «քրիստոնեայ ռուսերը» չարդարացրին հայերի հույսերը, գրում է. «Անոնք գրաւելով Արևմտեան Հայաստանի մեծ մասը և հաստատ գիտենալով թէ թուրքերը ինչպիսի անլուր ոճրագործութիւններ կատարած էին հայերուն հանդէպ, նոյնիսկ այդ թուրքերուն համակրանքը շահելու համար, սկսան աւելի լաւ վերաբերմունք ցոյց տալ անոնց հանդէպ, քան այս վերջիններու եաթաղանէն հրաշքով ազատած հայ բեկորներուն հանդէպ: Կարծես ռուսերուն թշնամին հայերն էին եղած և ոչ թէ թուրքերը, որոնցմէ եթէ մէկը սպաննուէր՝ խստորէն կը պատժէին հայերը: Այդ օրերուն ինծի համար պարզ եղաւ ռուսերուն դիմագիծը և հասկցայ, թէ անոնք նպատակ ունէին Հայաստանին տիրելու առանց հայութեան»[6]:

Հայերի նկատմամբ ռուսների վերաբերմունքը հայ մարտիկներին հասկանալի է դառնում հատկապես հետևյալ դեպքից հետո. հայ հետախույզների և մարտական խմբերի վճռական աջակցությամբ ռուսական զորքերը հաջողությամբ գրավում են ծովափնյա Թերմե քաղաքը: Հայ խմբապետները ռուսական հրամանատարության հետ պայմանավորվում են Ջանիկի շրջանում գտնվող 2000-ից ավելի փախստականներին տեղափոխել Ռուսաստան: Ըստ պայմանավորվածության հոկտեմբերի 20-ին հայերը պետք է նավ բարձրանային: Խմբապետներ Սերոբ Կարաքեհյանն ու Գալուստ Քյոսյանը իրենց օրագրում գրում են. «Ապշեցանք, երբ Ռուսերը մերժեցին ընդունիլ հոն հաւաքուած փախստականները, այնպէս որ միայն կիներն ու երեխաները տարին: … Շատ ուշ հասկցանք, որ Ռուսերը կ'ուզէին մեզ օգտագործել, պահելով թշնամիի թիկունքին իբրև հարուածող ոյժ: Մինչ այդ, մնացողներս սրտաբեկ քաշուեցանք լեռները»[7]:

Միսաք Թոռլաքյան

Ավելին՝ ռուսական հրամանատարությունը փորձում էր հայ զինյալների նկատմամբ հաստատել առավելագույն վերահսկողություն: Ուշագրավ է, որ Թերմեն գրավելուց հետո երբ ռուսական բանակում ծառայող Մ. Թոռլաքյանը իր հետ բերած զենքերը հանձնում է հայ զինյալներին, դեպի լեռները վերադարձի ճանապարհին ռուսական ուղեկալները խուզարկում և վերցնում են այդ զենքերը:

Ահա այսպիսի պայմաններում պետք է Մ. Թոռլաքյանը ընկերների հետ իրականացներ թուրք ոճրագործներին պատժելու իր ծրագիրը:

Տարերային վրեժխնդրության շրջան

Մ. Թոռլաքյանը նախ կազմում է հայտնի թուրք ոճրագործների մոտավոր մի ցանկ, որն ընթացքում լրացվում և խմբագրվում է: Ցանկում ընդգրկվում են՝

ա. այն թուրքերի անունները, որոնք, ըստ հասարակության մեջ տարածված կարծիքի, հայերի նկատմամբ վատ չէին տրամադրված, թեև կարող էր իրականում հակառակը լինել,

բ. այն թուրքերի անունները, որոնց մասին հասարակության մեջ վատ լուրեր էին տարածված:

Սողոմոն Թեհլիրյան - Միսաք Թոռլաքյան

Առաջին խմբի թուրքերին խնայելն ուներ երկու նպատակ. նախ՝ ժողովրդի մեջ ամրապնդվում էր այն համոզմունքը, որ հայերն անմեղներին չեն պատժում, երկրորդ՝ սրանց հետ Մ. Թոռլաքյանը կապեր է հաստատում և օգտագործում իր ծրագրերի իրականացման համար:

Երկրորդ խմբի թուրքերին պատժում էին առանց վարանելու. «Այսպիսիները շատ անգամ իրենց՝ թուրքերու միջոցով մաքրագործել կու տայինք»[8]:

Վրիժառու խմբի կողմից վրեժխնդրությունն իրականացվում էր երկու ուղղությամբ, ինչը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Առաջին դեպքում իրենց ձեռքն ընկած թուրքին ոչնչացնում էին ռուսներից գաղտնի, եթե կար դրա հնարավորությունը, իսկ եթե դա անհնար էր, փորձում էին այդ թուրքին ռուսական հրամանատարությանը ներկայացնել որպես ապստամբ: Սակայն ռուսները հասկանալի պատճառներով հայերին շատ չէին վստահում և նման դեպքերում իրենք էլ էին թուրք վկաներին դիմում՝ հստակ պատկերացում կազմելու համար: Նման դեպքերում Մ. Թոռլաքյանը գտնում էր տվյալ թուրքի դեմ ցուցմունք տվող մեկ այլ թուրքի[9]:

Հայ վրիժառուները դիմում էին նաև այլ միջոցների. ձևանում էին ռուս զինվորներ, ձերբակալում թուրքերի և գիշերները նրանց ոչնչացնում: Հնարավորության դեպքում դիմում էին ռուսական բանակում ծառայող հայ զինվորների օգնությանը: Մ. Թոռլաքյանը պատմում է նման մի դեպքի մասին: Մի օր երկու հայ վրիժառուներ՝ Հակոբը և Հովհաննեսը, Թոռլաքյանին են ներկայացնում երկու ղարաբաղցի հայ զինվորի, ստանում են պատժի ենթակա թուրքերի մի ցանկ, միասին ձերբակալում են թուրք ոճրագործներին և գիշերը բոլորին ոչնչացնում[10]:

Հայերի նկատմամբ բռնություններով և ոճիրներով հայտնի թուրքերի մի ցանկ Մ. Թոռլաքյանը հանձնում է Տրապիզոնի գաղտնի ոստիկանությանը՝ նրանց ներկայացնելով որպես ռուսական իշխանությունների դեմ գաղտնի կերպով ապստամբություն նախապատրաստողների: Հայերի նկատմամբ դրականորեն տրամադրված թուրք Միքդաղ Հասանբաշօղլուն հաստատում է Թոռլաքյանի խոսքերը: Գաղտնի ոստիկանությունը գոհ է մնում Թոռլաքյանի զեկույցից և նրա իրավասությունների շրջանակն ընդլայնում է՝ նրա տրամադրության տակ դնելով բավականաչափ դրամական միջոցներ[11]:

Այս իրադարձություններից հետո Թոռլաքյանը ինը հոգիանոց խմբով շարժվում է դեպի Գյումուշխանեի յայլաները, ուր որոշել էր պատժել կոտորածների հիմնական կազմակերպիչներին և բուն մասնակիցներին: Շարժվում են իրենց ազգակիցների ոսկորներով լեցուն ճանապարհներով և անցնում գործի. «Երեկոյեան արդէն հաւաքած էինք քառասունեօթը հոգի: Բոլորն ալ իրարու կապած դուրս բերինք ու ձորի մը մէջ անոնց հաշիւները մաքրեցինք, ճիշդ այնպէս՝ ինչպէս իրենք ըրած էին հայերուն:

Նոյն գիշերը վերադարձանք Սուլայի սարը: Յաջորդ օրը հոն ալ տասնըեօթը հոգի բռնեցինք և նոյն ձևով անոնց հաշիվը մաքրեցինք»[12]:

Վերադառնալով քաղաք՝ գաղտնի ոստիկանությանն է հանձնում աչքի ընկնող թուրքերի մի մեծ ցանկ, որոնց մեղադրում է թուրքական բանակի հետ գաղտնի կապերի և նրանցից զենք ստանալու մէջ: Թոռլաքյանի խոսքերը հաստատում են նաև հակահետախուզությունում աշխատող այլ հայեր և հույներ, որոնց հետ նախապես պայմանավորվել էր:

Մ. Թոռլաքյանի խումբը, այս պատժական գործողություններին զուգահեռ, չէր մոռանում հայ կանանց և երեխաներին փրկելու գործը: Գրեթե ամեն տեղից, ուր լինում էին, նրանց հաջողվում էր փրկել կամ հայտնաբերել բռնի կերպով հափշտակված կամ այստեղ-այնտեղ թաքնված հայ կանանց, աղջիկների և երեխաների: Այդ աշխատանքներում նրանց օգնում էին հույները: Թոռլաքյանը համակրանքով է խոսում հույն Իստիլ աղայի մասին, որի տրամադրության տակ կար 150-200 զինվոր, որոնց մեջ կային նաև հայեր: Ճիշտ է՝ խումբը մարտունակությամբ և կարգապահությամբ առանձնապես աչքի չէր ընկնում, բայց հայերին աջակցում էր, փորձում էր տեղեկություններ տրամադրել հայ փախստականների մասին, նաև աջակցում էր կռիվների ժամանակ:

Նման մի դեպքի մասին պատմելիս Մ. Թոռլաքյանը բնութագրում է Իստիլ աղայի զինվորներին. «Այս միջոցին Իստիլ աղայի անկարգապահ խումբն ալ հասաւ և մեր տղոց կողքին դիրք բռնեց»[13]: Այս կռվի մեջ հայերի վիճակը բավականաչափ ծանր էր, քանզի

նրանց պաշտպանության տակ էր փրկված 60 հայ փախստական, որոնց թեժ կռվի ընթացքում կարողանում են նստեցնել նավակներ և հեռացնել վտանգավոր գոտուց: Իրենք նույնպես հեռանում են փախստականների հետ: Ուշագրավ են Թոռոլաքյանի հետևյալ խոսքերը իրենց նահանջն ապահոված հույների մասին. «Երբ նավակները նստած այլևս ապահով դէպի նաւ կ'երթայինք, Իստիլ աղայի ծովափ թողած խումբը թուրքերու հետ տաք կռիվ կը մղէր, ապահովելով մեր մեկնումը: Հոս է, որ փոխեցի յոյներուն հետ ունեցած մեր հինգ օրուան հանդիպումներու ընթացքին անոնց մասին կազմած բացասական կարծիքս»[14]:

Կազմակերպված վրիժառության շրջան

Լեռներից իջնելուց հետո հատկապես երիտասարդ հայ մարտիկները ամենուր վրեժ էին լուծում թուրք ոճրագործներից. «Մեր երիտասարդութիւնը, լեռներէն քաղաք կամ գիւղ իջած օրերէն լծուեցաւ թուրք ջարդարարները, հայերու գոյքն ու ինչքը թալանողները, հայ կիներն ու աղջիկները բռնաբարող եւ առեւանգողները պատժելու եւ որբուկներ փնտրելու աշխատանքին»[15]: Ստեղծվել էր մի իրավիճակ, որը կարող էր վնասակար հետևանքներ ունենալ հետագա գործունեության համար, քանի որ հայ վրիժառուների դեմ էր տրամադրում ռուսական զինվորական իշխանություններին, ովքեր թուրքերի հետ հաստատել էին բնականոն կամ բարեկամական հարաբերություններ: Թուրքերը բնականաբար փորձում էին հայ վրիժառուների դեմ տրամադրել ռուսներին, որոնք առանց այն էլ հայերի նկատմամբ, մեղմ ասած, բարեկամական հարաբերություններով աչքի չէին ընկնում: Ավելին, հայերի և թուրքերի միջև խնդրահարույց իրավիճակներում ռուսները պաշտպանում էին թուրքերին. «Թուրքերը շատ շուտ հասկցած էին, թէ գրաւման բանակը բարեացակամ էր իրենց հանդէպ և կը պաշտպաներ զիրենք»[16]:

Մ. Թոռոլաքյանը շատ շուտ հասկացավ, որ պետք է այս խառը և վտանգներով հղի դրությունն արմատապես փոխել. «Առաջին գործս եղաւ վերջ տալ այս անկազմակերպ դրութեան և ստեղծել կեդրոն մը, որուն գիտութեամբ և թելադրութեամբ միայն վրէժխնդրական աքտերը կատարուին»[17]: Այս նպատակով նա շրջանի ամենահեղինակավոր մարտիկներից ստեղծում է քսան հոգանոց մի խումբ, որը պետք է համակարգեր բոլոր աշխատանքները, իսկ վրեժխնդրության բոլոր գործողությունները պետք է իրականացվեին միայն այս խմբի հավանությունից և հաստատումից հետո:

Խմբի առաջին գործերից մեկը եղավ Բաբերդի և Յաղմուր դերեի ճանապարհների վրա վերահսկողություն հաստատելը: Առաջին իսկ առիթով ոչնչացվում է նախ՝ ութ թուրք, իսկ ամբողջ օրվա ընթացքում՝ քառասուն թուրք: Խմբի առաջին օրվա հաջողությունը ահ ու սարսափ է տարածում ոճրագործների շրջանում, իսկ հայ վրիժառուների մեջ ամրապնդում հավատն ու վստահությունը խմբի նկատմամբ: Դա

Ձախէն աջ՝ Արշաւիր Շիրակեան, Արամ Երկանեան, Միսաք Թորլաքեան, Սողոմոն Թէհլիրեան:
From left to right, Arshavir Shiraguian, Aram Yerganian, Missak Torlakian, Soghomon Tehlirian.

նախապայման և հնարավորություն է ստեղծում վրեժխնդրական գործողություններն ընդլայնելու և կարգապահությունն ամրապնդելու համար: Խումբը որոշում է ստեղծել մնայուն հանձնախումբ, որի համար գումարվում է հատուկ ժողով՝ խիստ գաղտնիության պայմաններում: Ժողովին մասնակցում են պատվիրակներ Սյուրմենեից, Ապիոնից, Կալաֆկյայից, Կյուշանայից, Ծինկիլայից, Կրոմիլայից, Սկաֆիտայից, Ջիզակսայից, Մալայի տարածքի գյուղերից, Բարիանից, Վերանայից: Ընտրվում է ղեկավար հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

1. Միսաք Թոռոլաքյան՝ Կյուշանայից,
2. Աբգար Չեփնյան՝ Ապիոնից,
3. Գաբրիել Մատինյան՝ Սյուրմենեից,
4. Համբարձում Չեփնյան՝ Կյուշանայից,
5. Միսաք Նուբարյան՝ Վերանայից:

Ժողովը որոշում է.

ա. «Ցուցակագրել շրջանի ազդեցիկ թուրքերու անունները եւ նիւթեր ներկայացնել յանձնախումբին՝ հայերու հանդէպ անոնց կատարած վայրագութիւններուն մասին:

բ. Ահաբեկումներու կատարման գործը յանձնել այնպիսի տղոց, որոնց մասին ո՛չ ժողովուրդ եւ ոչ ալ կառավարութիւնը կրնան կասկած ունենալ»[18]:

Ժողովը վճռում է նաև առաջին ահաբեկումներն սկսել թրքական հինգ գյուղերի մեջ ապրող ոճրագործներից: Հատկապես կարևորվում է բոլոր ահաբեկումները նույն օրը կատարելու հանգամանքը՝ թուրքերի վրա ահ ու սարսափ տարածելու համար: Որոշումն իրագործվում է շատ հստակ և ստանում լայն

արձագանք: Ոճրագործների ցանկում էր նաև Դրոնա գյուղից մեկ հույն, որը գործակցում էր թուրքերի հետ: Թուրքերի մեջ մեծ սարսափ է ընկնում, որոնք իրենց տներից փախչում են ավելի ապահով տեղեր, «Սակայն մեր վրեժխնդրութենէն չէին ազատեր»[19]:

Հետագա ահաբեկումների ընթացքում օգտագործվում է նաև որպես ռուսական բանակի զինվոր ներկայանալու և ոճրագործներին կալանավորելու, ապա գիշերով նրանց ոչնչացնելու փորձված եղանակը: Պատահում էին դեպքեր, երբ վրիժառուները, ձերբակալված ոճրագործին ազատելու խոստումի դիմաց, ինչը երբեք չէին անում, զինաթափում էին նրա հարազատներին, ընկերներին, համագյուղացիներին:

Հետախուզական աշխատանքներ

Թուրք ոճրագործներին պատժելու գործողություններն ընթանում էին հաջողությամբ: Այդ օրերին զորավար Լյախովին փոխարինած զորավար Շվարցը շտապ կարգով Տրապիզոն է կանչում Մ. Թոռլաքյանին. «Ռուսներուն թրքասիրութիւնը երբեք արգելք մը չեղաւ, որ զինուորական իշխանութիւնները չօգտագործեն մեր վերապրող երիտասարդութիւնը. ընդհակառակը, առաւելագոյն չափով օգտուեցան մեր մարտական ուժերէն, որոնք քաջ ծանօթ էին միջավայրին և անհուն վրէժխնդրութեան կրակով լեցուն էին Թուրքին դէմ»[20]: Դա հատկապես դրսևորվում էր իրենց համար դժվարին պահերին:

Այս անգամ նույնպես նրանք հայտնվել էին նման վիճակում. ռուսական հետախուզական օդանավը խափանման պատճառով ստիպված վայրէջք էր կատարել թշնամու տարածքում, իսկ օդաչուն գերվել էր: Ռուսները հույն Իստիլ աղայի մարդկանց միջոցով փորձել էին իմանալ օդաչուի տեղը և անակնկալ հարձակումով ազատել նրան, սակայն վերջիններս անհաջողության էին մատնվել և վերադարձել էին ձեռնունայն: Զորավար Շվարցը նույն խնդրով դիմում է Թոռլաքյանին, ով տալիս է համաձայնություն և իր հինգ ընկերներով (Գրիգոր Հրապյան, Երվանդ Կանսզյան, Օրդվեցի Հարություն, Մարտիրոս և Կարապետ Խտշյան) պատրաստվում է մեկնելու Կիրասոն, ուր վայրէջ էր կատարել օդանավը: Շվարցը փորձում է նրանց հետ ուղարկել նաև մի քանի հույնի, բայց հայերը կտրուկ մերժում են:

Հուլիսի 16-ին խումբը ռուսական «Զորկի» զրահանավով հասնում է Կիրասոն: Կեսգիշերին հայ հետախույզները մտնում են քաղաք, իրենց ծանոթներից հավաքելով համապատասխան տեղեկություններ և ճշտելով, որ օդաչուին տեղափոխել են Օրդու, գիշերով նստում են նավակներ և վերադառնում: Վերադարձի ճանապարհին գերում են երկու թուրքական նավակ՝ իրենց 12 զինվորներով, որոնք գիշերային հերթապահներ էին և հսկում էին ափամերձ տարածքները: Սրանց զինաթափում են և իրենց նավակներով հանձնում ռուսական հրամանատարությանը: Ռուսական ռազմանավի հրամանատարը, խմբի հաղորդած տեղեկություններն օգտագործելով, զորավար Շվարցի հրամանով ռմբակոծում է Կիրասոնը. «Մոտ յիսուն ռումբ նետեցին Կիրասոն քաղաքի կարեւոր տեղերը, հետեւելով մեր տղոց ցուցմունքներուն: Ծովափի միւս քաղաքներն ալ ռմբակոծելով, կէսօրուան մօտերը հասանք Տրապիզոն»[21]: Փայլուն իրականացված այս արշավի համար զորավար Շվարցը հայկական խմբի բոլոր անդամներին ներկայացնում է պարգևատրման:

Խմբի մասնակցությամբ հաջորդ հետախուզական ձեռնարկն ավելի շատ ռազմական գործողություն է հիշեցնում: Զորավար Շվարցը որոշում է ոչնչացնել թուրքական շոգեմակույկներն ու առագաստանավերը, որոնք գիշերները ռազմամթերք և պարեն էին տեղափոխում, իսկ ցերեկները թաքնվում Թերմե քաղաքի մոտով հոսող գետի խորշերում, որոնք խիտ ծառածածկի շնորհիվ թաքցնում էին այդ տորմիղի նավերն ու նավակները: Գործողության պատասխանատվությունը դրվում է Մ. Թոռլաքյանի և հույն Իստիլ աղայի վրա: Այդ հետախուզական արշավի մասին Թոռլաքյանը հիշում է. «36 հայեր, 48 յոյներ եւ 50ի չափ ռուս զինուորներ իրենց սպայով միասին, երեք զրահանաւերով եւ մեկ փոխադրանաւով, 1917 Օգոստոս 15ին ճամբա ելանք եւ առտու կանուխ Թերմէի գետաբերանին առջեւ կանգ առինք»[22]:

Ռմբակոծվում են Թերմե քաղաքը և նրա աջ ու ձախ կողմերի լեռները: Հայերը դուրս են գալիս ափ, գրավում ժանդարմերիայի շենքը և այրում, այնուհետև հետապնդում փախչող ժանդարմներին և սպանում: Ռուսները շուտով հայտնաբերում են նավակներն ու բոլորը դուրս բերում իրենց խորշերից: Հայերի խումբը պետք է տասը րոպեում հասցներ մտնել քաղաք՝ անցնելով թուրքական մի քանի գյուղերի միջով: Լավ մտածված արշավն ավարտվում է բացարձակ հաղթանակով. թուրքերը փախչում են քաղաքից, որն անցնում է ռուսական վերահսկողության տակ:

Ազատագրված քաղաքում Թոռլաքյանի խումբը հանդիպում է հայ փախստականների մի քարավանի, որն աստիճանաբար մեծանում է տարբեր տեղերից նրանց միացողների հաշվին, որոնք սկսում են թալանել ամայացած քաղաքի խանութները: Այս մարդկանց առաջնորդն էր հռչակավոր խմբապետ քահանա Գալենճյանը, ում թուրքերը կոչում էին Դելի Քեշիշ: Թոռլաքյանն իր ընկերների հետ փորձում է կասեցնել գազազած ամբոխին, բայց՝ ապարդյուն: Այնժամ որոշում են հրդեհել այն շենքերը, որոնք թալանվում են: Կրակի և ծխի ազդեցությամբ ի վերջո հաջողվում է հանգստացնել ամբոխին, որոնց առաջնորդում են դեպի ծովափ՝ նավեր նստեցնելու և Տրապիզոն փոխադրելու համար: Քարավանի մարդկանց թիվն անցնում էր 200-ից, նրանց էին միացել ևս երկու տասնյակ հույներ:

Ծավափին հավաքվել էին նաև մոտ 500 աջարացի թուրք փախստականներ, սակայն ռուսները ոչ մեկին նավ չեն վերցնում: Թոռլաքյանի միջամտությամբ հայ կանանց, երեխաներին և ծերերին նստեցնում են նավ, իսկ կռվելու ընդունակ 30 տղամարդու Թոռլաքյանը բաժանում է զենք և միացնում իր խմբին: Նրանք հաջորդ օրը հասնում են Տրապիզոն:

Ռուսական հրամանատարության վերաբերմունքի փոփոխությունը թուրքերի հանդեպ, դրա պատճառներն ու հետևանքները

Ռուսական զինվորական հակահետախուզությունն իր վերաբերմունքը թուրքերի նկատմամբ ճշտում էր՝ հատկապես հենվելով հայերի և հույների տրամադրած նյութերի և զեկույցների վրա, որոնց համաձայն՝ թուրքերը նախապատրաստվում էին ապստամբության: Այս համոզմունքն ամրապնդվում է նաև այն իրողությամբ, որ ռուսական հրամանատարությունը նման տեղեկություններ ստանում էր նաև ազդեցիկ և ռուսներին «հավատարիմ» թուրքերից, որոնք, ըստ էության, Մ. Թոռլաքյանի և հույների առաջնորդ Իստիլ աղայի մարդիկ էին. «Ռուսական զինուորական հակահետախուզութիւնը, իր ձեռքին տակ ունեցած նիւթերով, զորս հայերս և յոյներս էինք հայթայթած, կը խորհէր թէ թուրքերը կրնան և ի վիճակի են ապստամբութիւն առաջ բերել»[23]:

Հնարավոր ապստամբությունը կանխելու համար հրամանատարությունը որոշում է նախահարձակ լինել: Այս հարցին նվիրված խորհրդակցությանը հրավիրում են նաև հինգ հայի՝ Մ. Թոռլաքյանի գլխավորությամբ: Որոշվում է նախ՝ խուզարկություններ կատարել քաղաքի արևելյան շրջանների թուրքական գյուղերում և ձերբակալել ապստամբության կազմակերպիչներին:

Թե ինչքան էր մեծ ռազմական իշխանությունների մտավախությունը, կարելի է հասկանալ այս գործողության համար տրամադրված զինվորների քանակից: Երեկոյան 50 հայ տղաների առաջնորդությամբ 800 զինվոր է դուրս գալիս քաղաքից և ուղևորվում դեպի Յոմուրիայի գյուղերը, իսկ 400 զինվոր էլ Սարգիս Ջեքիարյանի և սկաֆիտացի Բիւզանդ Ասլանյանի առաջնորդությամբ շարժվում է դեպի Ճոշարա և Սամարուքսա գիւղերը: Տեղ հասնելուն պես 800 զիվորները բաժանվում են երկու մասի և շրջապատում Արսեն և Դրոնա գյուղերը: Դրոնայում էր բնակվում հայտնի ոճրագործ Գյումրյուքչիօղլի Հասան աղան, ով իր երեք եղբայրների հետ հայտնի էր որպես շրջանի հայերի դահիճ: Ռուսների հետ ստեղծել էր լավ հարաբերություններ, ճակատի հրամանատարին ցուցաբերած ճոխ հյուրասիրությունից հետո նրանից ստացել էր զենք կրելու իրավունք:

Մ. Թոռլաքյանը Հասան աղայի անունը մտցրել էր կասկածելիների ցուցակի մեջ և որոշել էր ռուսների ձեռքով ոչնչացնել նրան և նրա ոճրագործ զինակիցներին: Տունը շրջապատելուց հետո պահանջում են բացել դուռը, Հասան աղան հրաժարվում է, իսկ երբ զինվորները փորձում են դուռը կոտրել, Թոռլաքյանը հասկանում է, որ Հասանն անպայման կհանձնվի, քանի որ վախենալու առիթ չուներ: Իսկ հանձնվելուց մեկ-երկու օր հետ ազատ կարձակվեր, ինչպես հաճախ էր պատահում այլ թուրքերի դեպքում, ուստի, գրում է Թոռլաքյանը հուշերում, «…օգտուելով խիստ մութէն, դրան կողքի պատուհանի կոտրուած ապակիի ճեղքէն հրացանիս ծայրը ներս խոթելով՝ հատ մը կրակեցի եւ անմիջապէս նորէն աննկատ տեղս կանգնեցայ»[24]:

Ռուս հրամանատարը կարծելով, որ ներսից են կրակում, հրամայում է դիրքավորվել և կրակ բացել: Հարյուր զինվոր կրակի տակ են առնում լավ ամրացված տունը: Ներսից ուժեղ դիմադրություն է սկսվում: Շուտով կենտրոնից հրաման է գալիս այրել տունը և ոչնչացնել բոլորին: Կռիվը տևում է մինչև լուսաբաց: Այդ կռվի մեջ սպանվում են Հասանի եղբայրները, տան մեջ եղած և նրանց օգնության շտապող բոլոր թուրքերը:

Երբ լուսաբացին պարզվում է, որ ռուսները տվել են մի քանի վիրավոր, կենտրոնից հրաման է ստացվում խուզարկել ողջ գյուղը և ձերբակալել բոլոր կասկածելիներին: Խուզարկությունն ուղեկցվում է ծեծով և բռնությամբ, ինչի շնորհիվ բազմաթիվ զենքեր են առգրավվում, ձերբակալվում է 40 թուրք, որոնց քշում են Տրապիզոն: Ճանապարհին թուրքերի թախանձագին խնդրանքով Մ. Թոռլաքյանն ու Բյուզանդ Ֆունտուքյանը ռուսներից գաղտի ազատ են արձակում 8 թուրքի՝ նախ նրանց ցույց տալով իրենց հեղինակությունը, և ապա՝ նպատակ ունենալով հետագայում սրանց օգտագործել իրենց ծրագրերի մեջ: Հաշվարկը շատ ճիշտ էր. մեկ-երկու օրից բոլոր ձերբակալվածներն ազատ են արձակվում:

Այս դեպքից հետո ռուսների մեջ թուլանում է այն համոզմունքը, թե թուրքերի հակառուսականությունը մեծապես պայմանավորված է հայերի և հույների թրքատյացությամբ: Իսկ ամենակարևոր ձեռքբերումը, ըստ Թոռլաքյանի, լինում է այն, որ «հակահետախուզական բաժնին հետ համաձայնութեան եկանք, որ միայն մեր մարդոցմով այսուհետեւ հետախուզութիւն կատարենք եւ կարիք զգալու պարագային՝ զինուորական իշխանութեան դիմենք օժանդակութիւն ստանալու համար»[25]: Տվյալ համաձայնությամբ փաստորեն լիովին ազատվում էին հայկական հետախուզական խմբի անդամների ձեռքերը, իսկ պատժիչ միջոցների զինանոցը՝ մեծանում:

Այս դեպքից հետո Թոռլաքյանի խումբը շարունակում է հայոց դահիճներին ոչնչացնելու գործը: Հաճախ էլ թուրք խմբավորումներին կամ երևելիներին հանում են միմյանց դեմ՝ մեկ ոճրագործի ձեռքով ոչնչացնելով մյուսին:

Ռուսական բանակը հեռանում է Արևմտյան Հայաստանից

Փետրվարյան հեղափոխությունը և ցարի հրաժարումը գահից արմատապես փոխեցին իրադրությունը թե՛ արևմտյան, թե՛ կովկասյան ճակատներում: Ռուսական բանակում սկսվեց կազմալուծման վտանգավոր գործընթաց. «Զօրքը բարոյալքուած էր ու կը զբաղէր միայն թալանով և կողոպուտով: Զինուորները, Տրապիզոնի ծովափը իջնելով, նաւերը կը բռնագրաւէին և իրենց թալանած ապրանքները մէջը լեցնելով կը մեկնէին»[26]:

Թուրքերն այս անգամ իսկապես սկսեցին ապստամբական գործողություններ ձեռնարկել: Գյուղա-

բնակ հայերի վիճակը վտանգվեց: Հայկական մարտական խմբերի ղեկավարները ժողովրդին սկսեցին տեղափոխել քաղաք: Ռուսները խոստացան հայերին տրամադրել զենք և օգնական զինվորներ, սակայն՝ ապարդյուն. զինվորներն այլևս հրամանատարներին չէին ենթարկվում: Շուտով ռուսական բանակի սպայական կազմը մնաց առանց զինվորի և ստիպված, տեղական գործերի կառավարումը հանձնելով վրացիներին, հեռացավ Տրապիզոնից: Վրացիները, որ երբեք աչքի չէին ընկել հակաթուրքական դրսևորումներով, «…գաղտնի կապեր ունէին Թուրքերու հետ: Հայերը ստիպողաբար պիտի հեռանային Տրապիզոնէն դէպի Ռուսաստան, այլ ճանապարհ չկար»[27]:

Օրհասական վիճակից ելք գտնելու համար հրավիրվեց համայնքի ղեկավարների և մարտական խմբերի հրամանատարների ընդհանուր ժողով՝ քահանա Մելյանի նախագահությամբ: Ժողովը որոշում է արագացնել գյուղաբնակ հայերի տեղափոխության գործը քաղաք, զինական խմբեր կազմել և ուղարկել Բաբերդ և Երզնկա՝ Սեպուհի[28] և Մուրադի[29] հրամանատարության տակ, 200 հոգիանոց մի խումբ էլ թողնել առաջնորդարանի տրամադրության տակ՝ քաղաքը պաշտպանելու և հայության վերջին բեկորները հավաքելու և Ռուսաստան ուղարկելու համար, որից հետո այս խումբը ևս պիտի մեկներ ճակատ: Թշնամուն զորավոր ուժ ցուցադրելու նպատակով այս խումբը բաժանվել էր զանազան թաղերի մեջ և զինվորական համախումբ կյանքով էր ապրում[30]: Քաղաքը պաշտպանող այս խմբից զատ «ներքին թշնամին միշտ սոսկումի մէջ պահելու եւ ահաբեկումներ ընելու համար թոուցիկ խումբ մըն ալ կազմուեցաւ Միսաք Թոռլաքեանի ղեկավարութեամբ: Այդ օրերուն ահաբեկուեցաւ Կոխալի գիւղէն Խուրշուտ աղան, որ կերպով մը գլուխը պահած էր, ինչպէս նաև Ջիլմերա գիւղէն Յոյն մը, քանի մը հոգի ալ Փլատանայի շրջանէն»[31]

Մինչ մարտական խմբերը Երվանդ Ֆունտուքյանի (առաջին խումբ) և Կարա Հակոբի ու Ջիլ Օհաննեսի եղբայր Միքայելի հրամանատարությամբ (երկրորդ խումբ) մեկնեցին ճակատ, Թոռլաքյանի խումբը, օգտագործելով վերջին հնարավորությունները, շարունակում էր պատժական գործողությունները՝ հաճախ հույների հետ համագործակցաբար: Այդ գործողություններից հատկապես նշելի է Պլատանա քաղաքի մերձակա գյուղերից մեկում կատարված դեպքը: Թոռլաքյանը և խմբի մյուս անդամները, ներկայանալով որպես պետական հանձնարարությամբ եկած պաշտոնյաներ, տարբեր տեղերից եկած բազմաթիվ թուրքերի հավաքում են սրճարանում, հույներին հրամայում են դուրս գալ սրճարանից. «Սրճարանի մէջ մնացին միայն թուրքերը, որոնք այդ շրջանի հայոց տեղահանության ժամանակ սարսափելի հրեշութիւններ կատարած էին: Այդ սրիկաներուն հարցը մաքրելէ ետք վերադարձանք»[32]:

Այս դեպքի արձագանքը շատ մեծ էր և ամբողջ նահանգում ահ ու սարսափ էր տարածել: Ուշագրավ է այդ օրերին Սամսոնում բնակվող Վ. Մինախորյանի հաղորդած տեղեկությունը. «…վարձկան մարդիկ լուր տարածեցին, թէ հայերը նոր ջարդեր են կազմակերպել Պլատանայում: … Չանցաւ երկու-երեք օր եւ քաղաքը թնդաց մի լուրով, որ կոչուած էր վերարծարծելու «հիւրիէթական» տրամադրութիւններ: Թուրք եւ ռուս զորքերը Տրապիզոնում հանդիպել էին իրար գրկախառնութեամբ: Բայց այդ սրտաշարժ տեսարանի ժամանակ, յանկարծ, պայթել էր քաղաքի գլխաւոր զինամթերանոցի պահեստը»[33]:

Գյուղերից հավաքելով գրեթե բոլոր հայերին (տարբեր վայրերում իրենց ցանկությամբ մնացել էին հատուկենտ մարդիկ), Հայկական հանձնախումբը մեծ դժվարությամբ և բավականին գումար ծախսելով նրանց նստեցնում է նավ և ուղարկում Ռուսաստան: Քաղաքի անվտանգությունը ապահովող զինական խումբը, ավարտված համարելով իր առաքելությունը, որոշում է անցնել Արևմտյան Հայաստան և միանալ Սեպուհի կամ Մուրադի զորախմբերին: Սակայն ողջ ճանապարհը բռնված էր չեթեներով և թուրքական զինված հրոսակախմբերով: Տրապիզոնի վրացական իշխանությունները, որոշ ձգձգումներից հետո, նրանց նավ են տրամադրում Բաթում անցնելու համար: Մ. Թոռլաքյանի և քաղաքի պաշտպան հայկական զինական խմբերը 1918 թ. սկզբին բազում դժվարություններից և դեգերումներից հետո ափ են իջնում Բաթումում՝ այնտեղից Արևմտյան Հայաստան գնալու մտադրությամբ:

Մինչ խումբը մեկնում է Թիֆլիս, ուր Թոռլաքյանը հանդիպում է Ջեմլյակին, Ղազար Հարությունյանին և Հարություն Հարությունյանին, որոնք զբաղված էին հեծելազորի ստեղծմամբ, որը պետք է բաղկացած լիներ 400 հեծյալից: Վահան Փափազյանից (Կոմս) տեղեկանալով, որ Բաբերդը գրավված է թուրքերի կողմից, նրանք միանում են գնդապետ Ալաբյանի զորաջոկատին և շարժվում դեպի Էրզրում: Սարիղամիշում տեղեկանում են, որ Էրզրումը նույնպես գրավված է: Որոշ ժամանակ մաս կազմելով տարբեր զորամիավորումների և տեղից տեղ տեղափոխվելով՝ ի վերջո միանում են Ջեմլյակի ձիավոր խմբին, մասնակցում Սելիմի, Կարսի ճակատամարտերին:

1918-ի գարնան սկզբներին Դրոյի հրամանով շարժվում են դեպի Երևան, ուր մնում են մեկ ամիս: Այնուհետ Ջեմլյակի զորաջոկատի կազմում մասնակցում են Բաշ Ապարանի ճակատամարտին: Թոռլաքյանն այս ճակատամարտում վիրավորվում է, Աշտարակի հիվանդանոցում ապաքինվելուց հետո անցնում Երևան: Այստեղից ընկերների՝ Համբարձում Չեփնյանի, Աբգար Չեփնյանի և Միսաք Կակոսյանի հետ անցնում է Սուխում՝ տեղի հայ մեծահարուստ ծխախոտի վաճառականների ընդգրկմամբ մի մեծ հիմնադրամ գոյացնելու և Կենտրոնական Կոմիտեի տրամադրության տակ դնելու համար: Սակայն Ռուսաստանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմն ու անկայուն վիճակը խանգարում են իրականացնել այս ծրագիրը:

Բազում արկածներից և դեգերումներից հետո կուսակցության հատուկ հանձնարարությամբ նոյեմ-

բերի կեսերին նա անցնում է Բաթում, սակայն առաքելությունը մնում է անավարտ. Հայաստանում հաստատվել էին բոլշևիկյան կարգեր: Այստեղից անցնում է Պոլիս և ներկայանում «Ճակատամարտի»[34] խմբագրություն: Շուտով Պոլսում են հավաքվում կուսակցության ազդեցիկ դեմքերը: Նրանք Մ. Թոռլաքյանին կարգադրում են փոխադրվել «Ճակատամարտի» խմբագրության շենք, ուր տեղավորվել էր նաև Արամ Երկանյանը:

Բեհբուդ խան Ջիվանշիրի ահաբեկումը

Այդ օրերին, որպես բոլշևիկյան Ադրբեջանի առևտրական ներկայացուցիչ, Պոլիս է գալիս «Պեհպուտ Խան Ճիւանշիրը, Ատրպեճանի ներքին գործերու նախարարը, ջարդերու յայտնի կազմակերպիչ եւ հայակեր, Ատրպեճանի Թալաաթը»[35]: «Նեմեսիս» գործողության Պատասխանատու մարմնի կողմից Ջիվանշիրի ահաբեկումն հանձնարարվում է Մ. Թոռլաքյանին, Երվանդ Ֆունտուքյանին և Հարություն Հարությունյանին: Վերջին երկուսը պետք է մասնակցեին հետապնդմանը, իսկ ահաբեկումն իրականացնելու էր Մ. Թոռլաքյանը: Հետապնդման սկզբնական շրջանի աշխատանքներին մասնակցում է նաև Հրաչ Փափազյանը[36]:

Հետապնդման աշխատանքներն ավարտելուց հետո հուլիսի 18-ին Բերա հյուրանոցի մոտ՝ մի մարդաշատ վայրում և ահաբեկման համար ոչ այնքան հարմար պայմաններում Մ. Թոռլաքյանը փակում է դեպի հյուրանոցի մուտքն ուղևորվող Ջիվանշիրի ճանապարհը, և քանի որ վերջինս խիստ բարձրահասակ էր և գլխին նշան բռնելն այնքան էլ այդ նեղ պայմաններում հարմար չէր, նախ կրակում է կողքին, իսկ երբ զոհը շրջվում և ամուր բռնում է Թոռլաքյանի ձեռքերը, պարզապես նրան հնարավորություն է տալիս կրակելու ուղիղ կրծքին: Երկու գնդակ էլ արձակելով կրծքին՝ հայ վրիժառուն թողնում է նրան գետնին տապալված և հեռանում: Խուճապահար ժողովուրդը ետ է քաշվում՝ Թոռլաքյանի համար ակամա ճանապարհ բացելով: Երբ նա արդեն անցել էր փողոցը և ուզում էր թեքել ճանապարհը, լսում է օգնության կանչեր: Հասկանում է, որ զոհը չի մահացել, այլ ընդամենը վիրավոր է: Անմիջապես շրջվում և արագ քայլերով գնում է դեպի տապալված Ջիվանշիրը, ճեղքում է նրան շրջապատածների օղակը և կրծքին արձակում ևս մեկ գնդակ:

Մոտակայքում հայտնված ֆրանսիացի ռազմական ոստիկանները հարձակվում են Թոռլաքյանի վրա, ծեծում են նրան, ապա հանձնում Պոլսում դաշնակից ուժերի անգլիական ներկայացուցչությանը:

Թոռլաքյանի դատավարությունն իրականացնում է անգլիական զինվորական դատարանը: ՀՅԴ Բյուրոն կազմակերպում է հաջող պաշտպանություն: Դատապաշտպան է նշանակվում Խոսրով Ներսեսյանը: Հոգուտ Թոռլաքյանի դատարանում հանդես են գալիս բազմաթիվ վկաներ, որոնք բոլորն էլ այդտեղ էին հայտնվել ՀՅԴ Բյուրոյի և «Նեմեսիսի» հանձնախմբի

Վազգեն Առաջին Վեհափառը
Միասք Թոռլաքյանի մահճի մոտ

կազմակերպված աշխատանքների շնորհիվ: Բնականաբար կային նաև թուրք և ադրբեջանցի վկաներ, որոնք հանդես էին գալիս ի վնաս Թոռլաքյանի:

Ի վերջո հենվելով վկաների ցուցմունքների և հատկապես դատաբժշկական հետազոտության վրա՝ Անգլիական ռազմական դատարանը 1921 թ. նոյեմբերի 6-ին արդարացնում է Մ. Թոռլաքյանին: Ահա դատավճիռը, որ ընթերցվում է դատարանի դահլիճում. «Ամբաստանյալը յանցաւոր է սպանութեան համար, բայց ատեանը անպատասխանատու կը նկատէ զինք՝ ոճիրին պահուն մտային խանգարում ունեցած ըլլալու համար»[37]:

Ռազմական դատարանը թեև քաջ գիտակցում էր, որ Մ. Թոռլաքյանը որևէ մտային հիվանդությամբ չի տառապում, բայց հասարակական կարծիքի ճնշման տակ չհամարձակվեց պատժել ամբաստանյալին: «Մտային խանգարումը» իրավիճակից պատվով դուրս գալու միակ ելքն էր, որն էլ ընտրեց նա:

Նոյեմբերի 22-ին բանտից դուրս գալուց հետո նա մեկնում է Հունաստան, ապա՝ Ռումինիա, ուր բնակություն հաստատեց և մնաց մինչեւ 1952 թ., մաս կազմեց ՀՅԴ Բալկանյան կառույցին: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Դրոյի ղեկավարությամբ կարևոր ներդրում ունեցավ բալկանյան հայության անվտանգության ապահովման գործում: Պատերազմի տարիներին դարձավ Դրոյի գինակիցը հայ ռազմագերիներին փրկելու աշխատանքներում:

1952 թ. տեղափոխվում է ԱՄՆ՝ Կալիֆորնիայի նահանգ, ուր մինչև իր կյանքի ավարտը մասնակցում է կուսակցական և համայնքային աշխատանքներին:

1968 թ. մահվան մահճում նրան է այցելում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը և հայ ազգի ազատամարտի անվեհեր զինվորին և քաջաբազուկ վրիժառուին արժանացնում ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ:

Հղումներ

1 Յովակիմեան Յ- նշվ. աշխ. էջ 270:
2 Նշվ. աշխ., էջ 350:
3 Կոմիտեի աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Ռ. Սահակյանի նշված աշխատության 344-363 էջերում:
4 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 271:
5 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 272:
6 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 367-368:
7 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 738:
8 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 366:
9 Նույն տեղում:
10 Նույն տեղում:
11 Նշվ. աշխ., էջ 369:
12 Նույն տեղում:
13 Նշվ. աշխ., էջ 373:
14 Նշվ. աշխ., էջ 374:
15 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 281:
16 Նույն տեղում:
17 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 374:
18 Նշվ. աշխ., էջ 375:
19 Նշվ. աշխ., էջ 375:
20 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 282:
21 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 378-379: Տե՛ս նաև Յովակիմեան Յ., նշվ աշխ., էջ 283, Մակուսց Ղ., Տրապիզոնի հայոց տեղահանութիւնը, էջ 91-93:
22 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 380:
23 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 385:
24 Նշվ. աշխ., էջ 387:
25 Նշվ աշխ., էջ 389:
26 Նշվ աշխ., էջ 398:
27 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 283-284: Տե՛ս նաև Թոռոլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 399-400:
28 Սեպուհ (Արշակ Ներսիսյան), ծնվել է 1872 թ. Արևմտյան Հայաստանի Բաբերդ գավառի Թոմնա գյուղում: Սովորել է Տրապիզոնի ազգային վարժարանում: Ազգային, կուսակցական և ռազմական նշանավոր գործիչ: Նախ հարել է Ս.Դ. Հնչակյան կուսակցությանը, 1894 թ.՝ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության անդամ: Հիմնականում գործել է Արևմտյան Հայաստանի գավառներում: Մասնակցել է 1894 թ. Սասունի ինքնապաշտպանությանը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է թուրքական ճակատում, եղել է հայկական 1-ին կամավորական գնդի 2-րդ վաշտի հրամանատար, մասնակցել է Կովկասյան ճակատում մղվող կռիվներին: Սեբաստացի Մուրադի հետ հիմնադրել է «Մեկ հայը, մեկ ոսկի» հիմնադրամը, որի նպատակն էր քրդերից փրկագնել հայ որբերին և նյութական օգնություն ցույց տալ Հայոց Ցեղասպանության հետևանքով գաղթական դարձած արևմտահայ ընտանիքներին: 1918 թ. սեպտեմբերին Մուրադի և խմբապետ Համազասպի (Սրվանձտյան) հետ կռվել է Բաքվի հայությանը թուրքական զորքերից պաշտպանելու համար: Եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության պառլամենտի անդամ, ճնշել է 1920 թ. Մայիսյան ապստամբությունը: 1920 թ. աշնանը կռվել է Կարսի ճակատում: Հայաստանի խորհրդայնացումից հետո մեկնել է արտասահման: Բնակվել է ԱՄՆ-ում, որտեղ էլ գրել և հրատարակել է երկու հատորից բաղկացած իր հայտնի հուշերը: Մահացել է 1940 թ.:
29 Սեբաստացի Մուրադ (Մուրադ Խրիմյան, Կյուրիկյան): Ծնվել է 1874 թ. Սեբաստիայի Կովտուն գյուղում Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ, հայոց ազատամարտի նշանավոր դեմքերից և աննկուն երախտավորներից է, հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպիչներից: Եղել է Անդրանիկի, Գևորգ Չաուշի, Մշեցի Սմբատի, Հրայր Դժոխքի, Սեպուհի մարտական ընկերն ու զինակիցը: Մասնակցել է հայ-թաթարական կռիվներին: Եղել է Նախիջևանի ինքնապաշտպանության ղեկավարը: Այստեղից Մուրադն իր 50 կտրիճներով անցել է Զանգեզուր, մասնակցել ինքնապաշտպանական կռիվներին: Տաթևի վանքի վանահայրը իր հուշերում Մուրադի մասին գրում է. «Սեբաստացի Մուրադը մի ցայտուն, բնորոշ տիպ էր եւ ժողովրդական հերոս՝ բառիս լայն առումով: Նա ապրում էր գիւղերում՝ պարզ, համեստ նիստ ու կացով, բարոյական բարձր զգացումներով տոգորուած…»: Իր զինակից Կայծակ Առաքելի հետ փրկել է շատերի, հատկապես որբ երեխաների կյանքը: 1918 թ. օգոստոսի 4-ին Սեբաստացի Մուրադը նահատակվեց Բաքվի թուրքերի դեմ կռվներում: Նրա մարմինն ամփոփվել է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանոցում:
30 Տե՛ս Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 399, նաև՝ Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 284-285:
31 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. էջ 285
32 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 403:
33 Մինախորեան Վ., 1915 թուականը. Արհաւիրքի օրեր, Վենետիկ, Ս. Ղազար, 1949, էջ 435:
34 ՀՅ Դաշնակցության Բյուրոյի պաշտոնաթերթ:
35 Թոռոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 471:
36 Ավազանի անունով՝ Կարապետ, ծնվել է 1892 թ. հունիսի 19-ին Յոզգատում, մահացել է 1960 թ. օգոստոսի 16-ին Բեյրութում, իրավաբան, նշանավոր ազգային-կուսակցական գործիչ, ՀՅԴ բյուրոյի անդամ: Մեծապես նպաստել է «Նեմեսիս» գործողության կազմակերպման ու գործադրության աշխատանքներին՝ հատկապես Բեռլինում Թալեաթի ահաբեկման գործին: Նրա անունը փորագրված է Երևանի Օղակաձև զբոսայգում 2023 թ. ապրիլի 25-ին բացված «Ազգային արժանապատվության ասպետներին» աղբյուր-հուշակոթողի չորրորդ հատվածում:
37 Թոռոլաքեան Մ., նշվ., աշխ, էջ 509: Ջիվանշիրի ահաբեկման, Թոռոլաքյանի ձերբակալության, հարցաքննությունների, դատավարության, վկաների ցուցմունքների, դատապաշտպանության և նրա արդարացման մանրամասն պատմությունը տե՛ս նրա «Օրերուս հետ» հուշագրության մեջ, էջ 471-538:

Ահնիձորէն՝ Մուսալեռ
Հրանդ Մաթեւոսեանի ծննդեան 90-ամեակի առիթով

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Երեւան, 1978, Սեպտ.

Սիրելի ընթերցող՝

Թէեւ Հրանդի մասին քանի մը առիթներով գրած եմ ու անդրադարձած նաեւ մեր ընկերական յարաբերութիւններուն, սակայն այն ինչ որ այսօր պիտի պատմեմ բոլորովին տարբեր է...:

Պէյրութէն նոր վերադարձած էի... հեռաձայնեցի.

- *Հրանդ ջան՝ «Թարմ բարեւներ» եմ բերել*...(ինք գիտէր որ խօսքը «Բագին»ի մասին է):

- *Ճիշդ ժամանակին զանգեցիր: Արի..., մինչեւ որ հասնես ձուածեղը պատրաստ կը լինի... սպասում եմ:*

Ի դէպ Հրանդը կանաչիով ձուածեղ շատ կը սիրէր (ես ալ), պայմանաւ որ թարխունի քանակն ու համեմունքները առատ եւ իր ճաշակով ըլլային: Այդ պատճառով ալ կը նախընտրէր իր ձեռքով պատրաստել... յատկապէս՝ երբ ընտանիքը ուղարկած կ'ըլլար հանգստանալու: Երբ ներս մտայ ուղիղ իր գրասենեակը առաջնորդեց...: Զարմանալիօրէն՝ հիւրասիրութիւնը պատրաստած էր իր գրասեղանին վրայ, որուն անկիւնը շարուած գիրքերուն կողքին (Թումանեան, Պուշկին եւ անծանօթ հատոր մը) կար օղիի շիշը ու կից դրուած էր կանաչի, պանիր, երշիկ եւ ճիշդ մէջտեղը՝ ձուածեղը... տապակով՝ որպէս զի շուտ չսառի: Երբ ակնարկեցի.

- *Ինչո՞ւ գրասենեակին մէջ...*

Ընդմիջեց.

- Նախ նստի դիմացս... այ այդպէս...: Եւ ապա իմացիր որ սա իմ տարածքն է... այստեղ հանգիստ եմ զգում... իմ աշխարհի, իմ միջավայրի մէջ եմ եւ ամենակարեւորը՝ այսօր ես զերծ եմ «յաւելեալ գուրգուրանքից»... այնպէս որ ես որոշեցի ընթրենք, Պուշկինի, Թումանեանի, Մնձուրու եւ միւսների ներկայութեան:

- *Բայց Հրանդ ջան դու ընդհանրապէս չես սիրում նման խորհրդանշական բաներ, այդ ինչպէ՞ս...*

- *Նոր չէ որ ես յայտնաբերել եմ Մնձուրուն, սակայն այսօր նրա գիրքը դրել եմ սեղանիս, Պուշկինի եւ Թումանեանի կողքին:*

- *Պուշկինն ու Թումանեանը կողք-կողքի հասկացանք, սակայն Մնձուրին...*

- *Մնձուրին ձեր Թումանեանն է, սակայն դուք նրան չէք ընկալում դրա համար էլ Թումանեանն էլ չէք հասկանում: Չէք կարողանում թափանցել «պարզութեան» խորքը ու դրա համար էլ, գրողի խորաթափանց անմիջականութիւնը շփոթում էք պարզամտութեան հետ: Մնձուրուն կարելի է նոյնիսկ «կենցաղագիր» համարել: Նա հմուտ ազգագրագէտի նման կարողանում է յիշել ու նկարագրել ամէն մի մանրուք: Իսկ դա իր մեծագոյն առաւելութիւնն է եւ ոչ թէ թերութիւնը ... ինչպէս դուք էք կարծում:*

Հրանդի ակնարկները թէեւ ուղղուած էին առհասարակ Սփիւռքին, սակայն ան ի նկատի ունէր նաեւ Պօղոս Մնապեանը, որ ըստ իրեն թիւր կարծիք ունէր ոչ միայն Թումանեանի ու Մնձուրիի մասին, այլեւ Իսահակեանի եւ կամ Կոստան Զարեանի նման մեծութիւններու... : Իրենք՝ Հրանդն ու Պօղոսը կապի մէջ էին... : Պօղոսը Հրանդի համար Սփիւռքի լաւագոյն Խմբագիրն ու խիզախ հրապարակախօսներէն մէկն էր, իսկ Պօղոսը Հրանդի գրականութիւնը շատ աւելի բարձր կը գնահատէր քան՝ Մնձուրիինը: Ի դէպ Հրանդը յաճախ կը յիշէր «Բագին»ի շրջանակէն ներս իր «Ահնիձոր» գիրքի քննարկումը, որու համար ոչ միայն երախտապարտ կը զգար «Բագին»ի տողոց, այլ նաեւ յատուկ համակրանք ունէր Պօղոսի հանդէպ: Անոնք ազգային քաղաքական եւ թէկուզ գրական գետնի վրայ ընդհանրութիւններ ունէին, սակայն անոնց հիմնական տարբերութիւնը հետեւեալն էր. Հրանդի համար գիւղացին մարդկօրէն չաղարտուած գլխագիր Մարդ էր, գիւղագրութիւնը կը համարէր գրականութեան բարձրագոյն դրսեւորում... առանց սակայն հրապարակաւ կամ պաշտօնապէս արտայայտուելու այդ մասին: Այս պատճառով ան ունէր բազմաթիւ ընդդիմադիրներ ու նոյնիսկ՝ թշնամիներ: Երբ խօսքը ծաւալեցաւ գիւղագրութեան մասին եւ ան անդրադարձաւ նաեւ Բակունցի եւ Համաստեղի ունեցած գրական-ոճային որոշ առնչութիւններուն, ես յիշեցի Եդուարդ Պօյաճեանը եւս իբրեւ գիւղագիր: Հրանդը պահ մը լռեց եւ ապա ըսաւ.

- «Թուղթ Ջաւակներուս»ը դեռեւս գիւղագրութիւն չէ: Դու ինձ խոստացել ես, սակայն չես բերել այլ գրքեր, որպէս զի ես կարողանամ ճանաչել Մուսալեռը, այնպէս ինչպէս Մնձուրու «Արմրանը», Բակունցի «Կէորեսը» եւ կամ Համասրեղի ... Ինչը...:

- «Փերչեներ»:

- Այո... Փերչեներ:

- Եւ կամ Մաթեւոսեանի «Ահնիձորը»...

- Թէկուզ...

- Հասկանում եմ, ես քեզ խոստացել եմ եւ կը բերեմ Պօյաճեանի գիրքերից, որոնց միջոցով դու կը ճանաչես Մուսալեռը: Սակայն եթէ յիշում ես, Մուսալեռցիների հետ անձամբ շփուելու համար, մի անգամ ես քեզ տարել էի նրանց մօտ, Մուսա Լեռան տօնին առիթով...

- Այո, դա գիշերով էր, գնացինք տեսանք ինչպէ՞ս են հարիսա եփում, խմում, երգում ու պարում: «Խաշլամա» կերանք, օղի խմեցինք ու վերադարձանք... նրանց հետ ուղղակի շփում չեղաւ...

- ... Լաւ... ուզո՞ւմ ես վաղը քեզ տանեմ իսկական Մուսալեռցիների մօտ, Լաւ առիթ կայ...

- Բայց... բանն ինչ է...

- Մանկապարտէզի ընկերս՝ Սեպուհ Սգայեանն է եկել Այնճարից. այդ առիթով հաւաքուելու ենք Քանաքեռի «Մուսալեռցիների թաղամասը»: Անցնող Շաբաթ յաջող որս ենք արել Մուրատի հետ: Վարուժանն ու մեր միւս ընկերներն էլ ներկայ կը լինեն: Լաւ կը լինի որ դու նախ շփուես մուսալեռցիների հետ եւ յետոյ ընթերցես Պօյաճեան...:

- Թէեւ հակառակը աւելի ճիշդ կը լինէր, բայց... գնանք:

Երբ իր տունէն դուրս ելայ, ճանապարհին, Կարապի լիճի մօտ հանդիպեցայ գեղանկարիչ՝ Արտաշէս Յունանեանին: Բացատրելէ ետք թէ ուրկէ՞ կու գամ եւ վաղը ո՞ւր պիտի երթանք Հրանդի հետ... զինքն ալ հրաւիրեցի: Արտաշէսի համաձայնութենէն ետք, բարձրացայ «Լենինի Բ. Հանրակացարան» ու զանգեցի «Մնայչի» երէց ուստրին՝ Հայկազունին եւ տեղեկացուցի որ երկու արժանաւոր հիւրեր եւս պիտի ունենանք: Հայկազը առաւել եւս ոգեւորուեցաւ... :

Իմ Հաւատարիմ ընթերցող.

Նախ պէտք է բացատրեմ թէ ու՞ր կերթանք: Երկու բազմանդամ գերդաստաններ կ'ապրէին հոն, գլխաւորութեամբ «Իշվրհուտի» (Պետրոս Պագալեանի) եւ «Մնայչի» (Խաչատուր Սուլահեանի): Ի դէպ, «Իշվրհուտ» մեր բարբառով կը նշանակէ, *Վիշապ, Հսկայ* կամ ուղղակի *Դիւցազն*: Ան տէրն էր իր անունին թէ արտաքին տեսքով եւ թէ իր հերոսի խառնուածքով: Իսկ ըստ Հարկալիկ Պապուկին «Մնայչ» կը նշանակէ *Աչքի ընկնող, Աչք մրնող*, վստահելի ու հաւատարիմ անձնաւորութիւն: «Մնայչը» իր հերթին տէրն էր իր անունին, որովհետեւ երկար տարիներ Մովսէս Տէր Գալուստեանի թիկնապահը եղած էր, որուն համար չափազանց հպարտ էր... : Ի դէպ իրենց բուն մականունը «Սիլահեան» էր. այսինքն՝ զէնքի վարժ մարդիկ:

Յաջորդ օրը երեկոյեան Հրանդի, Արտաշէսի եւ Սեպուհի հետ ժամանեցինք Քանաքեռ՝ Մուսալեռցիներու իւրայատուկ թաղամասը, ուր անսովոր եռուզեր մը կար: Մեզմէ առաջ հոն էին արդէն Վարուժան Խտրշեանն ու մեր միւս որսորդ ընկերները, Մարտիկ Պօյաճեանն ու Պօղոս Գասապեանը, որոնք, քանի մը երիտասարդներու հետ, զբաղուած էին երէներու պատրաստութեամբ: Սեղանները դասաւորուած էին **U** տառի նման: Տարբեր տեսակի ճաշերու բոյրերը վարակած էին օդը: Յարակից ծառերէն մէկուն վրայ ոչխար մը կախ՝ մորթահան կ'ըլլար: Տիկիններ եւ աղջիկներ տունէ տուն եւ սենեակէ սենեակ ել ու մուտ կ'ունենային...: Մեզ դիմաւորեցին Մնայչի եւ Իշվրհուտի երէց տղաքը՝ Հայկազն ու Պօղոսը: Բարի գալուստի ընթացիկ խօսքերէն ետք, Պօղոսը բացատրեց.

- Այս բակը շրջապատած բնակարանները, բոլորն ալ պատկանում են *յայտնի Հնչակեան՝ Իշվրհուտի եւ յայտնի դաշնակցական՝ Մրայչի զաւակներուն ու թոռներուն...*

Ըլլայ Յունանեանը թէ Մաթեւոսեանը գրեթէ միաժամանակ հարց տուին.

- Բոլորո՞ն էլ...

- Էդ ո՞նց կը լինի... հնչակ-դաշնակ միասին...

- Էդ ինչպէս...

- Իշվրհուտը ունի վեց տղայ եւ մի աղջիկ իսկ Մրայչը՝ հինգ տղայ եւ մի աղջիկ..

- Իսկ թոռնե՞րը...

- Թոռների հաշիւը չգիտեմ: Շատ են, հարկաւոր է հաշուել... ներքին ամուսնութիւններ էլ կան...

Կամաց կամաց սեղանները կը համալրուէին ուտեստներով իսկ աթոռները՝ հիւրերով: Ընթացքին, սկսան մօտենալ մեզի թէ երէցներէն եւ թէ ջահելներէն շատեր, որոնք կ'ուզէին ծանօթանալ հիւրերուն:

Առաջինը Հրանդը արտայայտուեցաւ.

-Արտաշէս ջան՝ նկատո՞ւմ ես, ոչ մի օտար անուն չկայ. Տես՝ Շանթ, Արամ, Սանդուխտ, Անահիտ, Մկրտիչ, Տիգրան, Լուսինէ.....եւ դեռեւս նոր ու չլսուած անուններ էլ կան... Փառքուհի, Զարման....

Արտաշէսը թէեւ իր հերթին զարմացած էր ու հիացած, սակայն փոխանակ Հրանդին պատասխանելու, խօսքը ուղղեց Սեպուհին.

- Իսկ դուք քանի՞ երեխայ էք տանը մէջ..

- Հինգ տղայ եւ աղջիկ մը:

- Անունները...

- Մեծ եղբօրս անունը մեծ հօրս անունը դրած են, Աւետիս. միւսները Հրայր, Անդրանիկ, Մուրատ եւ ամենափոքրը՝... Սեպուհ, որ ես եմ: Իսկ Քրոջս անունը Աշխէն:

- Լսում ես Հրանդ, բացի առաջնեկից, միւս բոլորինն էլ յեղափոխականների անուններ են:

Հրանդը դարձաւ ինծի եւ ըսաւ.

- Ձերոնք դեռ ոչինչ՝ երեք տղայ եւ մի աղջիկ, իսկ Արտաշէսը եւ ես պարտուած ենք... Ուրախ եմ որ մեզ բերեցիր այստեղ:

Արտաշէսը շարունակեց.

- Ես էլ եմ ուրախ Մովսէս ջան, բայց էդ ոնց է լինում որ բոլորն էլ միայն մի աղջիկ ունեն, Մուսալեռցիք այդքան շա՞տ տղամարդ են ծնում... թէ՞...:

- Ի հարկէ միշտ այդպէս չէ, սա պատահականութիւն է: Թէեւ Հերկելեանների մօտ տղամարդկանց ծնունդը միշտ ութանասուն տոկոսից աւել է եղել, բայց ուրիշներու մօտ՝ հակառակը... կարող է լինի....:

Երբ հիւրերն ու մեզմէ իւրաքանչիւրը իր տեղը գրաւած էր արդէն, Մտայչը ընկերակցութեամբ՝ Մուսա լեռան հերոսներէն՝ «Հարկալիկի» (Սարգիս Հերկելեան) եւ *«Մշսթրրի»* (որուն իսկական անունը վրիպած է յիշողութենէս), հէտ եկան եւ հանդիսաւոր ձեւով բազմեցան կեդրոնը, ճի՛շդ մեր դիմացը: Որովհետեւ այդ օր մեր վաւերական սեղանապետը՝ Սօս Սարգսեանը կը բացակայէր՝ Թամատայի պաշտօնը ստանձնած էր Հայկազը: Եւ որովհետեւ ան զբաղուած կը թուէր ըլլալ նաեւ կազմակերպչական աշխատանքներով, իրեն տեղակալ նշանակեց թամատայի համբաւ ձեռք բերած՝ Պետրոս Հերկելեանին, որուն քոյրը՝ Անուշը Իշվրհուտի հարսներէն մէկն էր: Այդ օր այլ Մուսալեռցիներ եւս հրաւիրուած էին... շատեր իրենց տիկիններով: Ինչպէս. Փայլակ, Խաչեր եւ Հովհաննէս Այնթապլեանները, Ջօհրապ եւ Փայլակ Շաննագեանները, Մովսէս եւ Յակոբ Հերկելեանները, Մովսէս Պալապանեանը, Առաքել եւ Արսէն Իսկէճեանները, Աբրահամ Ապաճեանը(Ապաճէն), Արշակ Քէոին (Լուրջեան), Յակոբ Խայոեանը, Սիրակ Մաթոսեանը, եւ այլն: Առաջին կենացը խմուեցաւ Իշվհուտի յիշատակին, որուն յիշատակը վառ կը մնար թէ իր եւ թէ Մտայչի ժառանգներուն մօտ: Կենացները կը ծաղկեցնէին առաւելաբար Իշվրհուտի եւ Մտայչի թոռներն ու թոռնուհիները, երգելով ազգային ու ժողովրդական երգեր ու արտասանելով բանաստեղծութիւններ, սկսեալ՝ Տէրեանէն ու Թումանեանէն հասնելով մինչեւ Վարուժանն ու Պօյաճեանը: Այս վերջինի քանի մը բանաստեղծութիւնները, յատկապէս՝ «Սօսին» ու «Գինով Ալեքսանը», (որոնք ծանօթ չէին մեր հիւրերուն), տարբեր խանդավառութիւն ստեղծեցին...:

Մթնոլորտը տօնական էր, տրամադրութիւնները՝ բարձր, իսկ ուղեղները՝ սանձազերծուած...: Երբ խօսելու հերթը հասաւ Յունանեանին, ըսաւ.

- Ես խօսելու շնորհք չունեմ, սակայն կարող եմ երգել...:

Ու սկսաւ. «Ախ Վասպուրական», «Պարզիր Աղբիւր», «Զարթիր Լաւ» ու երբ հնչեցուց «Զէյթունցիները», այս վերջինը ինքնաբերաբար վերածուեցաւ խմբերգի ու ազգային յեղափոխական երգերը շարունակուեցան ու աւելի թեժացուցին տրա-

Ձախից աջ՝ Վարուժան Վարդանեան, Հրանդ Մաթեւոսեան եւ Մովսէս Ծիրանի

մադրութիւնները...: Հայկազը ներկայացուց օրուայ հիւրերը, Այնճարի ղեկավարներէն՝ Սեպուհը ((առանց մոռնալու անոր հօրը՝ Հայրապետ Սգայեանին (Զաղիրինց Պըզտակը) ու հօրեղբորս՝ Խաչիկ Հերկելեանին (Գասատուրինց Խիչէյր), որոնք իր հօր՝ Մնայչի զինակից ընկերները եղած էին), գեղանակարիչ ու ժողովրդական երգիչ՝ Արտաշէս Յունանեանին, իսկ Հրանդի մասին եզրակացուց. *«Մեր Ժամանակակից արձակի փառքն է Հրանդ Մաթեւոսեանը...»:* Ու խօսքը փոխանցեց անոր.

Հրանդը ոտքի ելաւ... կամաց-կամաց կողմնակի խօսակցութիւններն ու նոյնիսկ փսփսուքները մարեցան ու սպասողական լռութիւն տիրեց...: Հակառակ իր սովորութեան, ան հայեացքը ուղղելէ ետք օրուայ Նահապետին ու վեթերան հերոսներուն, ըսաւ.

- Ես զգացուած եմ ոչ թէ նրա համար որ սեղանապետը չափազանցուած կարծիք ունի իմ եւ իմ գրականութեան մասին, այլ նրա համար որ գտնւում եմ ձեր մէջ: Քիչ առաջ Մովսէսը ասում էր, որ այս համերաշխութիւնը որ կայ այստեղ, հնչակեան եւ դաշնակցական երկու գերդասպանների միջեւ, գոյութիւն ունի նաեւ թէ Այնճարում եւ թէ մանաւանդ այստեղի «Մուսա Լեռան» Հայրենակցական Միութիւնում: Ես հաւատում եմ որ դուք տակաւին լեռներից չէք իջել: Այո՛, ինչ որ Հայկազունն էր ասում, երբ դուք ձուլուէք նոր Հայ կը լինէք...: Ես ցանկանում եմ որ մնաք այսպէս Մուսալեռցի...: Մեր օրերին գիւղացիք խուժում են քաղաքները: Արտաշէսի հետ, երկուսս էլ գիւղից ենք եկել Երեւան... մեր երեխաները արդէն իսկ քաղաքացիներ են: Սակայն աւելի ճիշդ կը լիներ եթէ Երեւանցիք ձուլուէին (թէկուզ միամիտ ու անտաշ) գիւղացիների մէջ...: Իմ համագիւղացիներին եմ տեսնում ձեր մէջ... Եթէ դուք այցելէք մեր գիւղերը, յատկապէս Լոռին եւ Զանգեզուրը, պիտի նշմարէք որ այնտեղ գրեթէ օտար անուններ չկան: Այո, հայու անունը շատ բան է ասում իր եւ իր ընտանիքի մասին: Մարդկօրէն մաքուր, հայօրէն մաքուր ու արմատապէս ամուր եւ արի ժողովուրդ:... Համայն գիւղացիների կենացը...:

Հրանդի խօսքին վրայ, Հայկազը ինքնաբուխ արտասանեց Անդրանիկ Ծառուկեանի (որուն հանդէպ յատուկ համակրանք ունէր Հրանդը) *«Թուղթ Առ Երեւանէն»* քանի մը հատուած ու աւարտեց զայն *«Հէյ Ջան Երեւան»*ով... արժանանալով բուռն ծափահարութիւններու, սուլոցներու ու գնահատանքի բացագանչութիւններու...:

Այնուհետեւ Պետրոս Հերկելեանը, իբրեւ թամատայի տեղակալ, դրուատելէ ետք մուսալեռցիներու համերաշխութիւնը, շնորհաւորեց հիւրերը, Մուսալեռան վեթերան հերոսները, նահապետները, ու շնորհակալական խօսք ուղղեց կազմակերպիչ տղոց, որսորդներուն ու մասնաւոր՝ գնահատանքի արժանացան նաեւ տիկիններն ու հարսները...:

Արդէն առաւօտեան փոքր ժամերու մէջ էինք:... Արտաշէսը բնազդաբար սկսաւ շարականներ երգել, Ինչպէս. «Լոյս-Լոյս», «Առաւօտ Լուսոյ», «Լոյս Զուարթ», եւայլն: Երբ օղիէն շիկացած գլուխներն իսկ կախարդուած՝... լուռ կ'ունկնդրէին... յանկարծ հեռուէն «Տաւլ-Զուրնայի» ձայն լսուեցաւ: Պահ մը ինքզինքս Այնճար կարծեցի, սակայն անդրադարձայ որ, ո՞ւր եմ եւ ի՞նչ տեղի կ'ունենայ...:

Այնուհետեւ իմ կենսասէր ընթերցող՝ կարիք կա՞յ նկարագրելու թէ ինչպէ՞ս ընդունուեցաւ «Տաւլ-Զուրնան» եւ ի՞նչ խանդաւառութեամբ շարունակուեցաւ խրախճանքը...:

Ամենայնդէպս, երբ արդէն ելեկտրական լամբերը սկսած էին կորսնցնել իրենց լոյսի ազդեցութիւնը, Պողոսի կարգադրութեամբ, Հրանդի, Արտաշէսի եւ Սեպուհի հետ լեցուեցանք Մուրատի «Շտապ օգնութեան» համար սահմանուած «Մինի Պասը» ու իջանք հրապարակ, ուր ազգային-յեղափոխական երգերով շարունակեցինք մեր ոգեւորութիւնը... Լենինի արձանի կողքին, որուն հետ այդ պահուն «հաշտուած» կը թուէինք ըլլալ, որովհետեւ «Արմենիա» պանդոկի դիմացը կանգնած ոստիկանները, թէեւ հեռուէն կը հետեւէին մեզ, սակայն ոչ միայն չէին խանգարեր, այլեւ կարծէք թէ պատրաստ էին մեզ պաշտպանելու «անախորժ միջամտողներէ»...

Մեկնելէ առաջ Հրանդը ըսաւ.

- Ինչպէս որ եթէ գեղջուկը ցանք չանի, քաղաքացին սովամահ կը լինի, այնպէս էլ, եթէ գիւղացին իր արեամբ չպարուրուստի քաղաքացուն, ազգի կորուստը շատ աւելի հեշտ ու արագ կը լինի...:

Յ.Գ.

Մնայչն ու Իշվրհուտը ուշ տարիքին երջանիկ մահ ունեցան, ոչ միայն անոր համար որ բազմաթիւ հայորդիներ պարգեւեցին ազգին, այլ մանաւանդ անոր համար որ հնարաւորութիւն ունեցան ապրելու եւ ստեղծագործելու **Հայրենի հողի վրայ** ու բախտը ունեցան հաւիտեանս ննջելու **Հայրենի հողի մէջ**...

Իմ բանիմաց ու իմաստուն ընթերցող՝

Այս բոլորէն ետք կրնաս ինծի բացատրել, թէ ի՞նչպէս եւ ինչո՞ւ այս մեծարանքի արժանի հերոսներու Մնացորդացը՝ բոլորն ալ մեկնեցան ԱՄՆ, ուր կ'ապրին եւ կը գործեն **Օտար հողի վրայ** եւ կը մահանան ու կը թաղուին **Օտար հողի մէջ**...

Հակոբ Կարապենց

(Ծննդյան 100-ամյակի առիթով)

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Աշխարհայացքով ու Հայրենիքի նկատմամբ նույն խոնարհումով ապրող մարդկանց չեն բաժանում անգամ օվկիանոսները, բայց միավորում են մարդկային ու ազգային նկարագրի բազմաթիվ նրբերանգներ: Հակոբ Կարապենցը նախկին տոռոնտոյաբնակ, 2007-ից՝ ուշիաբնակ Մարգար և Էլիզ Շարապխանյանների մտերիմներից էր, սպասված հյուրերից ու, ինչպես հաստատում են նրանց նամակագրության պահպանված էջերը, գաղտնապահ զրուցակիցն ու խորհրդատուն:

Այս հայ մարդկանց միավորում էին նաև հայ դպրոցի հոգսերը և հայեցի դաստիարակության խնդիրները:

1972-1976 թթ. Տորոնտոյում հրատարակված «Արձագանգ» ամսաթերթի (խմբագիրը Մարգար Շարապխանյան էր) համարներում հաճախադեպ է Հակոբ Կարապենցի անունը՝

ա) 1972 թ. 5-րդ համարում՝ «Տարի մը ետք» խոսքը Պարույր Սևակի հիշատակին նվիրված ձեռնարկի ժամանակ (բանախոսը Հակոբ Կարապենցն էր):

բ) 1973 թ. 2-րդ համարում (համարը նվիրված է Հակոբ Օշականին)՝ «Ինչպէս գրել Օշականի մասին» հոդվածը:

1974 թ. 1-2-րդ միացյալ համարում՝ «Հայապահպանում» հոդվածը:

գ) 1975 թ. 6-7-րդ միացյալ համարում՝ «Երբ պիտի ղօղանջեն մեսրոպեան զանգերը» հոդվածը:

դ) Նույն տարվա 8-րդ համարում հրատարակված է տիկին Էլիզ Շարապխանյանի «Նոր աշխարհի հին սերմնացանները» վերլուծական խոսքը՝ Հակոբ Կարապենցի նույնանուն ժողովածուի մասին և «Ջէֆրըսոն Ա.Մ.Ն.» պատմվածքը՝ նույն ժողովածուից:

ե) Նույն տարվա 9-րդ համարում տպագրված է Հակոբ Կարապենցի «Ողջոյնի խօսք»ը Մուշեղ Իշխանին, ում հոբելյանը նշելու էին Տորոնտոյում, և այդ ձեռնարկի բանախոս Կարապետ Փոլադյանին:

Շարապխանյանները բազմաթիվ առիթներով անդրադարձել են Հակոբ Կարապենցի գրական ժառանգությանը, ու տասնամյակների ընթացքում հսկայածավալ նյութ է հավաքվել՝ հոդվածներ, հուշագրություն, նամակներ և այլն, որոնք տիկին Էլիզ Շարապխանյանի հետ ծրագրել ենք հրատարակել առանձին գրքով:

Երևանում հրատարակվող «Մարգար Շարապխանեան. Երկեր» բազմահատոր գրքի առաջին հատորում ներկայացված են Հակոբ Կարապենցին նվիրված երեք հոդվածներ: Ընթերցողի ուշադրությանն եմ ներկայացնում Հակոբ Կարապենցի՝ վերը հիշատակված «Երբ պիտի ղօղանջեն մեսրոպեան զանգերը» հոդվածը, որի հետաքրքիր անդրադարձներից է Մարգար Շարապխանյանի «Յակոբ Կարապենց՝ նոր աշխարհի վերջին սերմնացանը կամ հայ դպրոցի խնկարկուն» խոհագրությունը («Հորիզոն»ի գրական հավելված (Մոնրեալ), 1995 թ. հունվար):

Հավելեմ՝ Տորոնտոյի «Հայ կեդրոն»ը եւ ՀՕՄ-ի ամենօրյա դպրոցը (հիմնադիր տնօրենը Մարգար Շարապխանյանն է) հանդիսավորապես բացվել են 1979 թ. հունիսի 2-ին և սեպտեմբերի 4-ին: Նշեմ՝ դպրոցի սաները և հատկապես՝ շրջանավարտները պարբերաբար գալիս են Հայրենիք ու այցելում Ուշի:

***

ա) ԵՐԲ ՊԻՏԻ ՂՕՂԱՆՋԵՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԶԱՆԳԵՐԸ

Խօսքը Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաների, Եւրոպայի եւ քիչ թէ շատ չափով աշխարհացրիւ հայկական բոլոր այլ գաղութների մասին է:

Շուտով հայասէր հայեր պիտի դառնանք, հայասէր ամերիկացիներ պիտի դառնանք, ֆրանսախօս հայեր եւ, հաւանաբար, հայկական ծագում ունեցող աշխարհաքաղաքացիներ: Անգլերէն պիտի մտածենք, ֆրանսերէն զգանք, իսպաներէն տրամաբանենք եւ դեռ այլազան լեզուներով արտայայտենք մեր մտքերն ու զգացումները: Պիտի դառնանք խայտաբղէտ հայեր, կէս հայեր, քառորդ հայեր, իսկ նեղ մնացած դէպքում՝ ուրանանք պիտի հայութիւնը:



Հակոբ Կարապենց

Պիտի դառնանք այլանդակ հայեր: Սակայն պիտի չյուսահատուենք: Յանուն հայապահպանման եկեղեցիներում անգլերէնով պիտի կարդանք քարոզները, կուսակցական ու հասարակական մեր ժողովները անգլերէնով պիտի վարենք, իսկ մեր մանուկներին Հայոց պատմութիւնը պիտի սովորեցնենք օտար լեզուով. չէ՞ որ կարեւորը ոգին է, ազգային ինքնութեան գիտակցութիւնը: Եւ այսպէս փաստարկողները թէ՛ հեղինակաւոր դէմքեր են եւ թէ՛ երեւելի տգէտներ, ահագին մի բանակ՝ այլասերման պռունկին կանգնած սփիւռքահայութեան մի շօշափելի զանգուածը:

Իսկ դեռ յաւակնութիւն ունենք Հայկական Դատը հետապնդելու:

Հայկական Դատը հիմնականում կարող են հետապնդել միայն հայերը: Հայասէր օտարը կարող է համակրել մեզ, նոյնիսկ՝ օգտակար լինել, սակայն քաղաքական պայքարի ամբողջ բեռը հայը պիտի կրի իր արեամբ, իր իմացական պատրաստութեամբ, իր նիւթական կարողութեամբ, զոհողութեամբ ու լեզուով: Յատկապէս՝ լեզուով, որովհետեւ առանց լեզուի անկատար է հայը: Լեզուն ցեղն է, նկարագիրը, ազգային իւրովի շաղախը, գաղափարական խմորն ու հայեցիութեան կորիզը: Այլապէս օտարախօս հայերի հայրենասիրութիւնը նման է ջերմանոցային պայմաններում պահուած այն տունկին, որը ձմեռուայ դեռ առաջին ցուրտը չտեսած՝ դալկահար է լինում: Այս ասելով չենք ուզում ժխտել այն իրողութիւնը, թէ անգլերէնով ու այլ լեզուներով կատարուած հայանպաստ աշխատասիրութիւնները մեծ նպաստ են Հայ Դատի հետապնդման քարոզչական նպատակներին: Սակայն խօսքը հայութիւնը հայ պահելու եւ ամբողջական Հայրենիքը վերակերտելու մասին է: Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են ամբողջական հայեր:

Հայկական դպրոցը միայն կարող է պատրաստել ամբողջական հայեր:

Մասնաւորելով խնդիրը, տարօրինակ, անգամ հակասական է այն երեւոյթը, որ ամերիկահայութիւնը, իր կեանքը այսքան լաւ կազմակերպելուց յետո, երբեք լրջօրէն չի մտածել իր դպրոցների մասին: Գրեթէ կէս միլիոնի հասնող ամերիկահայութիւնը հազիւ վեց ամէնօրեայ դպրոց ունի, երկուսը միայն միջնակարգ, այն էլ՝ հաստատուած վերջին տասնամեակին, մի քանի յամառ նուիրեալների անդուլ ջանքերի շնորհիւ:

Ինչո՞ւ այս քարացած անտարբերութիւնը, հաւաքական ինքնակործանման այս անտեղի թմբիրը:

Վաղը ազգովին չոր քարին պիտի նստենք: Առանց դպրոցի, վաղը անգլիախօս հայեր պիտի դառնանք: Պիտի դադրի հայ մամուլը: Հայերէն գիրք կարդացող չպիտի լինի: Չպիտի ունենանք հայ գրող ու բանաստեղծ, հայ խմբագիր ու հրապարակախօս: Մեր կուսակցութիւնները քաղաքական անջիղ ակումբների պիտի վերածուեն, իսկ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին առաւելապէս պիտի սպասարկի մեր հանրութեան ընկերային պէտքերին, երբ Մեսրոպեան շունչը շիջի խնկաբոյր կամարների տակ: Ի՞նչ էք կարծում, անգլիախօս կամ ֆրանսախօս քանի՞ հայ ընտանիք պիտի վերադառնայ Մուշ, Կարին կամ Վան, եթէ պայմանների բերումով ազատագրուի Արեւմտեան Հայաստանը...

Ինչո՞ւ հայկական դպրոցների ցանցով չպատել հայաշատ կենտրոնները Ամերիկայում: Ի՞նչն է պակաս: Նիւթական միջոցնե՞ր, ուսուցչական անձնակազմ, թէ՛ կազմակերպչական անճարակութիւն: Եւ ոչ մէկը: Պակասում է գիտակցութիւն ու հաւատք, երբ այս Հանրապետութիւնը ամէն պատեհութիւն ընձեռում է ազգային-համայնական անկախ զարգացման համար: Այդ ինչպէ՞ս է պատահել, որ ամերիկահայութիւնը իր բոլոր յարանուանութիւններով ի վիճակի է աւելի քան հարիւր եկեղեցիներ կառուցել՝ նուազագոյն 25 միլիոն դոլար արժողութեամբ, իսկ միեւնոյն ժամանակ զլացել է այդ գումարի մէկ տասներորդը յատկացնել հայկական դպրոցին: Ի՞նչ է, որոշել ենք եկեղեցական ծուխ դառնա՞լ: Այդ էր մի՞թէ մեր տարագիրների՝ Ամերիկա գալու նպատակը: Այդ ինչպէ՞ս եղաւ, որ կրօնական համայնքի վերածուեցինք:

Ի վերջոյ եւ ամէն բանից առաջ, կեանքը առաջադրանքի հարց է:

Ժամանակն է, որ մեր քաղաքական, ազգային եւ հոգեւոր մարմինները ՄԱԿ-ի եւ միջազգային այլ հաստատութիւնների դռները բախելու հետ զուգընթաց լրջօրէն մտածեն նաեւ սփիւռքահայ մեր առաջնահերթ նպատակների մասին: Լոկ դիմումնագրերով ազգը չի փրկուում: Ամէնից բոցաշունչ ճառերն անգամ դոյզն չափով չեն փոխում աշխարհա-քաղաքական իրականութիւնը: Ամէնամեայ ու տասնամեայ մեր Ապրիլեան պարբերական պոռթկումները նոյնիսկ չեն կարող լուծել կացութիւնը, եթէ ազգային գիտակցութեամբ հայախօս ու հայաշունչ սերունդներ չհասցնենք: Եթէ

Սփիւռքը տեւական երեւոյթ է, հապա ինչո՞ւ խօսել Արեւմտեան Հայաստանի ազատագրման մասին: Իսկ եթէ հայկական հողերի ամբողջականութիւնն է մեր նպատակը, ապա այդ դէպքում, գանք ու մեր հաւաքական ամբողջ ուժերով նուիրուենք այդ ազգային գոյատեւման: Մեր պատմութեան ընթացքում դպրոցն է եղել մեր ժողովուրդի ազատագրման ամէնից ամուր խարիսխը: Եթէ չլինէին հինգերորդ դարի մեր դպրոցները, ապա մեր ժողովուրդը իսպառ ուծացումի ենթարկուած կը լինէր: Առանց միջնադարեան մեր վանքերի ու համալսարանների, երբեք չպիտի ստեղծուէր Հայոց Վերածնունդը, չպիտի վառուէր յեղափոխութեան քուրան, չպիտի լինէր Հայաստան: Այսօր համեմատաբար կայուն ու առողջ են մեր այն գաղութները, որոնք օժտուած են հայկական դպրոցներով:

Դպրոցը մեզ կը փրկի անհատապէս ու հաւաքականապէս:

Դպրոցով սկսում է ժողովուրդի ազատագրութիւնը:

Ժամանակն է, որ ամերիկահայութիւնը, որը տասնամեակներ շարունակ հոգացել է Միջին ու Մերձաւոր Արեւելքի՝ մեր երբեմնի արմատախիլ համայնքների կրթական ու նիւթական պէտքերը, այսօր լրջօրէն անդրադառնայ իր կարիքներին՝ առաջին հերթին իր մտասեւեռումի թիրախ դարձնելով դպրոցը: Մի հաւաքականութիւն, որ ի վիճակի է տասնեակ շքեղ եկեղեցիներ, ակումբներ ու սրահներ կառուցել եւ վայելել բարգաւաճ կեանքի բոլոր բարիքները, բնականաբար, կարող է նաեւ եկեղեցիներին կից հիմնել իր կրթական օջախները՝ երաշխաւորելով իր ազգային յարատեւումը: Այլապէս շաբաթնօրեայ դասերը, մշակութային ու երիտասարդական միութիւնները, ամէնօրեայ ժողովները, պարահանդէսներն ու դաշտահանդէսները, լաւագոյն դէպքում, հայապահպանման յուսահատ տեղքայլի ապարդիւն մարզանքներ են:

Պէտք է սկսել հիմնականից:

Պէտք է ամերիկահայութեան օրակարգի առաջնահերթ կէտը դարձնել դպրոցը, կեանքի կոչել համազգային կրթական խորհուրդ, գոյացնել անհրաժեշտ հիմնադրամ եւ կառուցել արդի յարմարութիւններով օժտուած, ինչո՞ւ չէ, նաեւ նախանձելի դպրոցներ Ֆիլատելֆիայում, Նիւ Եորքում, Նիւ Ջըրզիում, Բոստոնում, հարեւան Մոնրէալում, Թորոնթոյում, Դիթրոյտում, Սան Ֆրանսիսկոյում, Լոս Անջելոսում եւ հայաշատ այլ կենտրոններում: Ամերիկայում կան մօտ 500 հայ մեծահարուստներ, որոնցից ոմանք յաճախ հսկայական գումարներ են նուիրում տեղական հաստատութիւններին: Նրանց պիտի մօտենալ: Իսկ եթէ բութ գտնուեցին, ապա ապաւինել ազգային, հասարակական ու բարեսիրական կազմակերպութիւններին: Ծայրայեղ դէպքում գործի անցնել անհատական նախաձեռնութեամբ, ինչպէս այդ ապացուցեց Գաբրիէլ Ինճէկեանը: Երբեմն մի քանի «խենթեր» աւելին են իրագործում, քան «խոհեմ»ների ամբողջ մի կաճառ:

Հանրայայտ փաստ է, որ ամերիկեան տարրական ու միջնակարգ դպրոցների կրթական ու դաստիարակչական մակարդակն այս օրերին զգալիօրէն

Մարգար և Էլիզ Շարապխանյաններ

ընկել է: Ծնողները գերադասում են մասնաւոր ու յարանուանական դպրոցները: Հայկական դպրոցը կարող է ոչ միայն հայեցի կրթութիւն ջամբել մատաղ սերնդին, այլ նաեւ գրաւական ըլլալ նրա բարոյական ու դաստիարակչական զարգացմանը: Ամէն ոք պիտի գերադասի հայկական մասնաւոր դպրոցը ամերիկեան հանրականից:

Բացի այդ, հայկական երկլեզուի դպրոցը հայերէնի հետ զուգընթաց անգլերէն սորվեցնելով հնարաւորութիւն պիտի տայ հայ ուսանողներին ու ուսանողուհիներին լաւագոյն նիշերով մտնել ամերիկեան համալսարան, ինչպէս այդ իրականութիւն է Լոս Անջելոսի «Ֆերահեան» ու «Մեսրոպեան» դպրոցների պարագային: Եթէ ոմանք ուսուցչական անձնակազմի խնդիր պիտի յարուցեն, ապա Մերձաւոր Արեւելքը տակաւին այնքան կենսունակ է, որ կարող է համապատասխան ուսուցիչներ հայթայթել, մինչեւ ամերիկահայ ուրոյն ուսուցիչների հասնելը:

Կարեւորը սկիզբն է, հիմքը, գործը:

Մէկ անգամ, երբ գործը ընթացքի մէջ դրուի, ապա օգնութեան պիտի հասնի թէ՛ կղերը եւ թէ՛ աշխարհականը, թէ՛ հարուստը եւ թէ՛ շարքային քաղաքացին: Գրեթէ ամէն ոք: Որոշ նահանգներում որոշ օրէնքներ ու վարչական պայմաններ կան, որոնք լրացուելով՝ հայկական դպրոցը կարող է նաեւ դրամական ու բարոյական օժանդակութիւն ստանալ տուեալ նահանգային իշխանութիւնից եւ նոյնիսկ Դաշնակցային Կենտրոնական կառավարութիւնից:

Կարեւորը նախաքայլն է:

Վաթսուն տարի ուշացել ենք եւ արեւմտեան երկրներում ապրող մեր ժողովուրդի մի հատուածը արդէն օտարախօս հայ է դարձել, մի տեսակ՝ սիրող հայ:

Յաւելեալ յապաղումը կարող է ողբերգական լինել: Վաղը կարող ենք հայասէր ամերիկացի դառնալ, հայասէր ֆրանսիացի կամ հայասէր արգենտինացի, իսկ մի վաթսուն տարի յետոյ, ո՞վ գիտէ, գուցէ հայ չմնանք:

բ) ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ՝ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ ԿԱՄ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՆԿԱՐԿՈՒՆ

Հայերէնին ու հայ գրականութեան հանդէպ իր կեցուածքին մասին Կարապենց, հետեւեալ տողերով կ՚արտայայտուէր իր «Ամփոփ ինքնակենսագրութեան» մէջ, զոր գրի առած էր 1986-ին. «Ինձ թուում է, թէ նոյն աշխատանքը կարող էի անել ամերիկեան գրականութեան մէջ եւ արդէն իսկ այդ ուղղութեան թրծում էի ինձ վերջին տարիներին, աշխատակցելով ամերիկեան թերթերին ու պարբերականներին: Սակայն մի պայծառ օր եկայ այն եզրակացութեան, թէ ամերիկեան գրականութիւնը բնաւ էլ ինձ պէտք չունի, ոչ էլ ես՝ ամերիկեան գրականութեան: Այսպիսով տալիք-ստանալիք չունենք: Ես կը մնամ հայ գրող՝ հարազատ իմ լեզուին, տարերքին եւ ազգային բարդոյթին»:

1975-ին, Կարապենց հրատարակեց իր լաւագոյն գրքերէն մէկը՝ «Նոր աշխարհի հին սերմնացանները» անունով, տասը հայատրոփ պատմուածքներու հատոր մը, Նոր աշխարհի՝ Ամերիկայի հայ տարագիր մարդոց կեանքը հարազատ կերպով պատկերացնող հատոր մը:

Ֆէֆլըրսոնը Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէկ անկիւնը թառած հայաբնակ քաղաք մըն է՝ հեղինակի երեւակայութեամբ կառուցուած: Կայ ու չկայ քաղաք մը: Ըստ Կարապենցին, «Ֆէֆլըրսոնն էլ մի հանգրուան է հայ տարագրութեան բազմաթիւ հանգրուաններից: Սակայն հանգրուանը խարիսխ չէ, տուն չէ, մնայուն չէ, Հայրենիք չէ: Եւ ահա այդտեղից էլ՝ սփիւռքահայութեան անվերջ դեգերումները, պանդխտութեան գունատ առաւօտն ու միաժամանակ գոյատեւելու աստուածային կիրքը:

Եւ վերջապէս, գրականից առաւել այս գիրքը սիրոյ երախտիք է, արեան ձայն ու հոգու տուրք: Այս մի համեստ ձօն է նրանց, ովքեր մերժեցին մահն ու պարտութիւնը եւ նրանց, ովքեր վերադարձի երազը սրտում՝ գրկեցին օտար հողը: Այդ բիրտ, բարի սերմնացանները» («Յառաջաբանի փոխարէն», էջ 5):

Այս հատորի էջ 187-ի վրայ կը սկսի «Գոնսուլ Առաքել» անունով սրտագրաւ պատմուածք մը համանուն հերոսի կեանքէն, Ֆէֆլըրսոնի մէջ դէպքեր պատկերացնող: Հոս, ինչպէս շատ ուրիշ տիպարներու բերնով, հեղինակն է, որ կը խօսի մեզի: Քաղաքին մէջ, անկիւնադարձային նկատուող ժողով կայ: Հասնող սերունդներուն համար՝ Հայ կեդրոն, եկեղեցի ու դպրոց պէտք է կառուցեն, տիրող՝ ոչ հայանպաստ կացութեան կուլ չերթալու, չձուլուելու համար: Միտքերը խառն են: Տրամաբանութիւնները՝ իրարու հակառակ: Գեղեցիկ գաղափարներ յղացողները՝ շատ, իսկ խրատ տուողները՝ առատ:

Գոնսուլ Առաքելը, երկար մտիկ ընելէ ետք, հետեւեալ ձեւով կը ներկացնէ իր մտքերը. «Յարգելի՛ ներկաներ, ինձ համար դժուար է պատկերացնել հայեցի դաստիարակութիւն եւ ազգային պահպանում առանց հայոց դպրոցի: ...Մեր պատմութեան եւ մեր գոյատեւման մէջ, մեր դարաւոր պատմութիւնը ապացուցեր է, որ երբ մոռցած ենք մեր լեզուն, մեր մշակոյթը, ձեռքէ տուած ենք նաեւ մեր ազգային ինքնութիւնը: ...Եթէ կ՚ուզենք անվթար պահել մեր ազգային ոգին, մեր առաջին գործը պիտի ըլլայ մեր մանուկներու հայեցի դաստիարակութիւնը, որը առանց ընտանիքի եւ դպրոցի կարելի չէ: Ես կ՚առաջարկեմ հանգանակութեան ձեռնարկել, որպէսզի կարենանք առնուազն տարիէ մը դպրոցի համեստ շէնք մը կառուցանել...»:

Իսկ հայոց դպրոցին չհաւատացող թուլամորթ ու անջիղ մարդոց կը խրատէ հետեւեալ ձեւով. «Եւ այժմ հարց կու տամ ձեզի: Ի վերջոյ ի՞նչ է ազգութիւնը, եթէ ոչ ինքնուրոյն լեզու, ինքնուրոյն մշակոյթ ունեցող ժողովուրդի մը հաւաքական ամբողջութիւնը՝ հոյակապ պալատ մը, որ կերտուած է դարերու ստեղծագործական ճիգերով: Այլ խօսքով՝ լեզուն ամբողջական ազգն է: Առանց լեզուի ազգը կը դառնայ անգոյն հաւաքականութիւն մը»:

Իսկ աւելի ետք, անոգի ու անկորով մարդոց կը թելադրէ ու կը փութայ զանոնք համոզել, հետեւեալ

սրտագրաւ բառերով. «Հիմնականն ու տեւականը հայ լեզուն է, հայ գրականութիւնն է: Կարճ՝ հայ մշակոյթն է՝ իր բոլոր մարզերով, եւ լեզուն է, որ սերունդէ սերունդ, հայ ոգին փոխանցելու միակ աստուածային բանալին կը հանդիսանայ: ... «Երեւակայեցէք, որ դժբախտաբար, ասկէ հինգ կամ տաս տարի յետոյ մենք պարտաւորուած պիտի ըլլանք մեր զմայլելի հայոց պատմութիւնն ու մշակոյթը մեր զաւակներուն մատուցել անգլերէնով կամ ֆրանսերէնով: ...Որպէսզի մեր ապրած օրերուն այս դառն իրականութեան ականատես չըլլանք, հայ լեզուի ուսուցումը պիտի ըլլայ մեր նշանաբանը եւ մեր դրօշակը: Հայ դպրոց՝ եկեղեցիի կողքին: Անհրաժեշտ պարագային, նոյնիսկ առանց եկեղեցիի: Հայոց լեզուն տունէն ներս եւ մեր հաւաքական կեանքին մէջ»:

Ապա, խորհրդաւոր լռութեան մէջ, ան կը շարունակէ իր խօսքը փոխանցել ներկայ ժողովականներուն. «Եւ ուրիշ առթիւ, կը լսուէր մի այլ ահազանգ. «Երբ պիտի համոզուին, թէ Աստուծոյ առջեւ ամէնէն թանկ զարդարանքը իրենց զաւակները ոսկեղէն մարդ ընելն է, զանոնք կրթել եւ լուսաւորելն է Աւետարանի ոգիով, ազգութեան սիրով, լեզուի ուսմամբ»: Այսպէս կը գրէր մօտ ինսուն տարի առաջ ներհուն եկեղեցականը՝ Խրիմեան Հայրիկի արժանաւոր աշակերտն ու գործակիցը՝ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, այն ատեն, երբ հայրենի հողին վրայ հայ դպրոցը առաջին գծի վրայ էր: Այսօր աւելի քան անհրաժեշտութիւն է հայ լեզուի պահանջը: Այս փաստին ուրացումը, նոյնօրինակ ցեղասպանութեան մը մոայլ պատկերը կը բանայ մեր առջեւ...»:

Ապա, Գոնսուլ Առաքել, իր սրտի խօսքը շարունակելով, կ՚ըսէ ժողովականներուն. «Այլեւս բաւական է որքան խօսեցանք ու ճառեցինք: Այժմ հերթը եկած է գործին: Որեւէ յապաղում կրնայ ճակատագրական ըլլալ»:

Ու այս կէտին, Գոնսուլ Առաքելը, հպարտութեամբ՝ դպրոցաշինութեան համար, ներկաներու ապշահար ու ապա խանդավառ դիմագծերուն առջեւ, կը յայտարարէ, թէ ինք իր տարիներու խնայողութիւնները կը տրամադրէ երեխաներու հայեցի դաստիարակութեան...:

Կարապետց կը շարունակէ, այս յայտարարութենէն ետք, «Ժողովասրահում կարծէք մի խուրձ շանթեր էին նետել: Ընդհանուր քարացում էր տիրել: Գոնսուլ Առաքելի վերջին խօսքերը կախուել էին միջոցում: Ներկաները շշմահար՝ դեռ չէին կարողանում կռահել իմաստը: Մի ակնթարթ յետոյ սակայն, ալեկոծ ծովի պէս ծփաց սրահը կեցցէների ու բացագանչութիւնների փոթորիկի տակ: Ոմանք արտասուում էին: Այդ գիշեր, Գոնսուլ Առաքելի յաղթանակի գիշերն էր, իր տարիների երազի իրականացման նախերգանքը: Հին ցիլինդրը մինչեւ ականջների կէսը խրած, հպարտ ու երջանիկ՝ նա տուն գնաց»:

Պատմուածքը կը վերջանայ հետեւեալ յուսադրիչ եւ լուսատու խօսքերով. «Հոկտեմբերի կէսերին, Ջէֆրըսոնի ծառախիտ մի փողոցի անկիւնում, դրուեց հայկական դպրոցի առաջին աղիւսը»:

Այսպէս էր Կարապետց ու այսպէս ալ մնաց, մինչեւ իր բնական կեանքի վերջին օրերը... Հայ դպրոցի խնկարկու:

***

Կարապետց այս պատմուածքը չգրած, քանի մը անգամ «Համազգային»ի միջոցաւ Գանատա հրաւիրուեցաւ, 1970-ական թուականներէն սկսեալ: Թորոնթոյի մէջ հրատարակուած, ՀՅԴ Երիտասարդաց միութեան «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի «Արձագանգ» ամսագրին մէջ շահեկան յօդուածներ եւ խրախուսիչ ուղերձներ գրեց՝ բոլորն ալ ի նպաստ հայ ժողովուրդի գոյատեւման:

Ան իր վերջին այցելութեան օրերուն (17-24 յունիս, 1994), այսինքն՝ իր վաղահաս մահէն երեքուկէս ամիս առաջ, հպարտութեամբ ըսաւ մեզի՝ իր գործերուն նուիրուած ձեռնարկին ներկաներուս, թէ ինք մօտէն հետեւած է ու անուղղակի կերպով ալ մասնակից դարձած Թորոնթոյի մէջ ազգային կառոյցներ հիմնելու նախնական աշխատանքներուն:

Իր առաջին այցելութեան (1971), մեր մտերմիկ խօսակցութեանց ընթացքին, խօսեցանք նաեւ հայ դպրոցի ու նոր «Հայ կեդրոն»ի ապագայ ծրագիրներու մասին, որոնք այդ տարիներուն՝ ծրագրային սահմաններէ անդին չէին անցներ: Աւելի ետք, ան, մեր առաջին ժողովներու արդիւնքներուն քաջածանօթ եղաւ ու իր յաջորդական այցելութիւններով ականատես դարձաւ մեր գաղութի ցուցաբերած ոգեւորութեան ու, երբ Ուաշինկթըն վերադարձաւ, ուր այդ տարիներուն կը բնակէր, Թորոնթոյի ազգային եռացող կաթսայէն ազդուած՝ գրեց իր «Գոնսուլ Առաքել» պատմուածքը:

«Ես Թորոնթոյի տղաներին շատ բան եմ պարտում: Ես Թորոնթոն իմ տունն եմ համարում»,- ըսաւ ան իր ճակատագրական վերջին այցելութեան առթիւ:

Ան, առհասարակ, հպարտ եւ ուրախ կը զգար ինքզինք, Մոնթրէալի ու Թորոնթոյի հայադրոշմ գաղութներուն մէջ, որովհետեւ այս զոյգ քաղաքներուն մէջ ալ «Գոնսուլ Առաքել»ներու կը հանդիպէր, որոնք «գործին» կը հաւատային, արթուն էին ու միակամ: Այդ տարիներուն, նահանջողներ կամ տեղքայլ ընողներ չկային...

Ու հիմա՝ տարիներ ետք, ակամայ կը մտածեմ սիրելի Կարապետցի մահուան տխուր առիթով. «Ինչ լաւ եղաւ, որ ատենին իր խօսքն ենք մտիկ ըրեր ու մեր գոյապայքարի գլխաւոր բերդերն ենք շիներ՝ հայ դպրոց, հայ կեդրոն ու հայ եկեղեցի:

Արդարեւ, ինչ լաւ է գրականութիւնը, երբ մեր տարագիր կեանքը կը պատկերէ այնպէս, ինչպէս որ է, իմաստ կու տայ մեր գոյութեան ու մեզ անպէտ բոյսերու չի վերածեր...

Ինչ լաւ բան է «իրաւ» գրականութիւնը: ■

Վտանգը

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Աւելի քան 25 տարի առաջ Վահէ Օշական սոյն վերնագրով յօդուած մը կը ստորագրէր, սկսելով հետեւեալ տողերով. «Կտրատումի, երկփեղկումի չարագուշակ հովեր կը փչեն մեր ազգին վրայէն: Խորհրդաւոր ախտ մը կը կոտորակէ մեր ուժերը եւ կը սպառնայ ջլատել Սփիւռքն ու Հայաստանը»: Յօդուածը կը շարունակուէր օրուան իրավիճակի վերլուծումով ու կ՚աւարտէր կարգ մը բացասական հաստատումներով՝ դատապարտելով Դաշնակցութեան հայաստանակեդրոն դարձած ու, ենթադրաբար, Սփիւռքը անհրաժեշտ հոգածութենէ զրկած ըլլալը:

Օրին բնականաբար չէի կրնար համաձայն ըլլալ այդ հաստատումներուն, սակայն եթէ այսօր իր նոյն այդ յօդուածէն կը մեկնիմ այս յօդուածս գրելու համար, առաջին հերթին ճիշտ այդ առաջին տողերուն անհերքելի իրականութիւն ըլլալուն համար եւ երկրորդ հերթին ճիշտ հակառակին սոսկումով, որ յանկարծ դադրի՞նք հայաստանակեդրոն ըլլալէ՝ մեր ներկայ ողբալի իրավիճակին պատճառաւ:

Ահա վտանգը, որ կը սպառնայ մեզի, կը սպառնայ հայութեան:

Գուցէ հայոց պատմութեան հազարամեակներուն ընթացքին այսքան վտանգաւոր կացութեան մէջ չենք գտնուած, եթէ նկատի չունենանք Մեծ եղեռնը: Կը թուի թէ հասած ենք նոր եղեռնի մը նախադռան: Իսկ այս պարագային ոչ թէ կուսակցութեան մը կողմէ Սփիւռքի նկատմամբ կարծեցեալ թերացումի մը նշումով, ինչպէս Օշական կ՚ընէր քառորդ դար առաջ, այլ Հայաստանի իշխանութեան իսկ կողմէ սեփական պետութեան քանդումով: Տասը դար ետք... անգամ մը եւս կը ծախուի Անին:

Այս վտանգ է ամբողջ ազգին համար՝ ի Հայաստան թէ ի սփիւռս աշխարհի:

Կը նսեմացուին ազգային արժէքները: Կը կազմալուծուին ազգային հաստատութիւնները: Կը հարուածուին ազգային կազմակերպութիւնները: Կը փորձուի խորտակել հայութեան ինքնութեան մնայուն ողնասիւնը հանդիսացող Հայաստանեայց եկեղեցին: Կը դատապարտուի Հայ դատի հետապնդումը: ... ...

Ո՞ւր կը տանին այս բոլորը, եթէ ոչ հայկական պետութեան անհետացման:

Իսկ Սփիւռքի հայութի՞ւնը:

Սփիւռքի հայութիւնը, որ ի սկզբանէ Հայաստանո՛վ է ապրեր, Հայաստանի տեսլականո՛վ վերապրէր ու առանց վիատելու փայփայեր է յոյսը Հայաստան վերադառնալու, որքան ալ անիրականալի թուէր այդ, ինչպէ՞ս պիտի վարուի ան, ինչպէ՞ս պիտի հակադարձէ այս ողբերգական իրականութեան:

Ինչպէ՞ս պիտի դիմադրէ Հայրենիքէն օտարումին,- ա՛լ չեմ ուզեր լսել Հայաստանի մասին, ա՛լ ոչ մէկ լումայ Հայաստանի համար,- ինչպէ՞ս պիտի համոզէ իր զաւակները, որ շարունակեն հայ մնալ, շարունակեն տէ՛ր մնալ հայ լեզուին, մշակոյթին ու պատմութեան, շարունակեն պայքարիլ հայոց իրաւունքներու վերականգման համար: Ի՞նչպէս: Ի՞նչպէս:

Խորհրդային բռնատիրութեան ամբողջ 70 տարիներուն Սփիւռքի տարագիր հայութիւնը կրցաւ ինքզինք գտնել ու կազմակերպուիլ, կերտել դպրոց, եկեղեցի թէ ակումբ, ստեղծել մամուլ ու գրականութիւն, եւ մշակոյթ՝ միշտ շնորհիւ Մեծ տեսլականին դաւանող, զայն պաշտպանող ու սերունդէ սերունդ աւանդող մեր ազգային ղեկավարութեան: Ի գին մեծ զոհողութիւններու, ամե՛ն տեսակ զոհաբերութեան: Միշտ հիւսելով նորանոր բոյներ, բայց չմոռնալով ետեւը ձգած, իր հիւսած, բայց մանաւանդ իր նախահայրերո՛ւ բոյները: Շնորհիւ այդ անմոռ Տեսլականին:

Հիմա ճիշտ այդ Տեսլականի ջախջախո՛ւմն է, որ կը հետապնդուի թշնամիին կողմէ՝ ափսո՛ս, կը հետապնդուի հայանուն մարդոց իսկ ձեռքով:

Իսկ Տեսլականը, ի՞նչ բանաձեւումով ալ, որ զայն ներկայացնենք՝ «Ազատ, անկախ ու միացեալ Հայաստան», «Ամբողջական Հայաստան, ամբողջական հայութեամբ», թէ պարզապէս «Հայաստան, երկիր դրախտավայր», միեւնոյն է, մեզ ոտքի կը պահէր ու պիտի պահէ եթէ յոյսը չկորսուի: Եթէ յոյսը չըլլայ ի սպառ կորսուողը: Վտանգը ոչ թէ հողաշերտերու կորուստն է, ոչ թէ նոյնիսկ այդքան մեծաթիւ մատղաշ հայորդիներու կեանքի կորուստն է՝ վասն ոչինչի, ոչ իսկ մեր բազմադարեայ մշակութային կոթողներու կորուստն է, այլ կորուստը յոյսին: ՅՈՅՍԻՆ:

Մենք չենք կրնար չըլլալ հայաստանակեդրոն: Ի վերջոյ ի՞նչ Սփիւռք առանց Հայրենիքի: Որո՛ւ Սփիւռքը: Այո՛, նոյնիսկ անկախ Հայաստանի բացակայութեան, Տեսլականը կրնայ դեռ երկար ժամանակ վառ պահել յոյսը, ինչպէս եղեր է դարերէ ի վեր:

Այս՝ թշնամին լաւ հասկցած է: Բոլո՛ր թշնամիները լաւ են հասկցած:

Ահա՛ վտանգը: ՎՏԱ՛ՆԳԸ:

Ահա նաեւ մարտահրաւէրը՝ պահպանելու յոյսը,- մարտահրաւէրը մեր կուսակցութեան, հայկական բոլոր կուսակցութիւններուն համար, բոլոր կազմակերպութիւններուն համար: Համայն հայութեան համար:

Ամեն մէկուս, քեզի ու ինծի համար: ■

ԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՍ ԿՍՊԱՍԵՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ

Անազատության մեջ գտնվող ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ, ազատամարտիկ Իգոր Սարգսյանի նամակը՝ Երևան քրեակատարողական հիմնարկից

Սիրելի հայեր,
ցանկանում էի երկար, հանգամանալից, փաստարկված ներկայացնել օրվա իշխանությունների «Սրբազան պայքարի» ակտիվիստների, Բագրատ և Միքայել Սրբազանների և առհասարակ ազգային ուժերի ներկայացուցիչների, նվիրյալ հայերի ձերբակալությունները, սակայն որոշեցի գրել հակիրճ երկարը թողնելով ուրիշ առիթների:

Ձերբակալությունների նպատակն է թշնամու նոր կամ ընթացիկ զիջումներին ընդառաջ ճնշել հայի պայքարի ոգին, ազատ ապրելու իրավունքը, անկախ հայրենիք ունենալու բաղձանքը՝ պղծելու մեր հավատքի տաճարը՝ Սուրբ Էջմիածինը:

Քրեական գործն ամբողջովին սուտ է, կեղծ, անօրինական, անհիմն, սարքած:

Պետական իշխանության համակարգը թշնամիների թելադրանքով և ծրագրով ծանր մեղադրանքներ (ահաբեկչություն, իշխանության զավթում) է կիրառում, ձերբակալում «Սրբազան պայքար» շարժման մասնակիցներին, ազգային քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, նվիրյալ հայերին:

Ես կսպասեմ արդարադատությանը, սրանով մեզ չեն վախեցնի:

Հայեր ջան, այս բոնաճնշումներով մեզ չեն կարող ստիպել դադարեցնել հանուն մեր երկրի, մեր սերունդների, մեր հավատքի, մեր իրավունքների պայքարը:

Կեղծ խաղաղության անվան տակ թշնամին փորձում է խլել մեր երկիրը ամբողջությամբ, ամեն օր, իսկ մեր տգետներն ու դավաճանները հավատում և համագործակցում են նրանց հետ:

Մենք պետք է պայքարենք առանց հուսահատվելու, վճռականորեն ընթանանք մեր ճշմարտության ճանապարհներով: ԱՍՏԾՈՒՆ մեր հոգիներում ապրեցնելով, Նրա առաջնորդությամբ, հավատքով, զենքը, բահը, գրիչը մեր ձեռքերում՝ պաշտպանենք մեր հայրենիքը, ապրելու մեր իրավունքը քրտնաջան աշխատելով և ստեղծագործելով:

Սիրելի հայեր, վտանգը շատ մեծ է: Թշնամին ատամները սրած հոշոտում է մեր սահմանները: Պետք է լինենք զգոն, համախմբված, պայքարենք թե՛ բանտերից, թե՛ ազատության մեջ, թե՛ սահմանի վրա պաշտպանելով հայրենիքը, թե՛ փողոցներում, թե՛ խորհրդարանում: Պայքարը պետք է լինի ամենուր:

Իմ սիրելի դաշնակցական ընտանիք, «Սրբազան պայքարի» ընկերներ, մենք ստեղծման օրվանից պայքարել ենք հայկական պետությունը վերականգնելու փափագով և մեծ կորուստների գնով, զոհողություններով ու զոհաբերություններով հասել ենք նպատակին, այնուհետև պայքարել ենք հայրենիքի մասունքները հետ բերելու համար: Այդ ճանապարհին շատ հզոր, նվիրյալ ընկերներ ենք կորցրել: Բանտերում ու զնդաններում տասնյակ տարիներով տառապել են մեր ընկերները: Այսօր էլ Բաքվի բանտերում են գտնվում մեր հայրենակիցները: Իմ հայաստանյան բանտում գտնվելը չնչին զոհողություն է տասնյակ հազարավոր զոհվածների և վիրավորների կյանքի համեմատ:

Մի մտածեք մեր մասին, հատկապես ասեմ, որ այստեղ էլ լավ հայեր կան՝ թե՛ բանտապահների, թե՛ կալանավորների մեջ:

Մենք անկեղծ զինվոր ենք…

Փառքը ԱՍՏԾՈՒՆ, կյանք Նրա ժառանգներին՝ հայերին և հավերժություն Նրա ժառանգությանը՝ Հայաստանին:

ՀՅԴ համահայկական 12-րդ երիտասարդական-ուսանողական բանակումի մասնակիցները հյուր եղան Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. 20. 07. 2025 թ.

ԴՐՕՇԱԿ